

ԱՄՓՈՓԱԳԻՐ

S.1 Ներածություն և Նախապատմություն

Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթգծի Ղեկավար Մարմինը (The California High-Speed Rail Authority) (այսուհետև Ղեկավար Մարմին), 1996թ-ին ձևավորված պետական կառավարման խորհուրդ է, որը պատասխանատու է Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթգծի (HSR) համակարգի պլանավորման, նախագծման, կառուցման և գործարկման համար: Նրա խնդիրն է զարգացնելու այնպիսի HSR համակարգ, որը կհամագործակցի նահանգի գործող տրանսպորտային ցանցի հետ, որը ներառում է միջքաղաքային երկաթուղային և ավտոբուսային գծեր, շրջանային երկաթուղային գծեր, քաղաքային երկաթուղիներ և ավտոբուսային տարանցիկ գծեր, մայրուղիներ և օդանավակայաններ:

Արագընթաց երկաթգծի համակարգ

Երկաթգծի համակարգ, որը ներառում է արագընթաց երկաթուղի, կամուրջներ, գետնուղիներ, կայարաններ, էլեկտրաէներգետիկ ենթակառուցվածքներ և սպասարկման կայաններ:

Կալիֆորնիայի HSR Համակարգը պետք է ապահովի միջքաղաքային, արագընթաց ծառայություն ավելի քան 800 մղոն երկարությամբ երկաթգծերի երկայնքով ողջ Կալիֆորնիա նահանգում՝ կապակցելով Sacramento-ի, San Francisco Bay Area-ի, Central Valley-ի, Los Angeles-ի, InLand Empire-ի, Orange County-ի և San Diego-ի մեծ բնակչություն ունեցող կենտրոնները: ՆկարՆկար S-1-ը ցույց է տալիս առաջարկվող կապակցման համակարգը ամբողջ նահանգով: Այն օգտագործելու է գերժամանակակից, էլեկտրական, արագընթաց, պողպատե անիվ պողպատե երկաթուղու վրա տեխնոլոգիա՝ ներառելով ժամանակակից անվտանգության, ահագանգման և գնացքների կառավարման ավտոմատացված համակարգեր, որտեղ գնացքները սահմանված երթուղով մինչև 220 մղոն/ժամում արագությամբ ընթանալու հզորություն կունենան:

Ղեկավարությունը ծրագրում է իրականացնել Կալիֆորնիայի HSR Համակարգը երկու փուլով: 1-ին Փուլը¹ կմիացնի Սան Ֆրանցիսկոն Լոս Անջելեսին Pacheco Pass-ի և Central Valley-ի միջոցով: HSR համակարգը կհամապատասխանի Առաջարկ 1A –ի (Proposition 1A) պահանջներին, այդ թվում ապահովելով առանց կանգառի ծառայություն Սան Ֆրանցիսկոյի և Լոս Անջելեսի միջև՝ որը նախատեսված է հասցնել մինչև 2 ժամ 40 րոպե տևողության: Փուլ 2-ով նախատեսվում է միացնել Central Valley-ն նահանգի մայրաքաղաք Sacramento-ին, և ընդլայնել համակարգը Լոս Անջելեսից մինչև Սան Դիեգո:

Մոտավորապես 31- ից 38 մղոն Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածը կարևորագույն կապակցող օղակ է հանդիսանում Կալիֆորնիայի HSR Համակարգի գործարկման 1-ին Փուլում: Նախագծի տվյալ հատվածի ընդգրկման մակերեսը տարածվում է Palmdale քաղաքից Spruce Court-ի հարևանությամբ դեպի հյուսիսում գտնվող Sierra Highway-ից արևմուտք մինչև Burbank-ը հարավում: Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածը ներառում է կայարան Burbank քաղաքում, Hollywood Burbank Օդանավակայանի մոտ (նախկինում Bob Hope Օդանավակայան): Շրջակա Միջավայրի Ազդեցության Հաշվետվության/Շրջակա Միջավայրի Ազդեցության Հայտարարության (Draft Environmental Impact Report/Environmental Impact Statement (EIR/EIS)) փաստաթղթերի նախագծերում գնահատված են այն կառույցները, որոնք անհրաժեշտ են Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի կառուցման և գործարկման համար, ինչպես նաև շինարարության մակերեսը: Palmdale Կայարանը, առաջարկվող Սպասարկման Կենտրոնը, և Palmdale-ից մինչև Spruce Court տանող միացման գիծը, ամբողջությամբ գնահատվել են որպես Bakersfield-ից մինչև Palmdale Նախագծի հատվածի մաս: Ղեկավար Մարմնի Խորհուրդը հաստատել է Bakersfield-ից մինչև Palmdale Նախագծի հատվածը,

¹ 1-ին Փուլը կկառուցվի աստիճանաբար՝ ելնելով ֆինանսավորման հասանելիությունից:

ներառյալ Palmdale Կայարանը, 2021թ-ի օգոստոսին. այդ տարրերը ընդգրկված են սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում համատեքստի, հղման և լրացուցիչ տեղեկատվության տրամադրման համար: ՆկարՆկար S-2-ը ցույց է տալիս Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի ընդհանուր միջանցքը, որը ենթարկվել է վերլուծության սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում:

Սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում գնահատված Կառուցման Տարբերակները ներառում են Բարելավված SR14, SR14A, E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքները: Առաջարկվող նախագծի Նախընտրելի Տարբերակը SR14A Կառուցման Այլընտրանք-ն է, որը ներառում է Burbank-ի Օդանավակայանը (հղում Գլուխ 8-ին, Նախընտրելի Տարբերակ և Կայարանի տեղակայումներ): Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի Կառուցման Տարբերակներից յուրաքանչյուրը պահանջում են մեկ հորանցքի և մեկ միջանկյալ պատուհանի կառուցում: Սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում գնահատված են հորանցքի և միջանկյալ պատուհանի կամընտրովի տեղակայման վայրերը յուրաքանչյուր Կառուցման Տարբերակի համար: Հորանցքի և միջանկյալ պատուհանի վերջնական տեղակայման վայրերը կընտրվեն սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում գնահատված տարբերակներից, Նախընտրելի Տարբերակի (Preferred Alternative) վերջնական նախագծման ընթացքում՝ այն բանից հետո երբ Ղեկավար Մարմնի կողմից կթողարկվեն Որոշման Արձանագրությունը (Record of Decision (ROD)) և Որոշման վերաբերյալ Ծանուցումը (Notice of Determination (NOD)):

Հորանցքներ

Հորանցքը՝ դա մուտքի հորան է, որը հեշտացնում է հորատած գետնուղիների կառուցումը: Հորանցքը կարող է ծառայել գետնուղի հորատելու սարքավորման մուտքի կամ ելքի կետ: Այն կարող է հնարավոր դարձնել մի քանի հորատման սարքավորումների օգտագործումը՝ շինարարության ժամանակը կրճատելու նպատակով:

Միջանկյալ պատուհան


Միջանկյալ պատուհանը՝ դա ուղղահայաց հորան է, որը տանում է դեպի ստորգետնյա շինարարական հրապարակ: Այն ներառում է վերելակ և գետնափոր կռունկներ, որպեսզի շինարարության ընթացքում հնարավոր լինի ապահովել մուտք դեպի շինհրապարակ, ինչպես նաև մատակարարել ջուր, հոսանք, օդափոխություն, և անհրաժեշտ այլ աջակցություն:



Նկար S-1 Նահանգային Արագընթաց Երկաթուղային Համակարգ (HSR)



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021
 March 25, 2021



Նկար S-2 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Միջանցք

Սույն ամփոփոգիրը տրամադրում է Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի EIR/EIS փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ ակնարկ և հասցեավորում է ստորև թվարկված կետերը

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության բազմաշերտ վերլուծություն
- Նախագծի մշակման ընթացքում բարձրացված խնդիրներ
- Կալիֆորնիայի HSR Համակարգի և Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի նպատակը և անհրաժեշտությունը
- Առաջարկված Նախագծի Տարբերակի նկարագրությունը և կառուցման վեց այլընտրանքային տարբերակները
- Նախագծման նկատառումները, ազդեցություններից խուսափելու և դրանք նվազագույնին հասցնելու համար
- Ազդեցությունները Առանց Ծրագրի Այլընտրանքի Տարբերակի
- HSR այլընտրանքային տարբերակների գնահատում, ներառյալ՝
 - HSR- ի առավելությունները
 - Ազդեցությունների և դրանց մեղմացման միջոցառումների համեմատությունը
 - Կապիտալ և գործառնական ծախսերը
- Հոդված 4(f) և Հոդված 6(f)
- Բնապահպանական արդարություն (Environmental Justice)
- Հակասությունների ոլորտները
- Բնապահպանության գործընթաց
- Բնապահպանության գործընթացի հաջորդ քայլեր

Շրջակա միջավայրի վերլուծության ամբողջական տեքստը հասանելի է EIR/EIS Փաստաթղթի նախագծում Ղեկավար Մարմնի կայքում հետևյալ հղումով՝

<https://hsr.ca.gov/programs/environmental-planning/>.

S.2 Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Բազմաշերտ Վերլուծություն (Tiered Environmental Review). Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթգծի Ղեկավար Մարմնի Նահանգային Ծրագրի EIR/EIS Վերջնական Փաստաթուղթ և Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի EIR/EIS Փաստաթուղթ

Շրջակա Միջավայրի Որակի Խորհուրդի (Council on Environmental Quality (CEQ)) կանոնակարգերը սահմանում են ընթացակարգեր՝ Շրջակա Միջավայրի Ազգային Քաղաքականության մասին Օրենքի (National Environmental Policy Act (NEPA) (Միացյալ

Նահանգների Օրենսգրքի Հոդված 42 [U.S.C.] 4321 et seq.))^{2, 3} պահանջներին համապատասխանելու համար: CEQ-ի կանոնակարգերը թույլ են տալիս իրականացնել շրջակա միջավայրի փուլային վերլուծության գործընթաց: Այս գործընթացը վերագրվում է որպես «որոշումների կայացման բազմաշերտ գործընթաց»: Որոշումների կայացման այս փուլային գործընթացի հիմքում դրված է առաձին փուլով ընդհանուր ծրագրային մակարդակի որոշման կայացում, որին հետևում են ավելի հատկանշական որոշումների կայացում երկրորդ փուլում՝ որը 2-րդ փուլի մակարդակով կհիմնավորվի մեկ կամ ավելի Շրջակա Միջավայրի Ազդեցության Հայտարարություններով (second-tier EISs): NEPA-ի փուլային գործընթացը թույլ է տալիս փուլ առ փուլ որոշումների կայացում մեծ նախագծերի համար, ինչը կլինի չափազանց երկարատև և ծավալուն ավանդական EIS նախագծային եղանակով վերլուծելու դեպքում: Կալիֆորնիայի Շրջակա Միջավայրի Որակի մասին Օրենքը (The California Environmental Quality Act (CEQA)) նույնպես խրախուսում է փուլային մոտեցում և տրամադրում է առաջին փուլի և երկրորդ փուլի Շրջակա Միջավայրի Ազդեցության Հաշվետվությունների (EIRs) ձևաչափեր:

Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի EIR/EIS փաստաթղթերի նախագիծը հանդիսանում է երկրորդ փուլի EIR/EIS փաստաթուղթ, որը բխում է ծրագրի առաջին փուլի EIR/EIS փաստաթղթերից և տրամադրում է նախագծի մակարդակով տեղեկատվություն՝ Կալիֆորնիայի HSR Համակարգի տվյալ հատվածի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Ղեկավար Մարմինը և Երկաթուղու Դաշնային Վարչությունը (Federal Railroad Administration (FRA)) պատրաստել են Կալիֆորնիայի HSR Համակարգի առաջարկվող նախագծի 2005 Վերջնական Ծրագրի EIR/EIS փաստաթղթերը (Նահանգային Ծրագրի EIR/EIS փաստաթղթերը) (Ղեկավար Մարմին և FRA 2005), որոնք տրամադրում են առաջին փուլի վերլուծություն՝ նահանգի ողջ տարածքի երկու երրորդ հատվածում Կալիֆորնիայի HSR Համակարգի իրականացման ընդհանուր ազդեցությունների վերաբերյալ: 2008 Bay Area-ից մինչև Central Valley-ը Արագընթաց Գնացքի Ծրագրի EIR/EIS փաստաթուղթը (2008 Bay Area to Central Valley High-Speed Train Program EIR/EIS) (Bay Area-ից մինչև Central Valley-ի Ծրագրի EIR/EIS փաստաթուղթ) (Ղեկավար Մարմին և FRA 2008) և Bay Area-ից մինչև Central Valley-ը Արագընթաց Գնացքի մասամբ վերանայված վերջնական Ծրագրի EIR փաստաթուղթը (Bay

Համագործակցող Գործակալություն

Դաշնային Գլխավոր Գործակալության կողմից հրավիրված Գործակալություններ, որոնք համաձայնել են մասնակցել NEPA գործընթացին և ունեն օրինական իրավասություն, և/կամ տեխնիկական փորձագիտություն առաջարկվող նախագծի հետ առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մասով:

Պատասխանատու Գործակալություն

Հանրային Գործակալություն, որն ունի որոշակի հայեցողական իրավասություն նախագծի նկատմամբ, սակայն չի նշանակվել որպես Գլխավոր Գործակալություն: Պատասխանատու Գործակալությունը հետևում է CEQA-պահանջներին՝ հաշվի առնելով Գլխավոր Գործակալության կողմից կազմված EIR-ը կամ բացասական հայտարարությունը, և հանգեցնում իր սեփական եզրակացություններին՝ թե արդյոք ք և ինչպես պետք է հաստատի նախագիծը:

² Մինչդեռ սույն EIR/EIS փաստաթուղթը պատրաստվում էր, FRA-ը ընդունել է նոր NEPA համապատասխանության կանոնակարգեր (23 C.F.R. 771): Այդ կանոնակարգերը կիրառելի են միայն 2018թ-ի Նոյեմբերի 28-ից հետո մեկնարկված գործողությունների նկատմամբ: Տե՛ս 23 C.F.R. 771.109(a)(4): Քանի որ սույն EIR/EIS փաստաթուղթը մեկնարկվել է այդ ամսաթվից առաջ, այն ենթակա է կանոնակարգման FRA-ի Շրջակա Միջավայրի Ընթացակարգերի ներքո, և ոչ Մաս 771 կանոնակարգերի ներքո:

³ CEQ-ը թողարկել է նոր կանոնակարգեր 2020թ-ի հուլիսի 14-ին, որոնք ուժի մեջ են մտել 2020թ-ի սեպտեմբերի 14-ից, որոնց համաձայն թարմացվել են NEPA-ի իրականացման ընթացակարգերը՝ հոդված 40 C.F.R. 1500: Այնուամենայնիվ, սույն նախագիծը մեկնարկվել է նախքան NEPA-ի նոր կանոնակարգի ուժի մեջ մտնելու ամսաթիվը և չի ենթարկվում նոր կանոնակարգի պահանջներին՝ ապավինելով 1978թ-ի կանոնակարգերին, որոնք գործել են նախքան 2020թ-ի սեպտեմբերի 14-ը: Սույն փաստաթղթում CEQ կանոնակարգերին արված բոլոր հետագա մեջբերումները հղվում են 1978թ-ի կանոնակարգերին, համաձայն հոդված 40 C.F.R. 1506.13 (2020) և նախաբան 85 Fed. Reg. 43340:

Area to Central Valley High-Speed Train Partially Revised Final Program EIR) (Ղեկավար մարմին 2012) նույնպես հանդիսանում էին առաջին փուլի փաստաթղթեր և ծրագրային էին, որոնք կենտրոնացած էին Bay Area-ից մինչև Central Valley-ի շրջանի վրա: Այս առաջին փուլի EIR/EIS փաստաթղթերը ապահովում են Ղեկավար Մարմնին շրջակա միջավայրի վերաբերյալ վերլուծությամբ, ինչը անհրաժեշտ է Կալիֆորնիայի HSR ընդհանուր համակարգի գնահատման, ինչպես նաև ընդհանուր արագընթաց գնացքների գծերի և կայարանների տեղակայման վայրերի վերաբերյալ լայնածավալ որոշումներ կայացնելու համար՝ ինչը հիմք կհանդիսանա երկրորդ փուլում EIR/EIS փաստաթղթի հետագա ուսումնասիրման համար: EIR/EIS փաստաթղթի նախագծի և 1-ին Փուլի փաստաթղթերի էլեկտրոնային և տպված օրինակները հասանելի են նաև վերանայման համար Ղեկավար Մարմնի գլխամասում աշխատանքային ժամերին՝ 770 L Street, Suite 620 MS-1, Sacramento, CA հասցեով, ինչպես նաև նշանակված հանդիպմամբ Ղեկավար Մարմնի Հարավային Կալիֆորնիայի Շրջանային գրասենյակում՝ 355 S. Grand Avenue, Suite 2050, Los Angeles, CA հասցեով: Ղեկավար Մարմնի Հարավային Կալիֆորնիայի Շրջանային գրասենյակում (South California Regional Office) փաստաթղթերի վերանայման նպատակով հանդիպում նշանակելու համար խնդրում ենք զանգահարել՝ 800-630-1039 հեռախոսահամարով:

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի EIR/EIS փաստաթղթերի նախագիծը հանդիսանում է 2-րդ փուլի փաստաթուղթ և ներկայացնում է վերլուծություն շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունների և արագընթաց երկաթգծի գործարկման առավելությունները աշխարհագրորեն ավելի սահմանափակ տարածքում՝ Palmdale-ի և Burbank-ի միջակայքում, և հիմնված է նախագծի մանրակրկիտ պլանավորման և ճարտարագիտական նախագծման վրա: Հետևաբար, վերլուծությունը կառուցված է ավելի վաղ կայացած որոշումների և ծրագրի EIR/EIS փաստաթղթերի հիման վրա և տրամադրում է ավելի տեղամասին բնորոշ և մանրամասն վերլուծություն:

Ղեկավար Մարմինը պատրաստում է Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի EIR/EIS փաստաթուղթը որպես համատեղ NEPA/CEQA փաստաթուղթ՝ որպեսզի նվազեցնի նահանգային և դաշնային մակարդակով շրջակա միջավայրի պահանջների վերանայման գործընթացների կրկնօրինակումը և համաժամանակեցնի (սինքրոնացնի) որոշումների կայացման գործընթացը: Ղեկավար Մարմինը հանդիսանում է նախագծի հովանավորը և գլխավոր գործակալությունը NEPA⁴ – ի ներքո՝ հետևելով FRA-ի ղեկավար մարմնի կողմից տրված հանձնարարականի պահանջներին՝ 23 U.S.C. 327 օրենքի համաձայն, և հանդիսանում է նահանգի գլխավոր գործակալություն՝ CEQA պահանջների ներքո: 2-րդ Փուլի, նախագծի մակարդակով NEPA վերլուծության գործընթացում ներգրավված են հինգ համագործակցող գործակալություն՝

- Միացյալ Նահանգների Բանակի Ինժեներական Կորպուսը (United States Army Corps of Engineers (USACE)), համաձայնել է մասնակցել 2009թ-ի Դեկտեմբերի 30-ի նամակով
- Ցամաքային Տրանսպորտի Խորհուրդը (Surface Transport Board), համաձայնել է մասնակցել 2013թ-ի մայիսի 2-ի նամակով
- Միացյալ Նահանգների Անտառային Ծառայությունը (United States Forest Service (USFS)), համաձայնել է մասնակցել 2014թ-ի օգոստոսի 25-ի նամակով

⁴ Փոխընթացային Հուշագիր Ազգային Բնապահպանության Քաղաքականության մասին Օրենքի Հանձնարարականի համար (FRA և Կալիֆորնիա Նահանգ 2019):

- ԱՄՆ Ներքին գործերի Նախարարության Հողի Կառավարման Բյուրոն (U.S Department of the Interior, Bureau of Land Management), համաձայնել է մասնակցել 20122-ի նոյեմբերի 6-ի նամակով
- Դաշնային Ավիացիոն Վարչությունը (Federal Aviation Administration (FAA)) (մասնակցության հայտ է ներկայացրել որպես համագործակցող գործակալություն NEPA-ի ներքո, 2020թ-ի սեպտեմբերի 3-ի նամակով)

Ստորև ցանկում ներկայացված Կալիֆորնիայի գործակալությունները ծառայում են որպես CEQA պատասխանատու գործակալություններ Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի համար

- Կալիֆորնիայի Ձկների և Վայրի Բնության Վարչություն (California Department of Fish and Wildlife)
- Կալիֆորնիայի Տրանսպորտի Վարչություն (California Department of Transport)
- Կալիֆորնիայի Պատմական Արժեքների Պահպանման Պատասխանատու Մարմին (California State Historic Preservation Officer)
- Կալիֆորնիայի Հանրային Ծառայությունների Հանձնաժողով (California Public Utilities Commission)
- Կալիֆորնիայի Ջրային Ռեսուրսների Վարչություն (California Department of Water Resources)
- Կալիֆորնիայի Նահանգային Հողերի Հանձնաժողով (California State Lands Commission)
- Նահանգային Ջրային Ռեսուրսների Կառավարման Խորհուրդ (State Water Resources Control Board)
- Antelope Valley-ի Օդի Որակի Կառավարման Շրջան (Antelope Valley Air Quality Management District)
- Հարավային Ափի Օդի Որակի Կառավարման Շրջան (South Coast Air Quality Management District)
- Լոս Անջելես Վարչաշրջանի Ջրհեղեղների դեմ Պայքարի Շրջան (Los Angeles County Flood Control District)

S.3 Նախագծի մշակման ընթացքում բարձրացված խնդիրներ

2014թ-ի հուլիսի 24-ին նախաձեռնվել է Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի EIR/EIS Փաստաթղթերի նախագծի հանրային մշակում, ինչի վերաբերյալ Նահանգի Հաշվարկային Պալատին (State Clearinghouse), ընտրված պաշտոնյաներին, տեղական, շրջանային և նահանգային գործակալություններին, և հետաքրքրված հանրությանը բաժանվել է Պատրաստման մասին Ծանուցումը, ինչպես նաև Դաշնային Գրանցամատյանում (*Federal Register*) հրապարակվել է Մտադրության մասին Ծանուցում (Notice of Intent): Հանրային մշակման ժամանակահատվածի ընթացքում, Ղեկավար Մարմինը հյուրընկալել է 916 մասնակից յոթ հանրային հանդիպումների և դաշնային գործակալության մեկ հանդիպման ընթացքում 2014թ-ի օգոստոսի 5-ից մինչև օգոստոսի 19-ը`

- Santa Clarita` 2014թ-ի օգոստոսի 5
- Burbank` 2014թ-ի օգոստոսի 6
- Palmdale` 2014թ-ի օգոստոսի 7

- Acton/Agua Dulce՝ 2014թ-ի օգոստոսի 11
- Sylmar՝ 2014թ-ի օգոստոսի 12
- Lake View Terrace՝ 2014թ-ի օգոստոսի 14
- Downtown Los Angeles՝ 2014թ-ի օգոստոսի 19
- Los Angeles՝ 2014թ-ի օգոստոսի 8 (դաշնային գործակալության հանդիպում)

2014թ-ի Դեկտեմբերին նույնպես անցակցվել են լրացուցիչ հանրային հանդիպումներ, որտեղ ներկայացվել են Այլընտրանքային Տարբերակները, քանի որ դրանք հատելու են Անջելեսի Ազգային Անտառը (Angeles National Forest (ANF)), ինչպես նաև Սուրբ Գաբրիելի Լեռների Ազգային Հուշարձանը (San Gabriel Mountains National Monument (SGMNM)): Մոտավորապես 1000 մարդ մասնակցել է հետևյալ հանդիպումներին՝

- Santa Clarita՝ 2014թ-ի դեկտեմբերի 2
- Shadow Hills՝ 2014թ-ի դեկտեմբերի 3
- Palmdale՝ 2014թ-ի դեկտեմբերի 4
- Burbank՝ 2014թ-ի դեկտեմբերի 8
- San Fernando՝ 2014թ-ի դեկտեմբերի 9
- Sylmar՝ 2014թ-ի դեկտեմբերի 10
- Acton/Agua Dulce՝ 2014թ-ի դեկտեմբերի 13

Նախագծի հանրային մշակման ողջ ընթացքում, Ղեկավար Մարմինը ստացել է 938 մեկնաբանությունների հայտեր՝ դաշնային, նահանգային և տեղական գործակալությունների, ընտրված պաշտոնյաների, գործարարների, կազմակերպությունների, և անհատների կողմից: *Palmdale-ից մինչև Burbank Հատվածի 2014թ-ի Շրջանակային Հաշվետվությունում և Բաց Դռների Հանդիպումների Ամփոփ Հաշվետվությունում* (Ղեկավար Մարմին 2014, 2015) նկարագրված են *Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի հանրային մշակման գործընթացում ստացված մեկնաբանությունները*: Ստորև ցանկը ամփոփում է մշակման գործընթացում դուրս բերված հիմնական թեմաները

- Այլընտրանքային Տարբերակները
- Կայարանների տեղակայման վայրերը
- Ազդեցությունները բնապահպանության արդարության համայնքների վրա
- Մոցիալտնտեսական ազդեցությունները, այդ թվում բնակավայրերի, դպրոցների, կրոնական հաստատությունների և աշխատանքային շուկայի վրա ունեցած ազդեցությունները
- Բացասական ազդեցությունները մոտակա համայնքների տեսանելիության վրա, այդ թվում շլացնող լույսը
- Գյուղատնտեսական նշանակության հողերի և անտառային հողերի փոխակերպումը
- Օդի աղտոտում և ջերմոցային գազերի արտանետումներ
- Ազդեցություններ մշակութային ռեսուրսների վրա, ներառյալ հնեաբանական և բնիկ Ամերիկական տեղամասերի վրա
- Ազդեցություններ կենսաբանական և ջրային ռեսուրսների վրա, ինչպես նաև խոնավ տարածքների վրա

- Էլեկտրամագնիսական միջամտության/դաշտերի (EMI/EMF) ազդեցությունները հարակից հողերի օգտագործման վրա
- Երկրաբանություն, հող, սեյսմիկություն, և հնեաբանական ռեսուրսներ
- Վտանգավոր նյութերի արտանետում գոյություն ունեցող նավթահորերում, ինչպես նաև նախագծի գործարկման հետևանքով
- Ազդեցություններ առուների և ստորերկրյա ջրերի վրա
- Աղմուկի և թրթռումների ազդեցությունները դպրոցների, բնակատեղերի, համայնքների, գյուղական շրջանների և վայրի բնության վրա
- Ազդեցություններ զբոսայգիների, հանգստյան գոտիների և բացօթյա տարածքների վրա , ինչպես օրինակ Անջելեսի Ազգային Անտառը (ANF), և այդ թվում Ման Գաբրիել լեռների ազգային հուշարձանը (SGMNM)
- Ծրագրի գործարկման համար վերականգնվող էներգիայի օգտագործում
- Հակասություններ գործող կոմունալ ծառայությունների հետ
- Ուղևորների անվտանգությունը ահաբեկչական հարձակումների, երկրաշարժերի, և այլ արտակարգ իրավիճակների դեպքում
- Մոտակա դպրոցների անվտանգությունը դժբախտ պատահարի դեպքում
- Ազդեցություններ հարակից հողերի օգտագործման վրա, ինչպես նաև Բըրբանքի Հոլիվուդ Օդանավակայանի (Hollywood Burbank Airport) վրա
- Տարանցիկ մուտք դեպի HSR կայարաններ
- Ազդեցություններ մոտակա խաչմերուկների վրա, հատկապես գետնուղիների հորատման կապակցությամբ
- Տեխնիկական/ճարտարագիտական մտահոգություններ
- Հարկերից հավաքված գումարների օգտագործումը Կալիֆորնիայի HSR Համակարգի վրա

Տ.4 Կալիֆորնիայի HSR Համակարգի և Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Նպատակը և Անհրաժեշտությունը

Տ.4.1 Կալիֆորնիայի HSR Համակարգի Նպատակը

Նահանգային Ծրագրի EIR/EIS փաստաթուղթը սահմանում է Կալիֆորնիայի HSR Համակարգի նպատակը, ինչպես նաև բացահայտում և գնահատում է Այլընտրանքային Տարբերակների ուղիները և կայարանների տեղակայման վայրերը՝ որպես նահանգային համակարգի մի մաս՝

Կալիֆորնիայի HSR Համակարգի նպատակն է ապահովել արագընթաց էլեկտրաֆիկացված գնացքների համակարգ, որը կկապակցի նահանգի խոշորագույն քաղաքների շրջանները և որը կապահովի նաև կանխատեսելի և հետևողական երթևեկության ժամանակացույց: Կալիֆորնիայի HSR Համակարգի երկու նպատակները ներառում են հաղարդակցական կապի ապահովումը կոմերցիոն օդանավակայանների, հանրային տրանսպորտի և մայրուղիների ցանցի հետ, և ներկայիս տրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակումների վերացումը, քանի որ Կալիֆորնիայում մեծանում է միջքաղաքային ճամփորդությունների պահանջարկը, և այդ ամենը պետք է իրականացվի Կալիֆորնիայի եզակի

բնական ռեսուրսների նկատմամբ զգայունության պահպանմամբ և պաշտպանությամբ (Ղեկավար Մարմին և FRA 2005):

S.4.2 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Նպատակը

Կալիֆորնիայի HSR Համակարգի Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի նպատակն է ապահովել հանրությանը էլեկտրաֆիկացված HSR ծառայություններով, որը կտրամադրի կանխատեսելի և կայուն ուղևորության ժամեր Antelope Valle-ի և San Fernando Valley-ի միջև, կապահովի կապ դեպի օդանավակայաններ, հանրային տրանսպորտ և մայրուղիների ցանց Antelope Valley-ում և San Fernando Valley-ում, ինչպես նաև կմիացնի Կալիֆորնիայի Նահանգային HSR Համակարգի Հյուսիսային և Հարավային մասերը:

Ծրագրի շրջանակում կկառուցվի, կսպասարկվի և կգործարկվի էլեկտրական արագընթաց երկաթգիծ, որը կմիացնի Palmdale-ի Տրանսպորտային Կենտրոնը Palmdale-ում Բրոքհայնի Հոլիվուդ Օդանավակայանին (Hollywood Burbank Airport) Burbank-ում: Ծրագիրը ներառում է համակարգի աջակցության համար անհրաժեշտ նոր և առկա օբյեկտների և ենթակառուցվածքների կառուցում, բարելավում, արդիականացում, շահագործում և սպասարկում:

S.4.3 Կալիֆորնիայում և Palmdale-ից Burbank Շրջանում Կալիֆորնիայի HSR Համակարգի CEQA Նպատակները և Քաղաքականությունը

Որպես գլխավոր գործակալություն, Ղեկավար Մարմինը պատրաստում է սույն EIR/EIS փաստաթղթի նախագիծը՝ CEQA EIR-ի բովանդակության և մշակման հատուկ պահանջներին համապատասխան: Կալիֆորնիայի Շրջակա Միջավայրի մասին Օրենքի Ուղեցույցների 15124 (CEQA Guidelines Section 15124) համաձայն պահանջվում է, որպեսզի EIR փաստաթուղթը ներառի նպատակների հայտարարությունը, որը կհիմնավորի ծրագրի հիմնական նպատակը: Իր կանոնադրական մանդատի և CEQA պահանջներից ելնելով՝ Ղեկավար Մարմին խնդրական է ծրագրել, կառուցել և գործարկել Կալիֆորնիայի HSR Համակարգը, որը կհամագործակցի Կալիֆորնիայի գործող տրանսպորտային ցանցի հետ՝ Կալիֆորնիայի առաջարկվող HSR Համակարգի համար՝ որդեգրելով հետևյալ նպատակները և քաղաքականությունները՝

- Ապահովել միջքաղաքային ճամփորդությունների հնարավորություն՝ աջակցելու խիստ ծանրաբեռնված միջքաղաքային մայրուղիներին և կոմերցիոն օդանավակայաններին:
- Բավարելել միջքաղաքային ճամփորդությունների հետագա պահանջարկը, որը հնարավոր չի լինի բավարարել ներկայիս տրանսպորտային համակարգերով, ինչպես նաև բարձրացնել շարժականության հնարավորությունները քաղաքների միջև
- Առավելագույնի հասցնել միջմոդալ փոխադրումների հնարավորությունները՝ տեղակայելով կայանները այնպես, որպեսզի հնարավոր լինի միանալ տեղական տարանցիկ համակարգերին, օդանավակայաններին և մայրուղիներին
- Կալիֆորնիայի բնակիչների համար բարելավել միջքաղաքային ճամփորդությունը՝ տրամադրելով հարմարավետ, ապահով, հաճախակի և վստահելի արագընթաց ճամփորդություն
- Ապահովել ուղևորության ժամանակի շարունակական կրճատում մեծ քաղաքների կենտրոնների միջև
- Մեծացնել միջքաղաքային տրանսպորտային համակարգի արդյունավետությունը
- Հնարավորության սահմաններում առավելագույնի հասցնել գործող տրանսպորտային միջանցքների և արտադրություն ոգտագործման իրավունքով ճանապարհների օգտագործումը

- Մշակել գործնական և տնտեսապես կենսունակ տրանսպորտային համակարգ, որը կարող է իրականացվել փուլերով և բերել եկամուտներ գերազանցելով շահագործման և սպասարկման ծախսերը
- Ապահովել միջքաղաքային ճամփորդությունները՝ պաշտպանելով շրջանի բնական և գյուղատնտեսական ռեսուրսները և պահպանելով նրանց նկատմամբ զգայունությունը, ինչպես նաև նվազեցնել արտանետումները և կրճատել քաղաքների միջև ճամփորդող ավտոմեքենաների մղոնները (VMT)

Մոտավորապես 31-ից 38 մղոն երկարությամբ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը կազմում է Կալիֆորնիայի նահանգային HSR համակարգի կարևորագույն մասը: Ծրագրի այս հատվածը Palmdale-ի, San Fernando Valley-ի, Burbank-ի, և առաջարկվող HSR կայարաններին մոտ գնտվող համայնքների համար հասանելի կդարձնի նոր տրանսպորտային ռեժիմը: Այլընտրանքային տարբերակները կօգնեն ուղևորների համար բարելավել երկաթուղային ծառայությունները Palmdale-ի և Burbank-ի միջև և կապահովեն ուղևորային երկաթուղային կապը Հյուսիսային Կալիֆորնիայի և Լոս Անջելեսի միջև, ինչը կնպաստի ողջ Կալիֆորնիայի շարժականության մեծացմանը՝ ավելի ուղակի և արդյունավետ երթևեկության միջոցով:

S.4.4 Կալիֆորնիայի HSR Համակարգի անհրաժեշտությունը ամբողջ նահանգում և Palmdale-ի և Burbank-ի Շրջանում

HSR համակարգի անհրաժեշտությունը կա ամբողջ նահանգում, և որոշ շրջանային տարածքներ մեծացնում են այդ անհրաժեշտությունը: 31-ից 38 մղոն երկարությամբ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը հանդիսանում է Կալիֆորնիայի նահանգային HSR համակարգի կարևորագույն բաղադրիչը:

Կալիֆորնիայի միջքաղաքային տրանսպորտային համակարգի թողունակությունը, Palmdale և Burbank շրջանները ներառյալ, բավական չէ ներկայիս և հետագա ուղևորությունների պահանջարկը բավարարելու համար: Տրանսպորտային համակարգի ներկայիս և կանխատեսվող խցանումները կշարունակեն հանգեցնել օդի որակի վատթարացմանը, հուսալիության նվազմանը, և ուղևորության ժամանակի երկարաձգմանը: Գործող տրանսպորտային համակարգը համահունչ չէ նահանգի բնակչության աճի, տնտեսական ակտիվության և տուրիզմի հետ: Միջնահանգային մայրուղիների համակարգը, կոմբեյն օդանավակայանները, և սովորական ուղևորային երկաթուղային համակարգը՝ սպասարկելով միջքաղաքային ճամփորդության շուկան, աշխատում են գրեթե իրենց ողջ թողունակությամբ, և դրանց սպասարկման և ընդլայնման համար կպահանջվի հսկայական հանրային ներդրումներ, որպեսզի հնարավոր լինի բավարարել ներկայիս պահանջարկը և հետագա աճը հաջորդ 25 տարվա ժամանակահատվածում և դրանից հետո: Դեռ ավելին, շատ հիմնական մայրուղիների և կարևոր օդանավակայանների ընդլայնման հնարավորությունը շատ անորոշ է. անհրաժեշտ ընդլայնումներից որոշները կարող են անիրագործելի լինել կամ սահմանափակվել ֆիզիկական, քաղաքական և այլ գործոններով: Կալիֆորնիայում, միջքաղաքային երթևեկության համակարգի բարելավման անհրաժեշտությունը, ներառյալ հարավային San Joaquin Valley-ի, Bay Area-ի, Sacramento-ի և հարավային Կալիֆորնիայի միջև միջքաղաքային երթևեկությունը, առնչվում է հետևյալ խնդիրների հետ՝

- Միջքաղաքային ճամփորդության պահանջարկի հետագա աճ
- Թողունակության սահմանափակվածությունը, ինչը կհանգեցնի խցանումների աճին և ուշացումներին, այդ թվում նաև Լոս Անջելես Վարչաշրջանի գործող տրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակվածությունը
- Անվտանգության խնդիրներ և ճամփորդելու անհուսալիությունը, ինչը բխում է խցանումներից և ուշացումներից, եղանակային պայմաններից, դժբախտ պատահարներից

և այլ գործոններից, որոնք ազդում են Կալիֆորնիայի բնակիչների և գործարարների կյանքի որակի և տնտեսական բարեկեցության վրա, ինչպես նաև տուրիզմի վրա:

- Նվազեցված շարժականությունը, որի հետևանքն է նահանգում գլխավոր օդանավակայանների, տարանցիկ համակարգերի և ուղևորային երկաթուղիների միջև ճամփորդության միջոցների սահմանափակ կապերի նկատմամբ պահանջարկը
- Օդի վատ և վատթարացող որակ և բնական ռեսուրսների և գյուղատնտեսական հողերի վրա ճնշում, ինչը առաջանում է մայրուղիների և օդանավակայանների ընդարձակման և քաղաքաշինական ճնշումների հետևանքով:

Նկար S-2-ը ցույց է տալիս Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի տարածքը Լոս Անջելես Վարչաշրջանի և Կալիֆորնիա նահանգի շրջանակում: Լոս Անջելես Վարչաշրջանը զգալիորեն նպաստում է նահանգում նոր միջքաղաքային տրանսպորտային ծառայության անհրաժեշտությանը, որը կմիացնի հիմնական բնակեցված և տնտեսական կենտրոնները նահանգի այլ շրջաններին:

S.5 Այլընտրանքային տարբերակներ

S.5.1 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Նախապատմությունը

2005թ-ին, Ղեկավար Մարմինը և FRA-ը հիմնվել են Կալիֆորնիայի HSR Համակարգի ծրագրի EIR/EIS փաստաթղթերի վրա, որպեսզի բացահայտեն Soledad Canyon-ի և Լոս Անջելես Վարչաշրջանի Մետրոպոլիտենի (Los Angeles County Metropolitan Transport Authority (Metro)/Metrolink) միջանցքները՝ Palmdale-ի և Burbank-ի միջև այլընտրանքային ուղիների ուսումնասիրման նպատակով: Հետևաբար, Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի EIR/EIS Փաստաթղթերի նախագծում վերլուծված է Նահանգի Երթուղու (State Route (SR)) 14 գիծ, որոնք հիմնականում հետևում են Soledad Canyon-ի և Մետրոպոլիտենի (Metro/Metrolink) միջանցքներին:

Մետրոպոլիտեն (Metrolink)

Մերձքաղաքային երկաթուղային ծառայություն է, որը գործարկում է յոթ գիծ Հարավային Կալիֆորնիայի վեց համայնքներում:

2005 Նահանգային Ծրագրի EIR/EIS փաստաթղթում ուսումնասիրված են հնարավոր գծերը Bakersfield քաղաքի և Լոս Անջելեսի Sylmar թաղամասի միջև, ինչպես նաև Sylmar-ի և Լոս Անջելեսի կենտրոնի (downtown Los Angeles) միջև (Նկար S-3): Bakersfield-ի և Sylmar-ի միջև, դիտարկվում է երկու գիծ, որոնք կշարունակեն կամ Միջնահանգային (I-5)/Grapevine միջանցքը կամ SR 58 և Metrolink-ի երկաթուղային միջանցքը՝ Antelope Valley-ով SR 14/Soledad Canyon-ով: Երկու միջանցքն էլ ներառում են յուրաքանչյուրը մեկ կայարանի տարբերակ. SR 126/I-5 խաչմերուկով սահմանազատվող տեղամասում, Magic Mountain Parkway-ում, և I-5/Grapevine միջանցքի համար Old Ridge Rout-ում, և SR 58/Soledad Canyon-ի միջանցքի համար Palmdale-ի Տրանսպորտային Կենտրոնում (Palmdale Transport Center):



Աղբյուր՝ Ղեկավար Մարմին, 2005

Նկար S-3 Հնարավոր կապակցող գծերը 2005 Նահանգային Ծրագրի EIR/EIS-ից

Ինչպես արտացոլված է 2005 Նահանգային EIR/EIS փաստաթղթում, Ղեկավար Մարմինը և FRA-ը ընտրել են SR 58/Soledad Canyon-ի Մետրոպոլիտենի (Metro/Metrolink) միջանցքները որպես նախընտրելի գիծ Bakersfield-ի և Sylmar-ի միջև՝ Palmdale քաղաքում կայարանի տեղակայմամբ: Այս գիծը կտարածվի դեպի արևելք Bakersfield-ից հետևելով SR 58-ին Տեհաչապի Լեռներով (Tehachapi Mountains) դեպի Mojave, Մետրոպոլիտենի (Metro/Metrolink) միջանցքով Antelope Valley-ով և Soledad Canyon-ով, և այնուհետև հետևելով SR 14-ին Սանտա Կլարիտա քաղաքից (Santa Clarita) դեպի Լոս Անջելեսի Sylmar-ի թաղամաս: Գիծը կապահովի բարձրակարգ կապ և հասանելիություն Antelope Valley-ին և կունենա ավելի մեծ ներուժ մեծ հեռավորությունից Լոս Անջելես այցելուներին սպասարկելու համար:

Որպես 2005 Նահանգային Ծրագրի EIR/EIS փաստաթղթի մաս, Ղեկավար Մարմինը դիտարկել է Sylmar-ի և Լոս Անջելեսի Միության Կայարանի (Los Angeles Union Station) միջև միջանցքները, որոնք կհետևեն I-5 ավտոմայրուղուն կամ Մետրոպոլիտենի (Metro/ Metrolink) Antelope Valley-ի գծին: Sylmar-ի և Sun Valley-ի թաղամասերում, ինչպես նաև San Fernando և Burbank քաղաքներում կայարանի տարբերակները գնահատվել են: Ղեկավար Մարմինը որոշել է, որ ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների գոյություն ունեցող ուղիների համատեղ օգտագործումը չի համապատասխանում Կալիֆորնիայի HSR Համակարգի նպատակներին, և որ անհրաժեշտ կլինեն առանձնացված ուղիներ, որպեսզի հնարավոր լինի հասնել Կալիֆորնիայի HSR Համակարգի առջև դրված կատարողական նպատակներին:

Palmdale-ից Լոս Անջելես Հատվածի տարբերակները այդպիսով որոշվել են հետևյալ կերպով՝

- 2005 Նահանգային Ծրագրի EIR/EIS փաստաթղթի համար իրականացվել է հանրային մշակման գործընթաց
- Palmdale-ից Lnu Անջելես Հատվածի համար հանրային մշակման գործընթաց իրականացվել է 2007թ-ին
- Գծի և կայարանի հետազոտության գնահատման գործընթացը նկարագրված է *Palmdale-ից Lnu Անջելես Նախնական Տարբերակների Վերլուծության Ձեկույցում (Palmdale to Los Angeles Preliminary Alternatives Analysis Report)* (Ղեկավար Մարմին և FRA 2010) և *Palmdale-ից Lnu Անջելես Հավելյալ Տարբերակների Վերլուծության Ձեկույցում (Palmdale to Los Angeles Supplemental Alternatives Analysis (SAA) Reports)* (Ղեկավար Մարմին և FRA 2011; 2012; 2014).

Նկար S-4 ցույց է տալիս Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի այլընտրանքային տարբերակների զարգացումը ժամանակի ընթացքում:

2014թ-ի մայիսին, 2014 SAA Ձեկույցում խորհուրդ է տրվում, որ Palmdale-ից Los Angeles Հատվածը կիսվի երկու նախագծային հատվածի (Palmdale-ից Burbank և Burbank-ից Los Angeles): Հետևելով այս առաջարկությանը, հանրային մշակման երկրորդ ժամանակաշրջանը տեղի ունեցավ 2014թ-ի հուլիսից մինչև սեպտեմբեր: Հետևելով հանրային մշակման երկրորդ ժամանակաշրջանին և լրացուցիչ հետքննարկման հանդիպումներին, որոնք անցկացվեցին 2014թ-ի դեկտեմբերին, Հաջորդ SAA Ձեկույցը Palmdale-ից Burbank ենթահատվածի համար (Ղեկավար Մարմին և FRA 2015) ներկայացվեց Ղեկավար Մարմնի Տնօրենների Խորհրդին 2015թ-ի հունիսին:

Ղեկավար Մարմնի 2015թ-ի Հունիսի 9-ին կայացած Տնօրենների Խորհրդի նիստին բարձրացվել են հարցեր 2015 SAA Ձեկույցում ներկայացված այլընտրանքային տարբերակների վերաբերյալ: Մտահոգությունները ընդգրկում են մի շարք թեմաներ, այդ թվում օդի որակը, արտաքին տեսքը, մշակութային ռեսուրսները, ազդեցությունները բնապահպանական արդարության համայնքների վրա, ազդեցությունները Անջելեսի Ազգային Անտառի (ANF) վրա, ադ թվում SGMNM-ի, ինչպես նաև ծրագրի ծախսերը: Խորհրդի նիստից հետո, Ղեկավար Մարմինը ուսումնասիրեց այլընտրանքային տարբերակները բարելավելու միջոցները՝ խորհուրդի նիստին և շահագրգիռ կողմերի նախորդ հանդիպումներին բարձրացված մտահոգությունները հասցեավորելու նպատակով: 2016 SAA Ձեկույցում ներկայացված է գծերի և կայարանների բարելավված տարբերակ 2015 SAA Ձեկույցի համեմատությամբ՝ բարելավումները կատարվել են նվազեցնելով գետնուղու խորությունը, նվազեցնելով ազդեցությունները համայնքի վրա, նվազագույնին հասցնելով ազդեցությունները ANF-ի, ինչպես նաև SGMNM-ի վրա, խուսափելով ազդեցություններից Big Tujunga Wash-ի մոտակայքում, և բարելավելով ուղևորության ժամանակը՝ ճանապարհի երկարությունը կրճատելու շնորհիվ:

SAA Ձեկույցի պատրաստման գործընթացը նաև իրազեկված էր տարբեր աշխատանքային խմբերի կողմից: 2014, 2015 և 2016թթ.-ին ձևավորվել են Համայնքի և շահագրգիռ կողմերի աշխատանքային խմբեր, որպեսզի հնարավոր լինի կազմակերպել բովանդակալից հանրային մեկնաբանությունների հավաքագրումը Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի միջանցքի բնակիչներից և կազմակերպություններից: Աշխատանքային խմբերում ներառված են եղել Բնապահպանական Արդարության Համայնքները և Բնիկ Ամերիկացիների ցեղերի անդամները: Համայնքային աշխատանքային խմբերում ներառվել են տեղական համայնքների անդամները, որոնք հրավիրվել են Ղեկավար Մարմնի կողմից, և շահագրգիռ կողմերի աշխատանքային խմբերում ներառվել են Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի միջանցքի երկայնքով տարբեր ընտրատարածքների առաջնորդները: Շահագրգիռ կողմերի աշխատանքային խմբերում ներառվել են այնպիսի անդամներ, ովքեր իրազեկ են շրջանի հողի

օգտագործման, տրանսպորտի, բնապահպանական կայունության հարցերից և սոցիալական թեմաներից:


Հիմնվելով SAA Ձեկույցների և աշխատանքային խմբերից ստացված մեկնաբանությունների վրա, Ղեկավար Մարմինը առաջ է քաշել վեց Կառուցման Այլընտրանք սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելու համար. Վերամշակված SR14, SR14A, E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքներ:

S.5.2 Ծրագրի Այլընտրանք չունենալու Տարբերակ

Ծրագրի Այլընտրանք չունենալու տարբերակը (No Project Alternative) ներկայացնում է Նահանգի տրանսպորտային համակարգը (մայրուղիներ, օդանավակայաններ, ավտոբուսներ, սովորական երկաթուղի) իր ներկայիս վիճակում և թե ինչպիսին այն կլինի շրջանային տրանսպորտային ծրագրերի կամ նախագծերի իրականացումից հետո, որի համար հաշվարկվել են իրականացման ֆինանսական միջոցները և ինչը ծրագրվում է իրականացնել մինչև 2040թ., ինչպես նաև հիմնական հողերի օգտագործման փոփոխությունների նախատեսում: Ծրագրի Այլընտրանք չունենալու տարբերակը հնարավորություն է տալիս որոշում կայացնողներին և հանրությանը համեմատել առաջարկվող Կառուցման Այլտրանքները՝ հետագայում սպասվող այն պայմանների հետ, որոնք կլինեն նախագծի չկառուցման դեպքում⁵:


2015-ից մինչև 2040թ-ը, սպասվում է, որ Լոս Անջելես Վարչաշրջանի բնակչությունը կմեծանա մոտավորապես 1.5 միլիոնով, և մոտավորապես 10 միլիոնից կդառնա ավելի քան 11 միլիոն: Ակնկալվում է, որ Լոս Անջելես Վարչաշրջանում կստեղծվեն 551,200 նոր աշխատատեղեր մինչև 2040թ-ը (SCAG 2016): Palmdale-ի և Burbank-ի ընդհանուր ծրագրերը, երկու հիմնական քաղաքային կենտրոնները Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի ուսումնասիրության շրջանակում նույնպես ակնկալվում են աճ, նոր և բարելավված տրանսպորտային հանգույցների և շրջակայքում տարանցիկ փոխադրումների զարգացման առնչությամբ: Քանի որ Լոս Անջելես Վարչաշրջանում նոր աշխատատեղերի ստեղծմամբ, ակնկալվում է, որ նոր աշխատանքային հնարավորություններից օգտվելու համար, մարդիկ կժամանեն մոտակա վարչաշրջաններից, ամենայն հավանականությամբ տեղական տրանսպորտային համակարգը, պայմանավորված աշխատանքային շուկայի այս աճով, կենթարկվի մեծ ծանրաբեռնվածության Ծրագրի Այլընտրանք չունենալու տարբերակում:

⁵ NEPA-ն պահանջում է «Առանց ծրագրի իրականացման» տարբերակի գնահատում EIS փաստաթղթում (CEQ Կանոնակարգերի Բաժին (CEQ Regulations Section 1502.14(d)): Նմանապես, CEQA-ն պահանջում է, որպեսզի EIR փաստաթուղթը ներառի «Առանց ծրագրի իրականացման» տարբերակի գնահատումը (CEQA Ուղեցույցների Բաժին 15126.6(e) (CEQA Guidelines Section 15126.6(e)):



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED

August 30, 2019



Նկար S-4 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Այլընտրանքների Ջարգացում

Այս բնակչությանը սպասարկող կանխատեսվող ապագա ծրագրերը ներառում են առևտրային կենտրոնների, արդյունաբերական պարկերի, այլ տրանսպորտային նախագծերի և բնակարանաշինության զարգացում: Ջարգացման և տրանսպորտային ենթակառուցվածքների այդ ծրագրերը նախատեսում են համապատասխանել տվյալ շրջանում կանխատեսվող աճին: Նման ծրագրերը կխրախուսեն ինչպես խիտ կառուցապատումը, այնպես էլ ավելի մեծ ներդրումները տեղական տարանցման մոդելներում, որպես մեքենաներով ուղևորությունների կրճատման միջոց: Ընդհանուր առումով, զարգացումները կենտրոնացած կլինեն Անտելոպայան և Սան Ֆերնանդոյի Հովիտների (Antelope and San Fernando Valleys) ուրբանիզացված հատվածներում: Այս քաղաքային կենտրոնների միջև, ANF-ի SGMNM-ի տարածքներում ընդգրկված շրջանները ամենայն հավանականությամբ կմնան անփոփոխ՝ իրենց պաշտպանված կարգավիճակից ելնելով:

S.5.3 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Արագընթաց Երկաթուղու Կառուցման Այլընտրանքներ

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար առաջարկվել է վեց ամբողջական Այլընտրանքային տարբերակ. բարելաված SR14, SR14A, E1, E1A, E2, և E2A: Նկար S-5 ցույց է տալիս Կառուցման Այլընտրանքների ուղիները և ծրագրի հիմնական առանձնահատկությունները: Բոլոր վեց Կառուցման Այլընտրանքների ուղիները կմեկնարկեն Antelope Valley-ից, Palmdale քաղաքից: Ավելի հարավ, Կառուցման Այլընտրանքների ուղիները ANF-ի և SGMNM-ի տարածքում կանցնեն գետնուղով (թունել), և կավարտվեն Burbank-ում Բրբանքի Օդանավակայանի Կայարանում (Burbank Airport Station): ANF-ից հարավ, բարելաված SR14, SR14A, E1 Կառուցման Այլընտրանքների ուղիները կանցնեն Լոս Անջելեսին հարակից մի քանի քաղաքներով, այդ թվում Sylmar-ով, Pacoima-ով, և Sun Valley-ով՝ San Fernando Valley-ում: Ավելի դեպի արևելք, E2 և E2A Կառուցման Այլընտրանքների ուղիները կանցնեն Lake View Terrace-ի և Shadow Hills-ի մերձքաղաքային թաղամասերով: Աղյուսակ S-1-ում ցուցադրվում է նախագծերի հիմնական հատկանիշների համեմատությունը յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի առնչությամբ: Հաջորդող բաժիններում յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքային ուղիները մանրամասնորեն նկարագրված են:

Աղյուսակ S-1 Կառուցման Այլընտրանքների Նախագծերի Հիմնական Հատկանիշների Ամփոփ Պատկեր

Նախագծի հատկանիշները	Բարելաված SR14	SR14A	E1A	E1A	E2	E2A
Ընդհանուր երկարություն (զձային մղոն) ¹	37	38	35	35	31	31
Վերգետնյա հատակագիծը (զձային մղոն)	7	7	8	7	7	5
Վերգետնյա ծածկված թունել (զձային մղոն)	1	1	0	0	0	0
Խորշով և ծածկով թունել (զձային մղոն)	1	1	2	1	1	1
Հորատած թունել (զձային մղոն)	25	28	24	26	22	24
Բարձրացված պրոֆիլ (զձային մղոն)	3	1	1	1	1	1
Ճեպուղիների քանակը ²	1	2	1	2	1	2
Երկաթուղային անցումների քանակը	3	5	3	5	2	5
Խոշոր ջրամբարների վրայով անցումների քանակը ³	25	19	12	12	13	13
Վերգետնյա (հատակի մակարդակ) ճանապարհային անցումների քանակը	0	0	0	0	0	0


Նախագծի հատկանիշները	Բարելաված SR14	SR14A	E1A	E1A	E2	E2A
Հանրային և մասնավոր ճանափարների փակման հատվածների քանակը	9	5	13	12	11	10
Ճանապարհների նոր վերգետնյա և ստորգետնյա անցումների քանակը	11	9	10	9	11	10

1 Երկարությունը կլորացված է դեպի մոտակա ամբողջական թիվ և գումարման արդյունքում կարող է ոչ շատ ճշգրիտ լինել կլորացման հետևանքով:

2 Ճեպուղու կառուցվածքը բաղկացած է սյուներով պահվող հարթակից: Այդ հարթակը սատարում է HSR գծին:


3 Խոշոր ջրամբարների անցումները ներառում են Ունա լիճը (Una Lake), Արևելյան ճյուղի Կալիֆորնիայի Ջրատարը (East Branch California Aqueduct), Սանտա Կլարայի Գետային Համակարգը (Santa Clara River System), Pacoima Wash-ը, Tujunga Wash-ը, և Big Tujunga Creek System համակարգը:

HSR = Արագընթաց երկաթուղի



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021
 March 26, 2021

○ Proposed HSR Station	● Metrolink Station	— Metrolink	— Other HSR Project Section	— Subsection Break	— City Boundary
○ HSR Alignment Profile	— At Grade	— At Grade Covered	— Cut and Cover	— Elevated / Aerial Structure	— Retained Cut / Trench
— Angeles National Forest	— Magic Mountain Wilderness Areas	— San Gabriel Mountains National Monument			



Նկար S-5 Palmdale-ից Burbank Կառուցման Այլընտրանքներ և կայարանների տեղակայման վայրեր

S.5.3.1 Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանք

Բարելավված SR14 Այլընտրանքային ուղին (Նկար S-6) կմեկնարկի Palmdale քաղաքից Spruce Court-ի մոտակայքում Միերա Մայրուղու (Sierra Highway) արևմտյան կողմում: Բարելավված SR14 Այլընտրանքային ուղին կանցնի Palmdale քաղաքի հարավով և այնուհետև կշարունակի արևմտյան ուղղությամբ մի շարք գետնուղիներով (թունելներով), վիադուկներով, և պարզապես վերգետնյա՝ մոտավորապես հետևյալ SR 14 ավտոմայրուղուն: Soledad Canyon ճանապարհը և Սանտա Կլարա գետը (Santa Clara River) հատելուց հետո, Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի ուղին կմտնի 12 մղոն երկարությամբ գետնուղի, որի առավելագույն խորությունն է մոտավորապես 2,080 ֆուտ⁶՝ շարունակելով հարավային ուղղությամբ ANF-ի և SGMNM տարածքով: Գետնուղու այդ հատվածի կառուցումը կիրականացվի գոյություն ունեցող Vulcan Mine տարածքով, որը կվերագնահատվի և վերականգնվի մի վիճակի՝ որով հնարավորի կլինի ավելի լավ պատկերացնել շրջապատող տեղագրությունը շինարարության սկզբում: Ավարտված Հարավային գետնուղու ելքը Vulcan Mine տարածքի մոտ տեղակայված կլինի ANF-ի, այդ թվում և SGMNM-ի տարածքում: Vulcan Mine-ի մոտ մտնելով գետնուղի՝ բարելավված SR14 Այլընտրանքային ուղին կանցնի ANF-ի և SGMNM-ի հատվածների տակով: Բարելավված SR14 Այլընտրանքային ուղին կշարունակի իր ճանապարհը Լոս Անջելես քաղաքի Sylmar թաղամասի տարածքի տակով, մինչև դուրս կգա գետնուղուց և կանցնի ուղու այն հատվածին, որը կառուցված է վերգետնյա (գետնի մակարդակով) Լոս Անջելեսի Pacoima թաղամասում: Այնուհետև ուղին կշարունակվի վերգետնյա, այնուհետև վիադուկով, և կանցնի ստորգետնյա Լոս Անջելեսի Sun Valley թաղամասով և Burbank քաղաքով՝ մինչև կհասնի Բըրբանքի Օդանավակայանի Կայարան (Burbank Airport Station):

Վիադուկ

Բարձրացված գնացքի գիծ, որը հաճախակի օգտագործվում է քաղաքային, անհարթ, կամ խորդուբորդ տեղանքում, կամ գետերի կամ առուների վրայով անցում կատարելու համար:

Վերգետնյա (հատակի մակարդակինճ

Նկարագրում է երկաթուղու կառուցված վերգետնյա հատվածը:

S.5.3.2 SR14A Կառուցման Այլընտրանք

SR14A Այլընտրանքային ուղին (Նկար S-7) կմեկնարկի Palmdale քաղաքից Spruce Court-ի մոտակայքում Sierra Highway-ի արևմտյան կողմում: East Avenue S-ից հարավ, բարելավված SR14 Այլընտրանքային ուղին կթեքվի դեպի արևելք և հարավ մոտավորապես 300 ֆուտ դեպի Ունա Լճի (Una Lake) արևելք: Ունա Լճից (Una Lake) հարավ, SR14A Այլընտրանքային ուղին կթեքվի դեպի արևմուտք, կհասի Metrolink-ի Antelope Valley-ի գիծը, Sierra Highway-ը, և Soledad Siphon-ը, և կշարունակի դեպի հարավ-արևմուտք՝ մտնելով գետնուղի մոտավորապես 0.5 մղոն դեպի հյուսիս-արևելք Sierra Highway -ի/Pearblossom Highway -ի խաչմերուկից: SR14A Այլընտրանքային ուղին այնուհետև կշարունակի դեպի արևմուտք մոտավորապես 13-մղոն երկարությամբ գետնուղով, մինչև գետնի մակերես դուրս գալը, մոտավորապես 0.75 մղոն դեպի Agua Dulce Canyon ճանապարհից արևելք: Ուղին անցումներ կկատարի հատակի մակերեսի և բարձրադիր հարթությունների միջև, սերտորեն զուգահեռելով SR 14 ուղուն մինչև մոտավոր 1 մղոն երկարությամբ գետնուղի մտնելը: Գետնուղուց անցում կատարելով մակերես՝ SR14A Այլընտրանքային ուղին կհամընկնի բարելավված SR14 Այլընտրանքային ուղու հետ Vulcan


⁶ Ծրագրի շինարարության ավարտից հետո, վթարային ելքի, սպասարկման և օդափոխության սարքավորումների համար կարող են տեղադրվել փոքր մշտական կառույցներ և հարակից էլեկտրաէներգիայի կայանքներ՝ ընտրված հորանցքներում: Տե՛ս Գլուխ 2-ը, Այլընտրանքները, հորանցքների առանձնահատկությունների հետագա քննարկման համար:

Mine-ի տարածքում: R14A Այլընտրանքային ուղու մնացած հատվածը՝ Vulcan Mine-ի տարածքից հարավ մինչև վերջ համընկնում է բարելաված SR14 ուղու հետ:



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021
 March 25, 2021

• Metrolink Station	HSR Alignment Profile	Anges National Forest
— Metrolink	At Grade	Magic Mountain Wilderness Areas
— Other HSR Project Section	At Grade Covered	San Gabriel Mountains National Monument
	Cut and Cover	
	Elevated / Aerial Structure	
	Retained Cut / Trench	
	Tunnel	



Նկար S-6 Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի ընդհանուր Քարտեզ



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021

March 25, 2021

- Metrolink Station
- Metrolink
- Other HSR Project Section
- HSR Alignment Profile
- At Grade
- At Grade Covered
- Cut and Cover
- Elevated / Aerial Structure
- Retained Cut / Trench
- Tunnel
- Angeles National Forest
- Magic Mountain Wilderness Areas
- San Gabriel Mountains National Monument

Նկար S-7 SR14A Կառուցման Այլընտրանքի ընդհանուր Քարտեզ

S.5.3.3 E1 Կառուցման Այլընտրանք

E1 Այլընտրանքային ուղին (Նկար S-8) կմեկնարկի Palmdale քաղաքից Spruce Court-ի մոտակայքում Sierra Highway-ի արևմտյան կողմում: E1 Այլընտրանքային ուղին կշարունակի դեպի հարավ Palmdale քաղաքով և կհամընկնի բարելավված SR14 ուղու հետ մինչև East Avenue S-ի և Sierra Highway-ի խաչմերուկից հյուսիս: Կալիֆորնիայի ջրատարը (California Aqueduct) հատելուց հետո, E1 ուղին կմտնի գետնուղի մոտավորապես 0.6 մղոն հյուսիս ANF-ից և SGMNM-ից: Գետնուղին կշարունակվի դեպի հարավ-արևմուտք մոտավորապես 1.6 մղոն երկարությամբ և կավարտվի Aliso Canyon-ում՝ վիադուկով հատելով Սանտա Կլարա Գետի (Santa Clara River) վտակը: Այդ հատումից հետո, E1 Այլընտրանքը ուղին կմտնի երկրորդ գետնուղի՝ շարունակելով ճանապարհը դեպի հարավ-արևմուտք: Այս գետնուղին կլինի 21.7 մղոն երկարությամբ, որի առավելագույն խորությունը կհասնի 2,063 ֆուտի⁷, թեքվելով դեպի հարավ և հարավ-արևմուտք, ANF-ով և SGMNM-ով անցնելուց: Շարժվելով դեպի հարավ՝ այն հատվածից, որտեղ գետնուղին դուրս է գալիս ANF և SGMNM սահմաններից, E1 ուղին կհետևի բարելավված SR14 ուղու հետ նույնական ճանապարհով: E1 ուղին կանցնի ստորգետնյա ճանապարհով Lnu Անջելեսի Sylmar-ի թաղամասով, և դուրս կգա այդ գետնուղուց Lnu Անջելեսի Pacoima թաղամասում: Այնուհետև այն կշարունակվի դեպի հարավ-արևելք վերգետնյա, վիադուկով, և ստորգետնյա ճանապարհով Lnu Անջելես քաղաքի Sun Valley թաղամասով և Burbank քաղաքով մինչև կհասնի Բըրբանքի Օդանավակայանի Կայարան (Burbank Airport Station):

S.5.3.4 E1A Կառուցման Այլընտրանք



E1A Այլընտրանքային ուղին (Նկար S-9) կշեղվի E1 Այլընտրանքային ուղուց դեպի East Avenue S-ից հարավ, հետևելով ավելի արևլյան ճանապարհով մոտավորապես Ունա Լճից (Una Lake) ֆուտ դեպի արևելք: Ի հակառակ E1 Այլընտրանքային ուղուն, E1A Այլընտրանքային ուղին կհատի Կալիֆորնիայի Ջրատարը (California Aqueduct) բարձրադիր կառույցներով, մինչև կմտնի գետնուղի մոտավորապես 2,600 ոտնաչափի դեպի հարավ-արևմուտք Sierra Highway-ի/Pearblossom Highway-ի խաչմերուկից: Մոտավորապես 1,7 մղոն երկարությամբ ստորգետնյա ճանապարհով շարունակելուց հետո, E1A Այլընտրանքային ուղին կանցնի վերգետնյա հատված մոտավորապես 350 ֆուտ Vincent View Road-ից դեպի հյուսիս: Անմիջապես Vincent View Road-ից դեպի հարավ՝ E1A Այլընտրանքային ուղին կհամընկնի E1 ուղու հետ: Vincent View ճանապարհից հարավ E1A ուղու մնացած հատվածը կհամընկնի E1 ուղու հատվածի հետ:

⁷ Ծրագրի շինարարության ավարտից հետո, վթարային ելքի, սպասարկման և օդափոխության սարքավորումների համար կարող են տեղադրվել փոքր մշտական կառույցներ և հարակից էլեկտրաէներգիայի կայանքներ՝ ընտրված հորանցքներում: Տե՛ս Գլուխ 2-ը, Այլընտրանքները, հորանցքների առանձնահատկությունների հետագա քննարկման համար:



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021

March 25, 2021




Նկար S-8 E1 Կառուցման Այլընտրանքի ընդհանուր Քարտեզ



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021
 March 25, 2021

• Metrolink Station	HSR Alignment Profile	Anges National Forest
—+— Metrolink	At Grade	Magic Mountain Wilderness Areas
— Other HSR Project Section	At Grade Covered	San Gabriel Mountains National Monument
	Cut and Cover	
	Elevated / Aerial Structure	
	Retained Cut / Trench	
	Tunnel	



Նկար S-9 E1A Կառուցման Այլընտրանքի ընդհանուր Քարտեզ

S.5.3.5 E2 Կառուցման Այլընտրանք

E2 Այլընտրանքային ուղու հյուսիսային հատվածի 18 մղոնը նույնը կլինի E1 Այլընտրանքային ուղու հետ: E2 Այլընտրանքային ուղին (Նկար S-10) կմեկնարկի Palmdale քաղաքից, կհատի Կալիֆորնիայի Ջրատարը (California Aqueduct), կմտնի գետնուղի մոտավորապես 0.6 մղոն ANF-ից և SGMNM-ից դեպի հյուսիս: Այս գետնուղին կշարունակվի դեպի հարավ-արևմուտք մոտավորապես 1,6 մղոն երկարությամբ և կավարտվի Aliso Canyon-ում վիադուկով՝ հատելով Սանտա Կլարիտա գետի (Santa Clara River) վտակը: Այդ հատումից հետո, E2 Այլընտրանքային ուղին կմտնի երկրորդ գետնուղի՝ շարունակելով ճանապարհը դեպի հարավ-արևմուտք: Մոտավորապես 5 մղոն շարունակելուց հետո, E1 ուղու նույն ճանապարհով, E2 ուղին կտեղափոխվի ավելի արևմտյան ուղղությունով՝ ANF-ով և SGMNM-ով: Երկրորդ գետնուղու երկարությունը կլինի 16.6 մղոն և նրա առավելագույն խորությունը կհասնի 2,670 ֆուտի՝ թեքվելով դեպի հարավ-հարավարևմուտք՝ հատելով ANF-ը և SGMNM-ը: E2 ուղին դուրս կգա այս գետնուղուց բարձունքում՝ Lake View Terrace թաղամասից վերև: E2 ուղին այնուհետև վիադուկով կհատի Big Tujunga Wash-ը և կմտնի գետնուղի, որը կտանի դեպի Բըրբանքի Օդանավակայանի Կայարան (Burbank Airport Station):



S.5.3.6 E2A Կառուցման Այլընտրանք

E2A Այլընտրանքային ուղին (Նկար S-11) կհետևի նույն ճանապարհով ինչ E1A ուղին դեպի Vincent View Road-ը, որտեղից այն կհետևի E2 Այլընտրանքային ուղով: E2A Այլընտրանքային ուղու մնացած հատվածը կհամընկնի E2 ուղու հետ, Vincent View Road-ից դեպի հարավ, ANF-ի տարածքի տակով, դեպի San Fernando Valley, և դեպի Կենտրոնական Ենթահատվածի (Central Subsection) հարավային վերջնակետ:



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021

March 25, 2021





Նկար S-10 E2 Կառուցման Այլընտրանքի ընդհանուր Քարտեզ



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2021

March 25, 2021



Նկար S-11 E2A Կառուցման Այլընտրանքի ընդհանուր Քարտեզ

S.5.4 Էլեկտրական փոխկապակցումներ և ենթակառուցվածք

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը կներառի էլեկտրահաղորդակցման լարեր դեպի մի շարք քարշային կայաններ (traction power substations (TPSS)), որոնք տեղակայված են իրարից մոտավորապես 30 մղոն հեռավորության վրա HSR-ի միջանցքի երկայնքով: Յուրաքանչյուր քարշային ենթակայանը կլինի մոտավորապես 32,000 քառակուսի ֆուտ (200 ֆուտը 160 ֆուտի վրա): Անջատիչ և գուգորդող կայանները կհավասարակշռեն էլեկտրական բեռը գծերի միջև և արտակարգ իրավիճակների դեպքում կմիացնեն կամ կանջատեն հոսանքը որևէ գծից: Անջատիչ կայանները անհրաժեշտ կլինեն իրարից մոտավորապես 15 մղոն հեռավորության վրա՝ քարշային կայանների միջանկյալ հատվածում: Զուգորդող կայանները անհրաժեշտ կլինեն իրարից մոտավորապես 5 մղոն հեռավորության վրա՝ Կառուցման Այլընտրանքային ուղու երկայնքով՝ քարշային կայանների և անջատիչ կայանների միջև. գուգորդող կայանները տեղակայված կլինեն ստորգետնյա հատվածներում՝ երբ գիծը անցնում է գետնուղիներով: Զուգորդող կայանները պետք է մոտավորապես լինեն 9,600 քառակուսի ֆուտ (120 ֆուտը 80 ֆուտի վրա): Յուրաքանչյուր կայան կներառի մոտավորապես 450 քառակուսի ֆուտ (18 ֆուտը 25 ֆուտի վրա) տարածքով վերահսկիչ սենյակ: Նախատեսվում է, որ մշտական վթարային պահուստային գեներատորները կտեղակայվեն ուղևորների կայարաններում և կայանման/պահեստավորման տերմինալներում: Էլեկտրական փոխկապակցումները և ենթակառուցվածքը ներառված են Կառուցման Այլընտրանքների գծագրում, որը գնահատվել է սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում: Էլեկտրական փոխկապակցման և ենթակառուցվածքի վերջնական տեղակայումները կընտրվեն այս EIR/EIS փաստաթղթի նախագծում գնահատված տարբերակներից՝ նախընտրած տարբերակի վերջնական նախագծման ժամանակ՝ Ղեկավար Մարմնի կողմից ROD և NOD փաստաթղթերի թողարկումից հետո:

S.5.5 Հորանցքներ և Միջանկյալ պատուհաններ

Վթարային Սրահ (Fault Chamber)

Ընդարձակ, ստորգետնյա սրահ, որը կառուցվում է գնացքները երկրաշարժերից կամ վթարներից պաշտպանելու նպատակով:

Յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի համար նշմարվել են մի քանի հավանական հորանցքների տեղակայման վայրեր: Հորանցքները՝ դրանք մուտքի հորաններ են, որոնք հեշտացնում են ստորգետնյա գետնուղիների կառուցումը և սպասարկումը: Հորանցքը կարող է նաև հեշտացնել վթարային սրահների և նախագծով պահանջվող նման այլ օբյեկտների կառուցումը, որոնք լրացուցիչ անվտանգություն կապահովեն HSR-ի շահագործման և սպասարկման համար՝ վտանգավոր գոտիների հարևանությամբ գտնվելիս կամ դրանք հատելու ժամանակ: Շինարարության ավարտից հետո, վթարային ելքի, սպասարկման և օդափոխության սարքավորումների համար փոքր մշտական կառույցներ կտեղադրվեն հորանցքների տեղակայման վայրերում:

Յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի համար նշմարվել են նաև մի քանի միջանկյալ պատուհանների տեղակայման վայրեր: Միջանկյալ պատուհանը՝ դա ուղղահայաց հորան է, որը կարող է ապահովել մուտք դեպի գետնուղու շինարարարակ, ինչպես նաև մատակարարել ջուր, հոսանք, օդափոխություն, և անհրաժեշտ այլ աջակցություն: Շինարարության ավարտից հետո, մշտական մուտքի համար անհրաժեշտ փոքրիկ կառույցը, և ամենայն հավանականությամբ օդափոխման սարքավորումը կմնան մակերեսին:

Սույն EIR/EIS փաստաթղթի նախագծում գնահատված են հորանցքի և միջանկյալ պատուհանի բազմազան տարբերակներ յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի համար, որոնք նկարագրված են ստորև Աղյուսակ S-2 –ում: Հորանցքի և միջանկյալ պատուհանի վերջնական տեղակայումները կընտրվեն այս EIR/EIS փաստաթղթի նախագծում գնահատված

տարբերակներից՝ Նախընտրած տարբերակի վերջնական նախագծման ժամանակ՝ Ղեկավար Մարմնի կողմից ROD և NOD փաստաթղթերի թողարկումից հետո:

Աղյուսակ S-2՝ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Կառուցման Այլընտրանքային ուղիների երկայնքով Հորանցքի և Միջանկյալ Պատուհանի Տարբերակներ

Ուղու անվանումը	Գտնվելու վայր	Կառուցման Այլընտրանք
Հորանցք		
SR14-A1	Տեղակայված ANF-ում Little Tujunga Canyon Road-ի երկայնքով	Բարելավված SR14, SR14A
SR14-A2	Տեղակայված Pacoima Dam-ից անմիջապես դեպի հարավ, դուրս կգա մակերես Բարելավված SR14 ուղուց դեպի արևմուտք և կմիանա Gavina Avenue-ին	Բարելավված SR14, SR14A
SR14-A3	Տեղակայված Pacoima Dam-ից անմիջապես դեպի հարավ, դուրս կգա մակերես Բարելավված SR14 ուղուց դեպի արևելք և կմիանա Wallabi Avenue-ին	Բարելավված SR14, SR14A
E1-A1	Տեղակայված Little Tujunga Canyon Road-ի երկայնքով, ANF-ում: Կձգվի դեպի արևելք ստորգետնյա քարանձավից մինչև CSA Little Tujunga Canyon Road-ից հյուսիս:	E1, E1A
E1-A2	Տեղակայված Little Tujunga Canyon Road-ի երկայնքով, ANF-ում: Կձգվի դեպի արևմուտք ստորգետնյա քարանձավից մինչև CSA Little Tujunga Canyon Road-ի երկայնքով	E1, E1A
E2-A1	Միանում է Little Tujunga Canyon Road-ին ANF-ում, ձգվում է դեպի արևմուտք ստորգետնյա քարանձավից մինչև ժամանակավոր CSA մոտավորապես 0.4 մղոն Gold Creek Road-ից հյուսիսում գտնվող տնամերձ տարածքում	E2, E2A
E2-A2	Միանում է Little Tujunga Canyon Road-ին ANF-ում, ձգվում է դեպի արևմուտք ստորգետնյա քարանձավից մինչև ժամանակավոր CSA Gold Creek Road-ի երկայնքով գտնվող տնամերձ տարածքում	E2, E2A

Ուղու անվանումը	Գտնվելու վայր	Կառուցման Այլընտրանք
Միջանկյալ պատուհան		
SR14-W1	Տեղակայված անմիջապես I-210/SR 118 հանգույցից հյուսիս	Բարելավված SR14, SR14A
SR14-W2	Տեղակայված անմիջապես I-210/SR 118 հանգույցից հարավ	Բարելավված SR14, SR14A
E1-W1	Տեղակայված Arrastre Canyon-ից հյուսիս, անմիջապես ANF սահմանագծից դուրս	E1, E1A
E1-W2a	Տեղակայված անմիջապես I-210 և SR 118 ավտոմայրուղիների խաչմերուկներից հյուսիս	E1, E1A
E1-W2b3	Տեղակայված անմիջապես I-210 և SR 118 ավտոմայրուղիների խաչմերուկներից հարավ	E1, E1A
E2-W1	Տեղակայված անմիջապես ANF-ից դուրս, Arrastre Canyon-ից հյուսիս	E2, E2A
E2-W2	Տեղակայված Sun Valley-ում CalMat Mine-ի ներկայիս տարածքում	E2, E2A

ANF = Անջելեսի Ազգային Անտառ (Angeles National Forest); CSA = Շինհրապարակ (construction staging area); I- = Միջնահանգային (Interstate); SR = Նահանգի Երթուղի (State Route)

S.5.6 Կայարանի Տարածքի Նախագծում

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը կներառի կայարան Burbank քաղաքում (Նկար S-12), որը նախագծված կլինի այնպես, որպեսզի հնարավոր լինի օպտիմալացնել կապը տեղական տարանցման, օդանավակայանների, մայրուղիների, ինչպես նաև հեծանվային և հետիոտնային ցանցերի հետ: HSR կայարանները կներառեն հետևյալը՝

- Ուղևորների տախտակամածեր
- Կայարանային շենք՝ տոմսարկղով, սպասասարահներով, ուղևորների հարմարություններով, վարչակազմի և աշխատակիցների տարածքներով, ուղեբեռի և բեռնափոխադրման ծառայություններով
- Կարճաժամկետ և երկարաժամկետ ավտոկայանատեղի
- Ուղևորների նստեցման և իջեցման գոտիներ
- Մոտոցիկլետների/սկուտերների կայանատեղի
- Հեծանիվների կայանատեղի
- Սպասասարահ, ինչպես նաև տաքսիների և երթուղային ավտոբուսների հերթի տարածք
- Հետիոտների անցուղիների միացումներ

S.5.7 Բըրբանքի Օդանավակայանի Կայարան (Burbank Airport Station)

Բըրբանքի Օդանավակայանի Կայարանը (Burbank Airport Station), որը տեղակայված է Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի հարավային կետում, նույնպես գնահատված է որպես Burbank-ից Los Angeles Ծրագրի Հատվածի մաս: Տե՛ս Գլուխ 2, Բաժին 2.5.2.2, Այլընտրանքներ, Բըրբանքի Օդանավակայանի Կայարանի (Burbank Airport Station) տարածքի նկարագրության համար, որը հանդիսանում է համընկնող օդակ (ընդհանուր տարր) HSR Ծրագրի եկրու Հատվածների միջև: Burbank-ից Los Angeles Ծրագրի Հատվածի վերջնական EIR/EIS փաստաթուղթը թողարկվել է 2021թ-ի նոյեմբերի 5-ին, և Ղեկավար Մարմնի Խորհուրդը 2022թ-ի հունվարի 20-ին հաստատել է Burbank-ից Los Angeles Ծրագրի Հատվածի Նախընտրելի Տարբերակը, այդ թվում Բըրբանքի Օդանավակայանի Կայարանը (Burbank Airport Station): Սույն փաստաթղթում ներառված Բըրբանքի Օդանավակայանի Կայարանի (Burbank Airport Station) վերաբերյալ տեղեկատվությունը կրում է միայն տեղեկատվական բնույթ և հղման համար է:

Բըրբանքի Օդանավակայանի Կայարանը (Burbank Airport Station) (Նկար S-12) տեղակայված կլինի Բըրբանքի Հոլիվուդ Օդանավակայանից (Burbank Hollywood Airport) արևելք: Այն հյուսիսից սահմանակից կլինի San Fernando Road-ով, արևելքից Hollywood Way-ով, և դեպի հարավ Winona Avenue-ով: Օդանավակայանի օբյեկտները զբաղեցնում են այս առաջարկվող կայարանի դեպի հարավ ընկած տարածքի մեծ մասը, արդյունաբերական և թեթև արդյունաբերական նշանակման հողերը զբաղեցնում են կայարանից դեպի արևելք ընկած հատվածները, և կայարանի տարածքից հյուսիս տեղակայված են բնակելի հողատարածքներ: Կայարանը գտնվում է I-5 ավտոմայրուղու մոտակայքում, որը գտնվում է մոտավորապես 0.25 մղոն դեպի հյուսիս:

Բըրբանքի Օդանավակայանի Կայարանում (Burbank Airport Station) HSR-ի գծերը և գնացքի նստեցման հարթակները կլինեն ստորգետնյա: Վերգետնյա կառույցները կներառեն Կայարանի շենքը (տոմսարկղի, ուղևորների սպասարահի, զուգարանների և այլ առնչվող հարմարությունների տեղակայման համար), մասնավոր ավտոմեքենաների համար ուղևորների նստեցման/իջեցման տարածքները, ավտոբուսների և երթուղայինների տարանցիկ Կենտրոնները, և վերգետնյա կայանատեղի: Վերգետնյա կառույցները կզբաղեցնեն մոտավորապես 65 ակր, և կապահովեն մոտավորապես 3,000 վերգետնյա կայանատեղի:

S.6 Ազդեցություններից Խուսափումը և դրանք Նվազագույնին Հասցնելու Միջոցառումները

Ղեկավար Մարմինը պարտավորվում է իրագործել նախագծային միջոցառումներ՝ հնարավորինս խուսափելու և նվազագույնին հասցնելու նահանգային HSR համակարգի ազդեցությունները՝ 1-ին Փուլի Բնապահպանական փաստաթղթերի համաձայն, այդ թվում 2005 Նահանգային Ծրագրի EIR/EIS Փաստաթուղթը, 2008 Bay Area-ից Central Valley Ծրագրի EIR/EIS Փաստաթուղթը, և 2012 Մասնակի Վերանայված Վերջնական Ծրագրի EIR Փաստաթուղթը (2012 Partially Revised Final Program EIR): Ազդեցություններից Խուսափելու և դրանք Նվազագույնին Հասցնելու Միջոցառումները (Impact Avoidance and Minimization Features (IAMFs)) նկարագրված են Հավելված 2-E -ում (Appendix 2-E), և Կառուցման Այլընտրանքային Տարբերակներից յուրաքանչյուրի վերլուծության մեջ ներառված են որպես կիրառելի միջոցներ: Ստորև Աղյուսակ S-3 -ում թվարկված են IAMF միջոցառումները, որոնք կազմվելու են նախագծի մասը: Ղեկավար Մարմինը կիրառործի այդ միջոցառումները՝ ծրագրի նախագծման և շինարարության ընթացքում ըստ պատշաճի, ծրագրի համապատասխան հատվածներում՝ ազդեցություններից խուսափելու և դրանք նվազագույնին հասցնելու համար:

Ծրագրի նախագծումը ներառում է նկատառումներ՝ խուսափելու և նվազագույնին հասցնելու շրջակա միջավայրի և համայնքի վրա հնարավոր ազդեցությունները, հետևյալ լրացուցիչ միջոցառումների ընդգրկման միջոցով՝

- Հետևել գոյություն ունեցող տրանսպորտային միջանցքներով
- Ընգրկել ջրային անցումները
- Համատեղ օգտագործել արտահերթ իրավունքի ճանապարհները
- Ներառել հատվածներ վայրի կենդանիների շարժման համար
- Ներառել ավելի նեղ մակերեսներ՝ բարձրացված կամ պահպանված պրոֆիլի կտրվածքով
- Հնարավորինս խուսափել զգայուն բնապահպանական ռեսուրսների ներգրավումից

Աղյուսակ S-3 Ազդեցություններից Խուսափում և դրանք նվազագույնին հասցնելու միջոցառումներ (IAMF)

IAMF Համար	IAMF Վերնագիր
Տրանսպորտ	
TR-IAMF#1	Հանրային ճանապարհների պաշտպանություն շինարարության ընթացքում
TR-IAMF#2	Շինարարական Տրանսպորտային Պլան
TR-IAMF#3	Փողոցից դուրս կայանում շինարարական տրանսպորտային միջոցների համար
TR-IAMF#4	Հետիոտների մուտքի հասանելիության պահպանում
TR-IAMF#5	Հեծանիվների մուտքի հասանելիության պահպանում
TR-IAMF#6	Շինարարության ժամերի սահմանափակում
TR-IAMF#7	Շինարարական բեռնատարների երթուղիներ
TR-IAMF#8	Շինարարություն հատուկ միջոցառումների ժամանակ
TR-IAMF#9	Բեռնատար և մարդատար երթուղու պաշտպանություն շինարարության ընթացքում
TR-IAMF#11	Տարանցիկ երթևեկության հասանելիության պահպանում
TR-IAMF#12	Հետիոտների և հեծանվորդների անվտանգություն
Օդի որակ և կլիմայի գլոբալ փոփոխություն	
AQ-IAMF#1	Փոշու Արտանետումներ
AQ-IAMF#2	Ծածկույթների ընտրություն
AQ-IAMF#3	Վերականգնվող վառելիք (դիզել)
AQ-IAMF#4	Նվազեցնել շինարարական սարքավորումներից արտանետվող գազերի արտանետումները՝ չափորոշիչների համաձայն
AQ-IAMF#5	Նվազեցնել ճանապարհային շինարարական սարքավորումներից արտանետվող գազերի արտանետումները՝ չափորոշիչների համաձայն
AQ-IAMF#6	Նվազեցնել բետոնի գործարանների հավանական ազդեցությունները
Աղմուկ և Թրթռումներ	

IAMF Համար	IAMF Վերնագիր
NV-IAMF#1	Աղմուկ և թրթռումներ (վիբրացիաներ)
Էլեկտրամագնիսական միջամտություն և էլեկտրամագնիսական դաշտեր	
EMI/EMF-IAMF#1	Հարակից երկաթուղիների միջամտության կանխարգելում
EMI/EMF-IAMF#2	Էլեկտրամագնիսական դաշտի/էլեկտրամագնիսական միջամտության վերահսկողություն
Հանրային կոմունալ ծառայություններ և Էներգիա	
PUE-IAMF#1	Նախագծային միջոցառումներ
PUE-IAMF#2	Ոռոգման կառույցների տեղափոխում
PUE-IAMF#3	Հանրային ծանուցումներ
PUE-IAMF#4	Կոմունալ ծառայություններ և Էներգիա
Կենսաբանական ռեսուրսներ	
BIO-IAMF#1	Նշանակել Նախագծի Կենսաբան, Նշանակված կենսաբաններ, ըստ հատուկ տեսակների կենսաբանական ցուցասարքեր (մոնիտորներ) և ընդհանուր կենսաբանական ցուցասարքեր (մոնիտորներ)
BIO-IAMF#2	Հեշտացնել Գործակալությունների մուտքը
BIO-IAMF#3	Պատրաստել Աշխատողների Բնապահպանական Իրազեկման Ծրագրի (WEAP) վերապատրաստման նյութեր և իրականացնել Շինարարական ընթացքի WEAP վերապատրաստում
BIO-IAMF#4	Իրականացնել Շահագործման և Սպասարկման ընթացքի WEAP վերապատրաստում
BIO-IAMF#5	Պատրաստել և իրագործել Կենսաբանական Ռեսուրսների Կառավարման Ծրագիր
BIO-IAMF#6	Հաստատել արհեստական թելի օգտագործման (Monofilament) սահմանափակումները
BIO-IAMF#7	Կանխել թակարդումը շինարարական նյութերում և հողային աշխատանքներում
BIO-IAMF#8	Սահմանազատել սարքավորումների տեղակայման տարածքները և երթևեկության ուղիները
BIO-IAMF#9	Ուտիլիզացնել շինարարական աղբը և թափոնները
BIO-IAMF#10	Մաքրել շինարարական սարքավորումները
BIO-IAMF#11	Սպասարկել շինարարական հրապարակները

IAMF Համար	IAMF Վերնագիր
BIO-IAMF#12	Ծրագրի նախագծման մեջ նախատեսել թռչունների անվտանգությունը
Հիդրոլոգիա և ջրային ռեսուրսներ	
HYD-IAMF#1	Հեղեղաջրերի կառավարում
HYD-IAMF#2	Պաշտպանություն ջրհեղեղից
HYD-IAMF#3	Պատրաստել և իրագործել Շինարարական հեղեղաջրերի աղտոտման կանխարգելման ծրագիր
HYD-IAMF#4	Պատրաստել և իրագործել Արդյունաբերական հեղեղաջրերի աղտոտման կանխարգելման ծրագիր
HYD-IAMF#5	Գետնուղու (թունելի) Հորատման մեքենայի կառուցվածքը և հատկանիշները
HYD-IAMF#6	Գետնուղու երեսապատման համակարգեր
HYD-IAMF#7	Տրորում (հարթեցում)
Երկրաբանական ռեսուրսներ	
GEO-IAMF#1	Երկրաբանական վտանգներ
GEO-IAMF#2	Լանջերի վերահսկողություն
GEO-IAMF#3	Գազի վերահսկողություն
GEO-IAMF#4	Պատմական և լքված հանքեր
GEO-IAMF#5	Վտանգավոր հանքանյութեր
GEO-IAMF#6	Հողի ճաքերի վաղ նախազգուշացման համակարգեր
GEO-IAMF#7	Գնահատում և կանխատեսում հողի մեծ սեյսմիկ ցնցումների դեպքերի համար
GEO-IAMF#8	Երկրաշարժի ժամանակ աշխատանքների դադարեցում
GEO-IAMF#9	Հողի նստման վերահսկողություն
GEO-IAMF#10	Երկրաբանություն և հողեր
GEO-IAMF#11	Ներգրավել որակավորված հնետաբանական ռեսուրսների մասնագետի
GEO-IAMF#12	Կատարել նախագծի վերջնական վերանայում և գործարկիչների գնահատում
GEO-IAMF#13	Պատրաստել և իրագործել Հնետաբանական ռեսուրսների վերահսկողության և ազդեցությունների մեղմացման Ծրագիր (Paleontological Resources Monitoring և Mitigation Plan (PRMMP))
GEO-IAMF#14	Իրականացնել WEAP վերապատրաստում Հնետաբանական ռեսուրսների մասով
GEO-IAMF#15	Հնետաբանական ռեսուրսների հայտնաբերման դեպքում՝ կանգնեցնել շինարարությունը, գնահատել և կատարել համապատասխան մշակում


IAMF Համար	IAMF Վերնագիր
Վտանգավոր նյութեր և թափոններ	
HMW-IAMF#1	1-ին Փուլով Գույքի ձեռք բերում և 2-րդ Փուլով Բնապահպանական տեղանքի գնահատում
HMW-IAMF#2	Աղբավայր (Landfill)
HMW-IAMF#3	Աշխատանքային խոչընդոտներ
HMW-IAMF#4	Զփաստաթղթավորված աղտոտում
HMW-IAMF#5	Քանդման աշխատանքների ծրագիր
HMW-IAMF#6	Արտահոսքի կանխարգելում
HMW-IAMF#7	Նյութերի տեղափոխություն
HMW-IAMF#8	Թույլտվության պայմաններ
HMW-IAMF#9	Բնապահպանական Կառավարման Համակարգ
HMW-IAMF#10	Վտանգավոր Նյութերի Ծրագիր
Ապահովություն և Անվտանգություն	
SS-IAMF#1	Շինարարության անվտանգության տրանսպորտային կառավարման ծրագիր (Construction Safety Transport Management Plan)
SS-IAMF#2	Ապահովության և անվտանգության կառավարման ծրագիր (Safety and Security Management Plan)
SS-IAMF#3	Վտանգի վերլուծություն
SS-IAMF#4	Նավթի և Գազի Հորեր
SS-IAMF#5	Ավիացիոն անվտանգություն
SS-IAMF#6	Բըրբանքի Հոլիվուդ Օդանավակայնի (Hollywood Burbank Airport) շահագրգիռ կողմերի համակարգումը
Սոցիոտնտեսություն և Համայնքներ	
SOCIO-IAMF#1	Շինարարության կառավարման ծրագիր (Construction Management Plan)
SOCIO-IAMF#2	Միասնական վերաբնակեցման օգնության և սեփական գույքի ձեռք բերման քաղաքականությունների մասին օրենքի (Uniform Relocation Assistance and Real Property Acquisition Policies Act) համապատասխանություն
SOCIO-IAMF#3	Վերաբնակեցման հետևանքների մեղմացման ծրագիր (Relocation Mitigation Plan)
Հողի օգտագործում և զարգացում, կայարանների պլանավորում	
LU-IAMF#1	HSR Կայարանների տարածքի զարգացում. ընդհանուր դրույթներ և ուղեցույցներ

IAMF Համար	IAMF Վերնագիր
LU-IAMF#2	Կայարանների տարածքի պլանավորում և տեղական գործակալությունների հետ համագործակցություն
LU-IAMF#3	Շինարարության ընթացքում ժամանակավորապես օգտագործվող հողերի վերականգնում
Գյուղատնտեսական հողատարածքներ և անտառային հողեր	
AG-IAMF#1	Ժամանակավոր շինհրապարակների համար օգտագործված կարևոր գյուղատնտեսական հողերի վերականգնում
AG-IAMF#2	Թույլտվության տրամադրման աջակցություն
AG-IAMF#3	Գյուղատնտեսական հողերի համախմբման ծրագիր (FarmLand Consolidation Program)
AG-IAMF#4	Ծանուցում գյուղատնտեսական գույքի սեփականատերերին
AG-IAMF#5	Անասունների և սարքավորումների ժամանակավոր տեղափոխում
AG-IAMF#6	Սարքավորումների անցումներ
Զբոսայգիներ, հանգստյան գոտիներ և բացօթյա տարածքներ	
PK-IAMF#1	Զբոսայգիներ, հանգստյան գոտիներ, և բացօթյա տարածքներ
Էսթետիկա և արտաքին տեսքի որակ	
AVQ-IAMF#1	Էսթետիկ տարբերակներ
AVQ-IAMF#2	Էսթետիկ վերանայման գործընթաց
Մշակութային ռեսուրսներ	
CUL-IAMF#1	Աշխարհատարածական տվյալների շերտը և հնէաբանական զգայունության քարտեզ (Geospatial Data Layer and Archaeological Sensitivity Map)
CUL-IAMF#2	WEAP Վերապատրաստման դասընթացներ
CUL-IAMF#3	Մշակութային ռեսուրսների նախաշինարարական հետազոտություններ
CUL-IAMF#5	Հնագիտական վերահսկողության պլան և իրականացում
CUL-IAMF#6	Նախաշինարարական պայմանների գնահատում, պատմական կառույցների պաշտպանության ծրագիր, և անգգուշությամբ առաջացած վնասի վերականգնում
CUL-IAMF#7	Շինարարության շրջակա միջավայրի վերահսկողության ծրագիր (Built Environment Monitoring Plan)
CUL-IAMF#8	Իրականացնել պաշտպանության և/կամ կայունացման միջոցառումներ

Աղբյուր՝ Հավելված 2-E, Ազդեցություններից խուսափում և դրանք նվազագույնին հասցնելու միջոցառումներ Ղեկավար Մարմին (Authority) = Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմին (California High-Speed Rail Authority)

HSR = Արագընթաց երկաթուղի (high-speed rail)

IAMF = Ազդեցություններից խուսափում և դրանք նվազագույնին հասցնելու միջոցառումներ (Impacts avoidance and



Burbank Station General Site Plan
 Source: PlaceWorks
 Date: May 2, 2019

Նկար S-12 Էրբբանքի Օդանավակայանի Առաջարկվող Կայարան (Burbank Airport Station)

S.7 «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի ազդեցությունները

Գնահատելով հետագայի պայմանները՝ «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակը ենթադրում է, որ Կալիֆորնիայի HSR Համակարգը չի կառուցվելու, սակայն այն ծրագրում և ֆինանսական միջոցներ է նախատեսում միջբաղադրանքային տրանսպորտային համակարգի (մայրուղիներ, երկաթուղի, տարանցիկ երթուղիներ) բարելավման համար, ինչպես նաև ողջամտորեն կանխատեսելի տեղական զարգացման ծրագիրը (արդեն բացահայտված ֆինանսական միջոցներով) կմշակվեն ինչպես նախատեսված է մինչև 2040թ.: **Error! Reference source not found.** Բաժնում նկարագրված է «Առանց Ծրագրի Այլընտրանքի» Տարբերակի Պայմանները:

Քանի որ «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի ներքո դիտարկվող որոշ ապագա ծրագրեր դեռևս գտնվում են վաղ պլանավորման գործընթացում, միշտ չէ, որ կարելի է որոշել դրանց հատկանշական ազդեցությունները, սակայն յուրաքանչյուր ծրագիր կպահանջի բնապահպանական վերանայում CEQA-ի պահանջների համաձայն: Դաշնային ֆինանսավորում կամ հաստատում սպասող ծրագրերը, նույնպես պետք է անցնեն NEPA-պահանջներին համապատասխանող հատուկ վերլուծություն: Ստորև նկարագրված են այն բնապահպանական ռեսուրսները, որոնք ազդեցություն կկրեն «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի դեպքում՝

Ավտոմեքենայի անցած մղոնները (VMT)

VMT --ն դա սահմանված տարածքում և սահմանված ժամանակահատվածում մեքենայի կողմից անցած մղոնների տվյալն է, որը հաճախակի օգտագործվում է վարելու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա որոշելու համար, ինչպես օրինակ Ջերմոցային գազերի (GHG) և օդի աղտոտիչների արտանետումները:

- **Տրանսպորտ.** «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի պայմանները հիմնված են Տարածաշրջանային ուղևորությունների պահանջարկի կանխատեսման մոդելների⁸ վրա, որը ենթադրում է ուղևորությունների պատճառ հանդիսացող նոր հողօգտագործման նախագծերի իրականացում (այսինքն, բնակելի, կոմերցիոն կամ արդյունաբերական զարգացումներ) ինչպես նաև թողունակությունը մեծացնող նախագծեր (այսինքն, մայրուղիների ընդլայնում և նոր ճանապարհների կառուցում) Palmdale-ից Burbank շրջանում: Նման ծրագրերը կխրախուսեն խիտ կառուցապատում և ավելի մեծ ներդրումներ տեղական տարանցման մոդելներում, որպես մեքենաներով ուղևորությունների կրճատման միջոց: Այնուամենայնիվ, անգամ այս բարելավումներով,

⁸ Տարածաշրջանային ուղևորությունների պահանջարկի կանխատեսման մոդելները (Regional Travel Demand Forecasting Models) ստեղծվում են Հարավային Կալիֆորնիայի Կառավարությունների Ասոցիացիայի (Southern California Association of Governments) կողմից:

տարածաշրջանի աճող բնակչությունը շարունակելու է մեծացնել ճանապարհների ծանրաբեռնվածությունը՝ հանգեցնելով VMT-ի ընդհանուր աճին:

- Օդի որակ և կլիմայի գոյալ փոփոխություն.** «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակում օդի որակի վերաբերյալ ենթադրությունների գնահատմամբ՝ ցնդող օրգանական միացությունների, ածխածնի մոնօքսիդի, և ազոտի օքսիդների ընդհանուր արտանետումները կնվազեն 2015թ-ից մինչև 2040թ, քանի որ ավելի նոր, արտանետման ցածր մակարդակ ունեցող մեքենաները փոխարինում են հին, արտանետման ավելի բարձր մակարդակ ունեցող մեքենաներին: Այս նվազումները կփոխհատուցեն VMT-ի աճը, ինչը պայմանավորված է Լոս Անջելեսի շրջանում բնակչության աճի հետ: Ի հակառակ, ծծմբի երկօքսիդի, պինդ մասնիկների 10 միկրոնից պակաս կամ 2,5 միկրոն (PM10 և PM2.5) պինդ մասնիկների արտանետումները 2040թ-ին ավելի բարձր կլինեն, քան 2015թ-ին, քանի որ այս աղտոտիչների արտանետումները կախված են այլ գործոններից, քան ավտոմեքենաների արտանետումների տեխնոլոգիան, և կատարվում են օրինակ փայտի վառարանների և արդյունաբերական գործընթացների հետևանքով: Տրանսպորտային միջոցների արտանետումների տեխնոլոգիայի բարելավումները չեն նվազեցնի PM10 և PM2.5 արտանետումները ոչ այրման գործընթացներից, ինչպիսիք են արգելակների մաշվածությունը կամ ճանապարհային փոշու այլ աղբյուրները: Ակնկալվում է, որ ծծմբի երկօքսիդի արտանետումները, որոնք առավել հաճախ առաջանում են էլեկտրակայաններից և այլ արդյունաբերական օբյեկտներից, կավելանան, քանի որ էներգիայի և արդյունաբերական արտադրանքի պահանջարկը մեծանում է բնակչության և տնտեսական աճի հետ մեկտեղ: «Առանց ծրագրի այլընտրանքի» տարբերակի դեպքում՝ արտանետումների այս աճը կհանգեցնի տարածաշրջանային օդի որակի անկմանը ողջ նահանգի օդային ավազաններում:
- Աղմուկ և թրթռումներ.** Գործող մայրուղիները, օդանավակայանները և երկաթուղիները կշարունակեն աղմուկ գեներացնել ողջ ընթացքում մինչև 2040թ.: Մայրուղիները ժամանակի հետ կունենան ավելի մեծ VMT, ինչը կհանգեցնի նրան, որ շրջանում աղմուկի մակարդակը աստիճանաբար կմեծանա: Չնայած ենթակառուցվածքային նախագծերը ենթակա են կանոնակարգման՝ աղմուկի նոր աղբյուրները նվազագույնի հասցնելու նպատակով, ողջամտորեն կանխատեսելի նախագծերը նաև կպահպանեն կամ կբարձրացնեն թրթռման ազդեցությունները տրանսպորտային միջանցքների երկայնքով ողջ տարածաշրջանում:
- Էլեկտրամագնիսական դաշտեր և էլեկտրամագնիսական միջամտություն.** Տարածաշրջանային բնակչության աճի հետ մեկտեղ, մեծանում է նաև էլեկտրական ենթակառուցվածքի և հեռահաղորդակցման համակարգերի օգտագործումը, ինչպիսիք են բարձր լարման հաղորդման գծերը և բջջային հեռարձակման ալեհավաքները: Չնայած

Ցնդող օրգանական միացություններ

Ածխածնի միացություն՝ բացառությամբ ածխածնի մոնօքսիդի, ածխածնի երկօքսիդի, ածխաթթվի, մետաղական կարբիդների կամ կարբոնատների և ամոնիումի կարբոնատի, որը մասնակցում է մթնոլորտային ֆոտոքիմիական ռեակցիաներին, բացառությամբ նրանց, որոնք սահմանվել են ԱՄՆ-ի Շրջակա միջավայրի պահպանության գործակալության կողմից որպես աննշան ֆոտոքիմիական ռեակտիվություն ունեցող:

Ածխածնի մոնօքսիդ (Carbon Monoxide)

Անգույն, առանց հոտի գազ, որն առաջանում է քաղաքային միջավայրում հիմնականում շարժիչային տրանսպորտային միջոցներում հանածո վառելիքի թերի այրման արդյունքում:

Ազոտի օքսիդներ (Nitrogen Oxides)

Աղտոտող միացությունների դաս, որը ներառում է ազոտի երկօքսիդ և ազոտի օքսիդ, որոնք երկուսն էլ արտանետվում են շարժիչային տրանսպորտային միջոցների կողմից:

Ծծմբի երկօքսիդներ (Sulfur Dioxides)

Ծծմբաթթվածնային միացություններ, որոնք ներառում են աղտոտիչների կարևոր չափանիշներ ունեցող ծծմբի երկօքսիդ և ծծմբի եռօքսիդ աղտոտիչներ:

Պինդ մասնիկներ (PM10 և PM2.5)

Հեղուկ և պինդ մասնիկներ՝ չափերի և բաղադրության լայն տեսականիով: Օդի որակի համար առանձնահատուկ մտահոգություն են ներկայացնում 10 մկմ և 2,5 միկրոնից փոքր մասնիկները (համապատասխանաբար PM10 և PM2,5):

այդպիսի էլեկտրամագնիսական դաշտ (EMF)/էլեկտրամագնիսական միջամտություն (EMI) առաջացնող սարքավորումներ ներկայումս առկա են Palmdale-ի և Burbank-ի միջև, պահանջարկը բավարարելու նպատակով նոր սարքավորումների տեղադրումը կբարձրացնի EMF և EMI առաջացումը ողջ տարածաշրջանում:

- Հանրային կոմունալ ծառայություններ և էներգիա.** Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի ողջ շրջանում կանխատեսվող աճը կբարձրացնի նաև հանրային կոմունալ ծառայությունների օգտագործումը և դրանց նկատմամբ պահանջարկը, օրինակ ինչպես ջրամատակարարումը, կոյուղին, աղբահանությունը, և էլեկտրամատակարարումը: Այնուամենայնիվ, ներկայիս և ապագա ծրագրերը պետք է անցնեն բնապահպանական վերանայում ըստ նախագծի հատկությունների, որպեսզի հնարավոր լինի փոխհատուցել կոմունալ ծառայությունների և էներգիայի նկատմամբ պահանջարկի աճը:
- Կենսաբանական և ջրային ռեսուրսներ.** Լոս Անջելեսի վարչաշրջանի զարգացման ճնշումները կշարունակեն ազդել վայրի բնության միջավայրի և ջրային ռեսուրսների վրա՝ գյուղական և չմշակված հողը վերածելով քաղաքային և մերձքաղաքային բնակելի համայնքների, ինչպես նաև կոմերցիոն և արդյունաբերական օգտագործման հողերի, և այնպիսի ենթակառուցվածքի, որը կհամապատասխանի տեղական կառավարության կողմից ընդունված ընդհանուր ծրագրերին: Նման ազդեցությունները ներառում են բնության միջավայրի կորուստ, մասնատում, կամ քայքայում, ինչպես նաև հատուկ կարգավիճակի բույսերի և կենդանիների կորուստ: Յուրաքանչյուր ներկայիս և ապագա ծրագրերը պետք է անցնեն բնապահպանական վերանայում ըստ նախագծի հատկությունների, որպեսզի հնարավոր լինի գնահատել և նվազագույնի հասցնել ազդեցությունները բույսերի, կենդանական աշխարհի, և բնության միջավայրի վրա՝ խուսափելու, նվազագույնի հասցնելու և փոխհատուցման մեղմացման միջոցառումների շնորհիվ: Այնուամենայնիվ, բնական համայնքները անդամնելի կորուստներ կկրեն, քանի որ զարգացման ճնշումը մեծանում է ողջ շրջանում:
- Հիդրոլոգիա և ջրային ռեսուրսներ.** Palmdale-ից մինչև Burbank ողջ համայնքներում տեղի ունեցող աճի հետևանքով, տարածաշրջանային ջրբաժանների և ստորկերկյա ջրային ավազանների շրջանում տեղադրվում են նոր կառույցներ և ենթակառուցվածքներ: Շինարարական նախագծերը կարող են փոփոխության ենթարկել մակերևութային ջրերի ջրահեռացման օրինաչափությունները, վատթարացնել մակերևութային կամ ստորերկրյա ջրերի որակը, մեծացնել հեղեղումների ռիսկերը կամ նվազեցնել ստորերկրյա ջրերի պաշարների լրացումը: Այնուամենայնիվ, զարգացման նոր նախագծերը ենթակա կլինեն դաշնային, նահանգային և տեղական կանոնակարգերի պահանջների կատարմանը, որոնք նախատեսված են նվազագույնի հասցնելու և կանխելու ազդեցությունները ջրային ռեսուրսների վրա:
- Երկրաբանություն, հող, սեյսմիկություն և հնէաբանական ռեսուրսներ.** Palmdale-ից մինչև Burbank ողջ շրջանով կառուցված նոր նախագծերը կհանդիպեն տեխնիկական և անվտանգության մի շարք սահմանափակումների՝ կապված երկրաբանության, հողի, սեյսմիկության և հանքային ռեսուրսների հետ: Անվտանգության և տեխնիկական սահմանափակումները կարող են ազդեցություն կրել շրջանում ակտիվ ճեղքվածքները բխող վտանգներից, այդ թվում San Andreas-ի ճեղքվածքը (San Andreas Fault): Ի լրումն, շինարարական գործողությունները ամենայն հավանականությամբ կարող են հանդիպել հնէաբանական ռեսուրսների (օրնակ՝ բրածոներ), որոնք կարող են

էլեկտրամագնիսական դաշտ (EMF)

Մագնիսական և էլեկտրական դաշտերից բաղկացած ուժային դաշտ, որը տարածվում է ցանկացած շարժվող էլեկտրական հոսանքից

էլեկտրամագնիսական միջամտություն (EMI)

էլեկտրական արտանետում կամ խանգարում, որը խաթարում է էլեկտրական կամ էլեկտրոնային սարքավորումները կամ համակարգերը

հավանականորեն գտնվել Լոս Անջելեսի Վարչաշրջանի ողջ տարածքում: Նոր զարգացումները նույնպես ենթակա կլինեն բնապահպանական վերանայման, որպեսզի հնարավոր լինի բացահայտել վտանգների մեղմացման և ռեսուրսների պաշտպանության համապատասխան միջոցառումները:

- Վտանգավոր նյութեր և թափոններ.** Վտանգավոր նյութերի պատահական արտահոսքը և արտանետումները կարող են առաջանալ դրանց շարունակական օգտագործումից, պահեստավորումից, կամ տեղափոխումից Palmdale-ից Burbank շրջանով: Աղտոտված վայրերում առաջարկվող նախագծերը նույնպես կհանդիպեն վտանգավոր թափոնների: Նման միջադեպերը կարող են վտանգներ առաջացնել, որոնք կարող են ազդել հասարակության և շրջակա միջավայրի առողջության վրա: Կառավարման լավագույն փորձը, կանխարգելման միջոցառումները և կարգավորող վերահսկողությունը կնվազեցնեն վտանգավոր նյութերի և թափոնների հետ կապված հավանական վտանգների առաջացումը:
- Ապահովություն և անվտանգություն.** Նոր բնակարանաշինական, կոմերցիոն, արդյունաբերական, հանգստի և տրանսպորտային ծրագրերը կմեծացնեն հրդեհային պաշտպանության, իրավապահական և շտապօգնության ծառայությունների նկատմամբ պահանջարկը: Տարածաշրջանային և տեղական ծրագրերը հասցեավորում են ապագա համայնքային պայմանները ապահովության և անվտանգության կարիքների առնչությամբ: Նոր զարգացումները նույնպես ենթակա կլինեն բնապահպանական վերանայման, որպեսզի հնարավոր լինի բացահայտել վտանգների մեղմացման և ռեսուրսների պաշտպանության համապատասխան միջոցառումները:
- Սոցիոտնտեսություն և համայնքներ.** Palmdale-ից մինչև Burbank-ի շրջանների նոր նախագծերը կարող են տեղահանել բնակավայրերը և բիզնեսները, խաթարել կամ բաժանել կայացած համայնքները, և/կամ նվազեցնել համայնքի համախմբվածությունը: Նման ծրագրերը կարող են նաև ստեղծել տնտեսական հնարավորություններ (աշխատատեղերի ստեղծման և ավելի մեծ հարկային եկամուտների շնորհիվ) կամ տնտեսական կորուստներ (համայնքների խաթարման կամ տեղահանման հետևանքով): Հետագա նախագծերը պետք է ենթարկվեն անհատական բնապահպանական վերանայման, որպեսզի գնահատվի համայնքի համախմբվածությունը և սոցիալ-տնտեսական խախտումները և բացահայտվեն մեղմացման տարբերակները:
- Կայարանների պլանավորում, հողի օգտագործում և զարգացում.** Տեղական և տարածաշրջանային հողօգտագործման ծրագրերը խրախուսում են աճի կառավարումը տարանցիկ միջանցքների շրջակայքում քաղաքային կառուցապատման միջոցով՝ VMT-ն նվազեցնելու նպատակով: Այնուամենայնիվ, տեղական և տարածաշրջանային հողօգտագործման քաղաքականությունները ընդունում են Կալիֆորնիայի HSR Համակարգի իրագործումը և ներառում են քաղաքականություններ, որտեղ HSR կայարանները համարվում են որպես փոխադրումների վրա կենտրոնացած զարգացման տարր: Այնուամենայնիվ, «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակը չի սատարում հողօգտագործման պլանավորման նպատակները՝ խրախուսելու բարձր խտության զարգացումը HSR կայարանների շրջակայքում:
- Գյուղատնտեսական հողատարածքներ և անտառային հողեր.** Տեղական և տարածաշրջանային հողօգտագործման ծրագրերը խրախուսում են քաղաքային կառուցապատումը, ինչը կնվազեցնի զարգացումների ճնշումը գյուղատնտեսական և անտառային ռեսուրսներ ունեցող հողերի վրա: Այնուամենայնիվ, Palmdale-ից մինչև Burbank շրջանում գյուղատնտեսական հողատարածքները շատ քիչ են, այնպես որ «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակը չի հանգեցնի գյուղատնտեսական

հողատարածքների զգալի վերափոխումների: Հողօգտագործման սահմանափակումները ANF-ում, ներառյալ SGMNM-ը, ընդհանուր առմամբ կբացառեն զարգացման ծրագրերի ազդեցությունը անտառային հողերի վրա այս տարածքներում, որոնք կառավարվում են ԱՄՆ Անտառային ծառայության (United States Forest Service (USFS)) կողմից:

- **Զբոսայգիներ, հանգստյան գոտիներ և բացօթյա տարածքներ.** Տեղական և տարածաշրջանային հողօգտագործման ծրագրերը պարունակում են դրույթներ հանրային զբոսայգիների և հանգստյան գոտիների ֆինանսավորման, ձեռքբերման և սպասարկման համար, որպեսզի բավարարեն Palmdale-ից մինչև Burbank-ի շրջան բնակչության աճից բխող կարիքները: «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի շրջանակում ծրագրված հետագա զարգացումները կպահանջեն բնապահպանական վերանայում՝ զբոսայգիների, հանգստյան գոտիների և բացօթյա տարածքների վրա ազդեցություններից խուսափելու նպատակով:
- **Էսթեթիկա և արտաքին տեսքի որակ.** Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի ողջ շրջանում կանխատեսվող աճի հետևանքով ոչ զարգացած, գյուղական, ծայրամասային և քաղաքային բնապատկերներում ենթակառուցվածքներ կավելանան: Հետագա նախագծերը ազդեցություն կունեն ռեսուրսների ուսումնասիրության տարածքի (resources study area (RSA)) արտաքին տեսքի վրա: Ըստ համապատասխան նախագծի բնապահպանական վերանայման պահանջների համաձայն ծրագրերը պետք է խուսափեն, նվազագույնի հասցնեն կամ մեղմացնեն արտաքին տեսքի փոփոխությունները:
- **Մշակութային ռեսուրսներ.** Հետագա նախագծերը կարող է հանդիպեն հնեաբանական կամ պատմական կառույցների ռեսուրսների Palmdale-ից Burbank հատվածում: Հետագա զարգացման ծրագրերը պետք է ենթարկվեն դաշնային և նահագնային օբեկտներին և կանոնակարգերին, որոնք պահանջում են պատմական օբյեկտների վրա ազդեցությունների նվազագույնի հասցնելը: Այնուամենայնիվ, ողջ շրջանում զարգացման նոր տարածքներում կարող է տեղի ունենալ մշակութային ռեսուրսների կորուստ:
- **Տարածաշրջանային աճ.** Այնպիսի քաղաքային և քաղաքամերձ տարածքներ, ինչպիսիք են Palmdale-ը, Los Angeles-ը, և Burbank-ը, շատ զարգացած են, և ակնկալվում է, որ կունենան բնակչության և աշխատատեղերի աճ: «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի ներքո տրանսպորտային ծրագրերը կարող են այդ տարածաշրջանում աճը խթանելու ներուժ ունենալ: Եվ ընդհակառակը, ANF-ի շրջանակում հողի օգտագործման սահմանափակումները ընդհանուր առումով կբացառեն զարգացումը և աճը ANF-ի սահմանների ներքո:
- **Կուտակային ազդեցություններ.** — Լուս Անջելես վարչաշրջանի և տարածաշրջանի այլ քաղաքների համար ընդհանուր ծրագրերի և այլ ծրագրային փաստաթղթերի շրջանակում նախագծի տեղակայման վայրերը և աճի տեսակները տեղի են ունենում ծրագրերի կառուցման ընթացքում: Այդ ընդհանուր ծրագրերի և այլ ծրագրային փաստաթղթերի շրջանակում կառուցման համապատասխանեցման համար կպահանջվի հողատարածք և նոր բնակելի տարածքների, ճանապարհների, էլկրակայանների, կոմունալ ծառայությունների, դպրոցների, հիվանդանոցների և կոմերցիոն և արդյունաբերական օբյեկտների կառուցում:
- **Բաժին 4(f) և Բաժին 6(f).** Palmdale-ից մինչև Burbank ողջ շրջանում նոր ծրագրերի զարգացումները կհանգեցնեն Հատված 4(f)-ի և Հատված 6(f)-ի ռեսուրսների վրա ազդեցությունների առաջացմանը: Այս ազդեցությունները հիմնականում տեղի կունենան զարգացած տարածքներում, ներառյալ Palmdale-ը և Burbank-ը: ANF-ում, այդ թվում SGMNM-ում հողի օգտագործման սահմանափակումների հետևանքով, ANF-ի և SGMNM-ի շրջանակում որևէ մեծ զարգացում տեղի չի ունենա:

- **Բնապահպանական արդարություն.** Տարածաշրջանի իրավապահ մարմինները կգնահատեն հետագա նախագծերի հավանական բնապահպանական և մարդու առողջության վրա ազդեցությունները, որոնք ամենայն հավանականությամբ կունենան անհամաչափ բարձր և անբարենպաստ ազդեցություններ բնապահպանական արդարության շրջանում ընդգրկված բնակիչների համար:

Բնապահպանական արդարություն

Բնապահպանական արդարության գնահատումները ենթադրում են փոքրամասնությունների և/կամ ցածր եկամուտ ունեցող բնակչության վրա անհամաչափ բարձր և անբարենպաստ հավանական ազդեցությունների բացահայտումը և հասցեավորումը:

S.8 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի այլընտրանքների գնահատումը

Հաջորդ բաժիններում կներկայացվեն բարելավված SR14, SR14A, E1, E1A, E2, և E2A կառուցման այլընտրանքների ազդեցությունների դիտարկումները, այդ թվում ինչպես անբարենպաստ անազդեցությունները, այնպես էլ առավելությունները, որոնք հատկանշական են Կառուցման այլընտրանքների համար: Եթե անբարենպաստ անազդեցությունները էական են, ապա նկարագրվում է առաջարկվող մեղմացնող միջոցառումը: Կապիտալ և գործառնական ծախսերի համեմատությունը նույնպես ներկայացված է: Ինչպես արդեն ցույց է տրվել, Ադյուսակ S-1-ը ներկայացնում է հիմնական նախագծային հատկանիշների հիմնական կետերով համեմատությունը, որը վերաբերում է յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքին:

S.8.1 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի առավելությունները

Կալիֆորնիայի HSR Համակարգը կօգնի բավարարել բնակչության և զբաղվածության ակնկալվող աճը և դրա հետ կապված ճամփորդական կարիքները Կալիֆորնիայում՝ հնարավորություն տալով միլիոնավոր մարդկանց ճամփորդել գնացքով, այլ ոչ թե ավտոմեքենայով կամ օդանավով: Կալիֆորնիայի ֆինանսների Նախարարության տվյալներով՝ 2015-2040 թվականներին, ակնկալվում է, որ Կալիֆորնիայի բնակչությունը կավելանա 21 տոկոսով կամ 8 միլիոն բնակչով՝ մոտավորապես 39 միլիոնից հասնելով 47 միլիոնի (CDOF 2016), մինևույն ժամանակահատվածում նաև ակնկալվում է, որ Կալիֆորնիայում զբաղվածությունը կավելանա 15 տոկոսով կամ 3 միլիոն աշխատողով՝ մոտավորապես 18 միլիոնից դառնալով 21 միլիոն (BLS 2016): Ակնկալվում է, որ 2015թ-ից մինչև 2040թ-ը Լոս Անջելեսի շրջանի բնակչությունը կաճի 15 տոկոսով կամ գրեթե 1,5 միլիոն բնակչով՝ մոտավորապես 10 միլիոնից հասնելով ավելի քան 11 միլիոնի, մինևույն ժամանակահատվածում ակնկալվում է, որ զբաղվածությունը Լոս Անջելեսի վարչաշրջանում կավելանա 11 տոկոսով կամ 0,5 միլիոն աշխատողով՝ մոտավորապես 4,7 միլիոնից մինչև 5,2 միլիոն (SCAG 2016):

Կալիֆորնիայի աճող բնակչությունը, զուգորդված կայուն տնտեսական աճի և զբոսաշրջության կանխատեսումների հետ, ավելի մեծ պահանջարկ կառաջացնի միջբաղաքային ուղևորությունների նկատմամբ:

Կալիֆորնիայի HSR Համակարգը կապահովի անվտանգ, մաքուր, արդյունավետ փոխադրման համակարգ՝ բնակչության և զբաղվածության նշված աճին համապատասխանելու համար: Ակնկալվում է, որ ըստ գնահատականի օրական մոտ 5,600 ուղևոր գնացք կնստեն տարբեր կայարաններից՝ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի երկայնքով (Ղեկավար Մարմին 2019b): Ամբողջությամբ էլեկտրական HSR գնացքները լիարժեքորեն կլիցքավորվեն 100 տոկոսով վերականգնվող էներգիայի միջոցով: Որպես այդպիսին, Կալիֆորնիայի HSR Համակարգը կծառայի որպես կլիմայի փոփոխությունից հետևանքների մեղմացման ռազմավարություն՝ նպատակ ունենալով նվազեցնել Կալիֆորնիայի ջերմոցային գազերի արտանետումները՝ ապագա ավտոմեքենաներով և օդանավերով ուղևորությունները

փախակերպելով HSR ուղևորությունների: Ավտոմեքենաների VMT-ի և օդանավերի ուղևորությունների կրճատումը կնպաստի ջեբոնցային գազերի արտանետումների նվազեցմանը, քանի որ արագընթաց գնացքները լիցքավորվելու են վերականգնվող էներգիայի միջոցով: Չնայած նրան, որ Կալիֆորնիայի HSR Համակարգը կմեծացնի էլեկտրաէներգիայի սպառումը, Կալիֆորնիայի HSR Համակարգը կնվազեցնի ավտոմեքենաների և օդանավակայանների մղոնները վառելիքի օգտագործման և օդի արտանետումների համապատասխան կրճատմամբ, տրանսպորտային միջոցներից արտանետումների զուտ կրճատման համար: Ավտոմեքենաներով և օդանավերով ճամփորդելու սահմանափակումները հասցեավորելու հետ մեկտեղ, Կալիֆորնիայի HSR Համակարգը կբարելավի նաև օդի որակը, կնվազեցնի խցանումները, և կբարելավի տրանսպորտային ուղևորության անվտանգությունը և ճամփորդության ժամանակը:

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը հաղորդակցական կապ կապահովի կոմերցիոն օդանավակայանների, հանրային տրանսպորտի և մայրուղիների ցանցի հետ, որպեսզի հնարավոր լինի վերացնել ներկայիս տրանսպորտային համակարգի թողունակության սահմանափակումները, քանի որ Կալիֆորնիայում մեծանում է միջբաղադրյալի ճամփորդությունների պահանջարկը: Palmdale-ի և Burbank-ի HSR կայարանները կապահովեն տարանցիկ հանգույցներ, որոնք կարող են աջակցել տեղական կառավարության ծրագրերին՝ բարձր խտությամբ և փոխադրման վրա կենտրոնացած կառուցապատման ուղղությամբ, ինչպես նաև կարող է գրավիչ դարձնել կառուցապատումը քաղաքային սահմանագծից դուրս: Կալիֆորնիայի HSR Համակարգը նաև կբարելավի ջրի որակը՝ համեմատած «Առանց Ծրագրի Այլընտրանքի» տարբերակի հետ, քանի որ նվազեցված VMT-ն իր հերթին կնվազեցնի, պինդ մասնիկների աղտոտիչները տրանսպորտային միջոցների երթևեկության կրճատման շնորհիվ:

Ցրված աղտոտիչներ (Non-Point-Source Pollutants)

Աղտոտում, որը հավաքվում է լայն տարածքից և հնարավոր չէ այն վերագրել մեկ աղբյուրի: Օրինակները ներառում են. թունաքիմիկատներ կամ պարարտանյութեր գյուղատնտեսական կամ մշակված հողերից, որոնք թափվում են գետերը, կամ հողի միջոցով ներթափանցում ստորգետնյա ջրեր:

Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը առավելություններ կտրամադրի տեղական, շրջանային և նահանգային մակարդակով: Շրջանային մակարդակում, առավելությունները կներառեն տնտեսական աճ, օդի որակի երկարաժամկետ բարելավումներ, ինչպես նաև երթևեկության խցանումների կրճատում: Կալիֆորնիայի HSR Համակարգի կառուցումը կստեղծի ընդհանուր մոտավորապես 35,000-ից 37,000 աշխատատեղ-տարի՝ ելնելով ընտրված Կառուցման Այլընտրանքից, և ծրագրի շահագործման և սպասարկման արդյունքում կստեղծվեն ընդհանուր մոտավորապես 5,000 նոր աշխատատեղ-տարի⁹: Ակնկալվում է, որ Լոս Անջելեսի շրջանի աշխատուժը ի վիճակի կլինի բավարարելու աշխատատեղերի այս պահանջարկը, և այդպիսով ստեղծված տնտեսական ակտիվությունը բարենպաստորեն կանդրադառնա տարածաշրջանային տնտեսության վրա:

S.8.2 Palmdale-ից Burbank Ծրագրի Հատված Կառուցման Այլընտրանքների ազդեցությունների համեմատություն

Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքային ուղիները կշեղվեն E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքային ուղիներից Կալիֆորնիայի ջրատարի (California Aqueduct) մոտ, և կըրջվեն դեպի արևմուտք և կհետևեն գործող SR 14 ավտոմայրուղուն: E1, E1A, E2, և E2A

⁹ Աշխատատեղ-տարի դա մեկ անձի 1 տարվա ընթացքում աշխատանքն է. Այդպիսով շինարարությունում մեկ նոր աշխատատեղը էթե ունի 5 տարվա տևողություն, ապա համարժեք է՝ 5 աշխատանք-տարի, 10 նոր աշխատատեղ շինարարությունում, որը տևում է 5 տարի, համարժեք է՝ 50 աշխատանք - տարի:

Կառուցման Այլընտրանքային ուղիները կշեղվեն և կշարունակեն հարավարևմտյան ուղղությամբ ANF-ի և այդ թվում SGMNM-ի տարածքի տակով, որտեղ երկու ուղին էլ կշարունակվեն գետնուղում: Կառուցման Այլընտրանքների միջանցքներից յուրաքանչյուրը կհետևի միննույն երթուղուն Burbank քաղաքում՝ մոտենալով Բըրբանքի Օդանավակայանի Կայարանին (Burbank Airport Station):

Աղյուսակ S-4 –ում թվարկվում և համեմատվում են վեց Կառուցման Այլընտրանքային ուղիների NEPA և CEQA հիմնական ազդեցությունները՝ նախքան մեղմացման միջոցառումների կիրառումը: Աղյուսակ S-5-ում թվարկվում են ծրագրի նշանակալի ազդեցությունները և առաջարկվող մեղմացման միջոցառումները Կառուցման Այլընտրանքային ուղիների համար, ինչպես նաև CEQA կարևորության մակարդակը մեղմացման միջոցառումներից հետո. այն ազդեցությունները, որոնք բնորոշված չեն որպես նշանակալի նախքան մեղմացման միջոցառումները ըստ CEQA-ի պահանջների ներառված չեն: Ստորև բաժիններում ներկայացված վեց Կառուցման Այլընտրանքային ուղիների համեմատությունը հիմնականում կենտրոնացած է այն ազդեցությունների վրա, որոնց դեպքում վեց Կառուցման Այլընտրանքային ուղիներից յուրաքանչյուրը բերում է տարբեր ազդեցությունների նշված ռեսուրսների մասով և տարբերակում է ազդեցությունները Կառուցման Այլընտրանքային ուղիներից յուրաքանչյուրի միջև:

Ազդեցությունների վերլուծությունը հաշվի է առնում ծրագրի նախագծման հատկանիշները (այսինքն, IAMF-ները), որոնք համապատասխանում են կանոնակարգերի պահանջներին՝ խուսափելու կամ նվազեցնելու շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունները, մինչև մեղմացնող միջոցառումների կիրառումը: Արդյունքում, Ղեկավար Մարմինը կհամապատասխանի այդ կանոնակարգերի պահանջներին, և հետևաբար, նման միջոցառումները այստեղ ամփոփված չեն: Ղեկավար Մարմինը կհամապատասխանի այդ կանոնակարգերի պահանջներին, և կանի հնարավորը, որպեսզի խուսափի և նվազագույնին հասցնի ազդեցությունները՝ երբ նախագիծը կանցնի իր վերջնական նախագծման և շինարարության տեխնիկական բնութագրերը կազմելու փուլին:

Աղյուսակ S-4 Նախնական մեղմացման համեմատություն CEQA/NEPA Հիմնական Ազդեցությունների վերաբերյալ Արագընթաց Երկաթուղու Կառուցման Այլընտրանքների (High-Speed Rail Built Alternatives) համար

Ազդեցություն	Կառուցման Այլընտրանքներ					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
Տրանսպորտ						
Շինարարության ազդեցությունները						
Ճանապարհային հատվածների քանակը, որտեղ ծառայության որակը (LOS) կիջնի անընդունելի մակարդակի՝ շինարարական աղբի դեպի հյուսիսային կողմ տեղափոխելու ժամանակ	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 2 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 2 ճանապար. հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 2 հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 5 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 5 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:

Ազդեցություն	Կառուցման Այլընտրանքներ					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
Ճանապարհային հատվածների քանակը, որտեղ ծառայության որակը (LOS) կիջնի անընդունելի մակարդակի՝ շինարարական աղբի դեպի հարավային կողմ տեղափոխելու ժամանակ	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 2 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 2 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 2 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամ-ին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 5 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 5 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 2 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:
Խաչմերուկների քանակը (այդ թվում նոր խաչմերուկները), որտեղ ծառայության որակը (LOS) կիջնի անընդունելի մակարդակի՝ շինարարական աղբի դեպի հյուսիսային կողմ տեղափոխելու ժամանակ	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 5 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 5 խաչմերուկում ցերեկային պիկ ժամ-ին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 7 խաչմերուկում երեկոյան պիկ ժամ-ին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 6 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 7 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 5 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 7 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 4 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:	Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին: Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:

Ազդեցություն	Կառուցման Այլընտրանքներ					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
Խաչմերուկների քանակը (այդ թվում նոր խաչմերուկները), որտեղ ծառայության որակը (LOS) կիջնի անընդունելի մակարդակի՝ շինարարական աղբի դեպի հարավային կողմ տեղափոխելու ժամանակ	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 6 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 6 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 7 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 8 խաչմերուկում երեկոյան պիկ ժամին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 6 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 7 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 6 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 7 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 3 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին:</p>

Ազդեցություն	Կառուցման Այլընտրանքներ					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
<p>Ավտոմայրուղիների հատվածների քանակը, որտեղ ծառայության որակը (LOS) կիջնի անընդունելի մակարդակի շինարարական աղբի դեպի հարավային կողմ տեղափոխելու ժամանակ</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում ցերեկային պիկ ժամ-ին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում երեկոյան պիկ ժամ-ին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 1 հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 1 հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 1 հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 1 հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի ավտոմայրուղու 2 հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>

Ազդեցություն	Կառուցման Այլընտրանքներ					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
Ճանապարհների հատվածների քանակը, որտեղ ծառայության որակը (LOS) կիջնի անընդունելի մակարդակի՝ ծրագրի շինարարության ընթացքում	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>	<p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում ցերեկային պիկ ժամերին:</p> <p>Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի՝ 1 ճանապարհային հատվածում երեկոյան պիկ ժամերին:</p>

Ազդեցություն	Կառուցման Այլընտրանքներ					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
 AMMP = Վերահսկողության և կառավարման ադապտատիվ պլան (Adaptive Monitoring and Management Plan); ANF = Անջելեսի Ազգային Անտառ (Angeles National Forest); APE = Հավանական Ազդեցության տարածք (Area of Potential Effects); Authority = Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմին (California High-Speed Rail Authority); AVAQMD = Antelope Valley-ի Օդի Որակի Կառավարման Շրջան (Antelope Valley Air Quality Management District); BMP = Լավագույն կառավարման փորձ (best management practices); CAAQS = Կալիֆորնիայի Շրջակա միջավայրի Օդի Որակի Չափանիշներ (California Ambient Air Quality Standards); CDFW = Կալիֆորնիայի Չկների և Վայրի Բնության Նախարարություն (California Department of Fish and Wildlife); CEQA = Կալիֆորնիայի Շրջակա միջավայրի Որակի մասին Օրենք (California Environmental Quality Act); EMF = Էլեկտրամագնիսական դաշտ (electromagnetic field); EMI = Էլեկտրամագնիսական միջամտություն (Electromagnetic Interference); FRA = Դաշնային Երկաթուղու Վարչություն (Federal Railroad Administration); HSR = արագընթաց երկաթուղի (high-speed rail); LADWP = Լոս Անջելեսի Ջրային Պաշարների և Էներգետիկայի Վարչություն (Los Angeles Department of Water and Power); MOA = Փոխըմբռնման Հուշագիր (Memorandum of Agreement); NAAQS = Շրջակա միջավայրի Օդի Որակի Ազգային Չափանիշներ (National Ambient Air Quality Standards); SCAQMD = Հարավային Ափի Օդի Որակի Կառավարման Շրջան (South Coast Air Quality Management District); SGMNM = Սուրբ Գաբրիելի Լեռների Ազգային Հուշարձան (San Gabriel Mountains National Monument); SHPO = Նահանգային Պատմական Պահպանության Պատասխանատու (State Historic Preservation Officer)

S.8.2.1 Բարելավված SR14 և SR14A Կառուցման այլընտրանքներ

SR14A Այլընտրանքային ուղին ամենաերկարն է 6 Կառուցման Այլընտրանքներ-ից (38 մղոն), որին հաջորդում է Բարելավված SR14 Այլընտրանքային ուղին (37 մղոն): Ի լրումն, ինչպես Բարելավված SR14, այնպես էլ SR14A Կառուցման Այլընտրանքները կունենան ANF-ի այդ թվում SGMNM-ի տակով անցնող գետնուղու ամենակարճ երկարությունը: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները նաև կունենան շինարարության ամենակարճ տևողությունը:

- **Տրանսպորտ.** Դեպի հյուսիս և դեպի հարավ շինադրի տեղափոխությունները, կապված Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքային ուղիների հետ, իրենց ազդեցության կենթարկեն ավելի քիչ ճանապարհային հատվածներ, որտեղ Ծառայության որակը (LOS) կիջնի մինչև անընդունելի մակարդակ համեմատած E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքների հետ: Այնուամենայնիվ, դեպի հարավ շինադրի տեղափոխումը, կապված Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հետ կհանգեցնի Ծառայության որակի անկմանը անընդունելի մակարդակի երկու ավտոմայրուղու հատվածներում ցերեկային (AM) պիկ ժամերին: E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում Ծառայության որակը կիջնի անընդունելի մակարդակի 1 ավտոմայրուղու հատվածում ցերեկային պիկ ժամերին (բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներին առնչվող դեպի հարավ շինադրի տեղափոխությունը կհանգեցնի Ծառայության որակի անկմանը 2 ավտոմայրուղու հատվածներում երեկոյան (PM) պիկ ժամերին): Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը կհանգեցնի Ծառայության որակի անկմանը անընդունելի մակարդակի ավելի շատ խաչմերուկներում (3 խաչմերուկ ցերեկային պիկ ժամերին և 4 խաչմերուկ երեկոյան պիկ ժամերին) համեմատած E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքների հետ (որոնցից յուրաքանչյուրի համար ծառայության որակը կիջնի 1 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին և 1-ից 2 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին):

- **Օդի Որակ.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շինարարության հետևանքով Ածխածնի մոնոքսիդը (CO) կգերազանցի SCAQMD-ի համապատասխանության ընդհանուր ընդունելի նվազագույն շեմը (2023թ-ին, և 2022-2023թթ, համապատասխանաբար): Միայն E2A Կառուցման Այլընտրանքը նույնպես կգերազանցի CO սահմանված շեմը շինարարության ընթացքում (2022թ., 2024-2025թթ.): SR14A Կառուցման Այլընտրանքը կգերազանցի SCAQMD-ի օրական CEQA նվազագույն շեմերը Nox-ի համար, ավելի երկար տարիների ընթացքում, քան յուրաքանչյուր այլ Կառուցման Այլընտրանքներից մեկը (2020-2027թթ.): Բոլոր վեց Կառուցման Այլընտրանքների գործարկումը կունենա արդյունավետ ազդեցություն և կնվազեցնի բոլոր աղտոտիչների արտանետումները ողջ նահանգում, եթե համեմատենք առկա և առանց Ծրագրի իրականացման տարբերակի ելակետային տվյալների հետ՝ ուղևորների երթևեկության բոլոր սցենարներով:

Զգայուն ընկալիչներ

Հողի օգտագործման հատվածները, որտեղ աղմուկի և թրթռումների հետևանքով առաջանում են անհանգստություններ դասակարգված են որպես զգայուն ընկալիչներ: Զգայուն ընկալիչների օրինակներից են բնակելի շենքերը, հիվանդանոցները և դպրոցները:


- **Աղմուկ և Թրթռում.** Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի շինարարությունը կհանգեցնի աղմուկի ազդեցությունների Harold/Alpine և Agua Dulce համայնքներում (Սկար S-13): Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները միակ տարբերակներ են, որոնք ենթարկում են շինարարության աղմուկի ազդեցություններին Agua Dulce-ում: SR14A Կառուցման Այլընտրանքի շինարարության ժամանակ շինադրի

տեղափոխությունը չի հանգեցնի որևէ աղմուկի ազդեցության, մինչդեռ Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքը կսահմանափակի ազդեցությունները Big Springs Road-ով Acton-ից հյուսիս-արևմուտք: SR14A Կառուցման Այլընտրանքի գործարկումից բնակելի շենքերը կենթարկվեն աղմուկի ամենաքիչ մեղմ ազդեցությունների, սակայն Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում բնակելի շենքերը կենթարկվեն ամենամեծ թրթռումների ազդեցություններին: Այնուամենայնիվ, ի տարբերություն այլ Կառուցման Այլընտրանքների, Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքը աղմուկի ազդեցություններին կենթարկի Pacific Crest Trail-ը և Vasquez Rocks Natural Area Park-ը: SR14A-ը կխուսափի աղմուկի այդ ազդեցություններից, քանի որ այդ հատվածում ուղու կառուցումը նախատեսված է գետնուղում: Ինչպես E2 և E2A Կառուցման Այլընտրանքները, SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքը նույնպես կենթարկի աղմուկի ազդեցություններին տնային կենդանիների և վայրի բնության բնակիչներին: Ի հակառակը, E1 և E1A Կառուցման Այլընտրանքները աղմուկի ազդեցության կենթարկեն միայն վայրի բնության կենդանիներին:



PRELIMINARY DRAFT/SUBJECT TO CHANGE - HSR ALIGNMENT IS NOT DETERMINED
 Source: Authority, 2020; National Geographic, 2020
 May 1, 2021

○ Proposed HSR Station	HSR Alignment Profile	■ Angeles National Forest
● Metrolink Station	■ At Grade	■ Magic Mountain Wilderness Areas
— Metrolink	■ At Grade Covered	■ San Gabriel Mountains National Monument
— Other HSR Project Section	■ Cut and Cover	
— Subsection Break	■ Elevated / Aerial Structure	
■ Communities Affected by Aboveground Construction	■ Retained Cut / Trench	
	■ Tunnel	



Նկար S-13 Վերգետնյա շինություններից ազդեցություն կրող համայնքներ

- **Էլեկտրամագնիսական դաշտեր և Էլեկտրամագնիսական միջամտություն.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը կառաջացնի EMI այն հաստատություններում, որտեղ կարող են գործարկվել զգայուն սարքավորումներ. Դրանցից են Serra Medical Group-ը և Pacifica Hospital-ը: E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կխուսափեն այս ազդեցությունից: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կհանդիպեն առկա երկաթուղային գծերին, որոնք կարող են ենթարկվել EMI ազդեցությանը (13 մղոն և 14 մղոն երկաթգծի ուղին, համապատասխանաբար), ավելի քիչ քան E1 և E1A Կառուցման Այլընտրանքները (16 մղոն և 15 մղոն համապատասխանաբար), սակայն ավելի շատ քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքները (12 մղոն և 11 մղոն, համապատասխանաբար):
- **Հանրային կոմունալ ծառայություններ և Էներգիա.** Բարելավված SR14 և SR14A շինարարության ընթացքում կհանգեցնի ավելի շատ բարձր ռիսկային և հիմնական ցածր ռիսկային կոմունալ ծառայությունների հակասությունների (կոնֆլիկտների) (461 կոմունալ ծառայությունների ընդհանուր կոնֆլիկտ և 410 կոմունալ ծառայությունների ընդհանուր կոնֆլիկտ, համապատասխանաբար), համեմատած E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետ (400 և 345, համապատասխանաբար) և E2 և E2A Կառուցման Այլընտրանքների հետ (278 և 264, համապատասխանաբար): SR14A Կառուցման Այլընտրանքի շինարարությունը կունենա ամենամեծ ընդհանուր ջրի պահանջը բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից: Շինարարության ընթացքում SR14A Կառուցման Այլընտրանքը նույնպես կսպառի ամենաշատ էներգիան և կկուտակի ամենաշատ պինդ աղբը մյուս Կառուցման Այլընտրանքներից: Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքը կսպառի ավելի շատ էներգիա շինարարության ընթացքում և կկուտակի ավելի շատ պինդ աղբ քան E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքները:
- **Կենսաբանական և ջրային ռեսուրսներ.** Ընդհանուր առումով, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները ամենաշատ ազդեցություններին կենթարկեն կենսաբանական և ջրային ռեսուրսները: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները ազդեցության կենթարկեն վայրի բնության գրանցված տեսակներից ամենաշատերին, ինչպես նաև վայրի բնության կենսամիջավայրի ամենաշատ տարածքները՝ հեկտարներով: Բոլոր վեց Կառուցման Այլընտրանքները ազդեցությունների կենթարկեն հատուկ կարգավիճակ ունեցող բույսերի նույն տեսակներին, սակայն Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները իրենց ազդեցությանը կենթարկեն բույսերի կենսամիջավայրի ամենամեծ տարածքը: Այնտեղ, որտեղ Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները հատում են Սանտա Կլարա գետը (Santa Clara River) Soledad Canyon-ում, հայտնի է որ ներկա է unarmored threespine stickleback ձուկը (Կալիֆորնիայի Ձկների և Վայրի բնության Վարչության (California Department of Fish and Wildlife) ամբողջական պաշտպանության տակ գտնվող¹⁰ ձկան տեսակ): Կումուրջի նախագծում տվյալ տարածքում կպահանջվի հատուկ պայամներ՝ տվյալ տեսակների վրա ազդեցության ներգործումից խուսափելու համար: Բարելավված SR14 և SR14A երկաթգիծը և օժանդակ կառույցները նույնպես ազդեցություն կներգործեն ԱՄՆ ջրերի վրա, որը կենսամիջավայր է ապահովում մի քանի հատուկ կարգավիճակ ունեցող տեսակների համար: ANF-ի տակ իրականացվող գետնուղու աշխատանքների հետևանքով ստորերկրյա ջրերի մակերևութային ջրերում

¹⁰ Կալիֆորնիայի Ձկների և Վայրի բնության Վարչության ամբողջական պաշտպանության տակ գտնվող տեսակները չեն կարող վերցվել (օրինակ՝ հալածվել, վնասվել, վիրավորվել, սպանվել, առանցվել կամ հավաքվել), և ոչ մի թույլտվություն չի կարող թողարկվել դրանց ստացման համար, բացառությամբ այդ տեսակների հավաքագրումը հատուկ գիտական հետազոտությունների համար, ինչպես նաև թռչունների վերաբնակեցումը տեսակի շարունակականությունը պաշտպանելու համար:

օժանդակության փոփոխությունը կարող է անբարենպաստորեն անդրադառնալ ջրային կենսամիջավայրի վրա՝ փոփոխելով ջրային կենսամիջավայրերի քանակը և որակը դրա հետ առնչվող կենսաբանական ռեսուրսների համար: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կունենան ամենքիչ ռիսկերը բույսերի տեսակների և համայնքների կենսամիջավայրի վրա ներգործելու տեսակետից՝ ANF-ի տակ գետնուղու աշխատանքների հետևանքով:

- Հիդրոլոգիա և Ջրային Ռեսուրսներ.** Palmdale-ից մինչև Burbank հատվածում, Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքը կպահանջի մակերևութային ջրերի վերգետնյա անցում (այդ թվում անցումներ բարձրացված, առափնյա կամ խորշով և ծածկով թունելներով) և 12 վիադուկ, SR14A Կառուցման Այլընտրանքը կպահանջի մակերևութային ջրերի 43 վերգետնյա անցում և երեք անցում վիադուկով: Բարելավված SR14 Այլընտրանքային ուղին կհատի Ունա լիճը (Una Lake) առափնյա ճանապարհով, և կպահանջվի, որպեսզի այդ ջրամբարը զգալիորեն լցվի, քանի որ այն կփոքրանա չափսերով, SR14A Կառուցման Այլընտրանքը կխուսափի Ունա Լճից (Una Lake), հետևելով ավելի արևելյան ուղղությամբ, մոտավորապես Ունա Լճից (Una Lake) 300 ֆուտ դեպի արևելք: Ունա Լճից (Una Lake) դեպի հարավ, Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքը կանցնի Կալիֆորնիայի Ջրատարի (California Aqueduct) տակով և այնուհետև կշարունակի ճանապարհը մի շարք վիադուկներով Սանտա Կլարա գետի (Santa Clara River) վտակների երկայնքով, մինչև Soledad Canyon- ում Սանտա Կլարա գետի հունը հատելը, նախքան ANF-ի տակով անցնող երկար գետնուղի մտնելը, SR14A Այլընտրանքային ուղին կանցնի ավելի արևելյան ճանապարհով և կհատի Կալիֆորնիայի Ջրատարը (California Aqueduct), ինչպես նաև, կհատի Սանտա Կլարա գետի հունը Soledad Canyon- ում, նախքան ANF-ի տակով անցնող գետնուղի մտնելը: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների ուղիները կշարունակեն ANF –ով այն տարածքներով, որտեղ չկան հայտնի կամ քարտեզագրված աղբյուրներ կամ առուներ Չափավոր Ռիսկային Տարածքների կամ գնահատված Բարձր Ռիսկային Տարածքների շրջանակում, ինչը ցույց է տալիս, որ Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները, Կառուցման Այլընտրանքների այլ տարբերակների հետ համեմատած, կարող են ունենալ ամենաքիչ ազդեցությունները ANF-ի, այդ թվում SGMNM-ի հիդրոերկրաբանական ռեսուրսների վրա: Ի լրումն, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների գետնուղիները կանցնեն ամենակարճ հեռավորություններով բարձր ռիսկային ստորերկրյա ջրերի ձնշումների ներքո, համեմատած E1, E1A, E2, կամ E2A Կառուցման Այլընտրանքների հետ՝ նվազեցնելով արտահոսքի հավանականությունը դեպի HSR գետնուղիներ, ինչը կարող է ազդեցություններ ունենալ տեղական հիդրաերկրաբանության վրա: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կհանդիպեն ամենաքիչ աղբյուրների ANF-ի, այդ թվում SGMNM շրջանակում, համեմատած E1, E1A, E2, կամ E2A Կառուցման Այլընտրանքների հետ: E2 և E2A Կառուցման Այլընտրանքների համեմատությամբ, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կհանդիպեն ավելի փոքր ընդհանուր լայնություն ունեցող ձեղքվածքների ANF-ի, այդ թվում SGMNM-ի շրջանակում, ինչը կարող է գետնուղիներում արտահոսքեր առաջացնել: Այնուամենայնիվ, այդ հատվածների լայնությունը ավելի մեծ կլինի, քան այն ձեղքվածքների գոտիների հատվածների լայնությունը, որոնց կհանդիպեն E1 և E1A Կառուցման Այլընտրանքները: ANF-ից հարավ, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքի ուղիները կհատեն Hansen Spreading Grounds-ը և ջրանցքը, որը պատկանում է և սպասարկվում է Լոս Անջելեսի Ջրհեղեղների Վերահսկողության Շրջանի (Los Angeles County Flood Control District) կողմից՝ հեղեղաջրերը դեպի տեղական գետեր և ստորերկրյա ջրամբարներ հասցնելու նպատակով: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը կառաջացնի ամենաշատ հողի խանգարումներ, մյուս բոլորն Կառուցման

Այլընտրանքներից, ինչը կարող է հանգեցնել քայքայման և ջրի որակի վատթարացման: SR14A Կառուցման Այլընտրանքը կհանգեցնի հողի խանգարման ամենաքիչ դեպքերին շինարարության ընթացքում՝ ջրհեղեղման վտանգի տակ գտնվող հատուկ տարածքների շրջանակում: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները բացասական կերպով կազդեն Hansen Spreading Ground-ի ստորերկրյա ջրերի լիցքավորման գործառույթին: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հասակագիծը նույնպես ընդգրկում է ամենակտիվ ստորերկրյա ջրոհորները, ուղու կենտրոնագծից 1 մղոն հեռավորության վրա:

- Երկրաբանություն, Հողեր, Մեյսմիկություն և Հնեաբանական Ռեսուրսներ.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կպահանջեն ամենաերկար անցումը Սուրբ Գաբրիել ձեղքվաքծի գոտով (San Gabriel Fault Zone), ինչը լուրջ գետտեխնիկական մարտահրավերներ է առաջ բերում: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները նաև ենթադրում են ամենաշատ հողի խանգարումները և ստորգետնյա թունելների հորատումը ամենաշատ երկրաբանական միավորներով՝ հնեաբանական ռեսուրսների պարունակության շատ մեծ հավանականությամբ: Հանքային ռեսուրսների առնչությամբ, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կբախվեն մուտքի խստագույն սահմանափակումներին՝ դեպի նշանակալի հանքային ռեսուրսներ:
- Վտանգավոր Նյութեր և Թափոններ.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբ՝ հողային աշխատանքների արդյունքում փորելով աղտոտված հողերը, որոնք առնչվում են PEC տարածքներին Vulcan Mine-ի և San Fernando Valley-ում Hansen Spreading Grounds-ի տեղանքներում, E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբ նույնկերպ, ինչպես Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում, և E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբ Big Tujunga Wash անցումից հարավ և CalMat Mine աղբանոցում: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն ամենահավանական աղտոտված շինարարական աղբը (մոտավորապես 9 միլիոն խորանարդ յարդ [mcy]) համեմատած E1 և E1A Կառուցման Այլընտրանքների (մոտավորապես 3 mcy) և E2 և E2A Կառուցման Այլընտրանքների (մոտավորապես 4 mcy) հետ: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կարող են հանգեցնել վտանգավոր նյութերի հետ աշխատելուն 0.25 մղոն հեռավորության վրա գտնվող ավելի շատ կրթական հաստատություններից, քան մյուս բոլոր Կառուցման Այլընտրանքները (18-ից 23 կրթական հաստատություն և 21-ից 26 կրթական հաստատություն, համապատասխանաբար՝ կախված ընտրված հորանցքի տարբերակից):
- Ապահովություն և Անվտանգություն.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կհանգեցնեն ավելի քիչ ճանապարհների մշտական փակմանը շինարարության հետևանքով (9 ճանապարհի փակում և 5 ճանապարհի փակում, համապատասխանաբար) համեմատած E1 և E1A Կառուցման Այլընտրանքների (13 ճանապարհի փակում և 12 ճանապարհի փակում, համապատասխանաբար) և E2 և E2A Կառուցման Այլընտրանքների (11 ճանապարհի փակում և 10 ճանապարհի փակում, համապատասխանաբար) հետ: Այս փակումները կունենան մինչև հավանականությունը՝ ստեղծելու երթևեկության վտանգներ յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի համար. իսկ մակարդակների բաժանումը, իրականացված որպես ծրագրի նախագծման մաս, նվազագույնի կհասցնի երթևեկության վտանգները: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հարևանությամբ գտնվում են ամենաշատ օդանավակայանները և թռիչքուղիները, բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից: Յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի հարևանությամբ գտնվում է Բրբանքի

Հոլիվուդ օդանավակայանը (Hollywood Burbank Airport): Ի լրումն, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հարևանությունները ընդգրկում են Agua Dulce Airpark-ը և Whiteman Օդանավակայանը:

- Սոցիոտնտեսություն և Համայնքներ.** Ինչպես քննարկվել է S.5.3.6 բաժնում, Կառուցման Այլընտրանքների համար կպահանջվեն հորանցքներ և միջանկյալ պատուհաններ՝ ուղու թունելային հատվածներ մուտք ունենալու համար: Հետևաբար, այստեղ դիտարկված են մի շարք չափելի ազդեցություններ, որոնք կարող են բխել յուրաքանչյուր հորանցքի կամ միջանկյալ պատուհանի համադրության ընտրությունից: Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի հետևանքով կտեղահանվեն ամենաշատ առկա մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի միավորները (38-ից 41), մինչդեռ SR14A Կառուցման Այլընտրանքի հետևանքով կտեղահանվեն ամենաքիչ առկա մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի միավորները (8-ից 11): SR14A Կառուցման Այլընտրանքի հետևանքով կտեղահանվեն ամենաշատ առկա բազմընտանիք բնակելի միավորները (29), համեմատած E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետ (13-ից 18 և 12-ից 17 մեկ ընտանիքի բնակելի միավոր, և 11 և 27 բազմընտանիք բնակելի միավոր, համապատասխանաբար) և E2 և E2A Կառուցման Այլընտրանքների հետ (38 և 37 մեկ ընտանիքի բնակելի միավոր, 11 և 27 բազմընտանիք բնակելի միավոր, համապատասխանաբար): Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կհանգեցնեն ավելի բարձր վաճառքի կուտակային հարկերի և տարեկան միջին վաճառքի հարկերի՝ շինարարության ժամանակահատվածում:
- Գյուղատնտեսական Հողատարածքներ և Անտառային Հողեր.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շրջանակում կպահանջվի էլեկտրամատակարարման միջանցք մոտավորապես 9-հեկտար կարևոր գյուղատնտեսական հողատարածքի հատվածի երկայնքով դեպի արևելք, այն հատվածում, որտեղ Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքը հատում է Sierra Highway-ը: Եթե կարևոր գյուղատնտեսական հողատարածքի այս հատվածի շրջանակում տեղակայված են էլեկտրասյուներ, ապա այդ հողատարածքի 1 հեկտարը կփոխակերպվի ոչ գյուղատնտեսական օգտագործման: Էլեկտրահաղորդման գծերը, որոնք ձգվում են Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքի հետ առնչվող հորանցքի կառուցից կարող է անցնել անտառային հողերով ԱՄՆ Անտառային ծառայության (USFS) կողմից կառավարվող հատվածներում: USFS-ի հատուկ օգտագործման թույլտվության պահանջի կատարումը (Special Use Authorization) ներառում է մի քանի պահանջ, այդ թվում նրանք, որոնք պահանջում են Ղեկավար Մարմնից խուսափել շրջակա միջավայրի վնասումից կամ աղտոտումից, կամ հակառակ դեպքում պատասխանատվություն կրել դրա համար. պահանջները համապատասխան կերպով կապահովեն՝ որպեսզի հնարավոր լինի պատշաճորեն խուսափել, նվազագույնին հասցնել կամ փոխհատուցել անտառային հողի մշտական կորուստը կամ անտառային հողի փոխակերպումը ոչ անտառային օգտագործման, ինչը կարող է բխել մշտական հորանցքի կառուցների շինարարությունից ANF-ի շրջանակում:
- Ջրոսայգիներ, Հանգստյան Գոտիներ և Բացօթյա Տարածքներ.** Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի ենթակառուցվածքը տեղակայված կլինի 21 զբոսայգու, հանգստյան գոտու, կամ բացօթյա տարածքների մոտակայքում, SR14A Կառուցման Այլընտրանքը տեղակայված կլինի 22 զբոսայգու, հանգստյան գոտու, կամ բացօթյա տարածքների մոտակայքում: Դա ավելի մեծ քանակ է, քան այլ Կառուցման Այլընտրանքների տարբերակում, և Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի դեպքում ներառում է կառույցներ, որոնք անմիջական բախման մեջ են մտնում Pacific Crest Trail-ի 400-foot հատվածի հետ: Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի համար շինարարության և գործարկման ընթացքում մուտքը պահպանելու համար, երթուղին պետք է վերադասավորվի: Քանի որ Բարելավված SR14 և SR14A Կառուցման

Այլընտրանքների RSA-ի շրջանակում (այդ թվում Pacific Crest Trail-ը Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի համար) ընդգրկված են շատ զբոսայգիներ և բացօթյա հանգստյան գոտիներ, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները շատ մեծ հավանականություն ունեն անուղակի ազդեցության ենթարկելու զբոսայգիները, հանգստյան գոտիները, և բացօթյա տարածքները (այսինքն, շինարարության ընթացքում մուտքի սահմանափակումներ, աղմուկի և թրթռումների նոր աղբյուրներ, օդի որակի անկում, արտաքին տեսքի փոփոխություններ և զբոսայգու բնույթի մշտական փոփոխություններ):

- Էսթետիկա և Արտաքին տեսքի Որակ.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը և գործարկումը իրենց ազդեցությանը կենթարկեն Palmdale-ից Burbank տարածքների գեղագիտական տեսարանները: Լայնածավալ խաչմերուկային կառույցները կապված Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի հետ կխոչնդոտեն տարբեր ջրային ուղիների և այլ բնական տեսարաններին, ինչպիսիք են Pacific Crest Trail-ը և Agua Dulce համայնքի մոտակայքը:
- Մշակութային Ռեսուրսներ.** IAMF-ի և մեղմացման միջոցառումների իրականացմամբ, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը և գործարկումը ավելի քիչ քան նշանակալի ազդեցությունների կենթարկեն հնագիտական ռեսուրսները և պատմական կառույցները: Հիմնվելով մի շարք պատմական կառույցների վրա հնագիտական և պատմական RSA-ի շրջանակում, և հաշվի առնելով շինարարության և գործարկման ազդեցությունների չափաբաժինը, SR14A Կառուցման Այլընտրանքը կունենա ամենանվազագույն հավանական ուղակի կամ անուղակի ազդեցությունները մշակութային ռեսուրսների վրա:
- Շրջանային աճ.** Քանի որ Կառուցման Այլընտրանքները նույնական են երկարությամբ և կօգտագործեն միևնույն Բրբանքի Օդանավակայանի Կայարանի (Burbank Airport Station) տարածքը, բոլոր 6 Կառուցման Այլընտրանքների շրջանային աճը չի տարբերվի գործարկման ազդեցությունների ներքո: Այնուամենայնիվ, ազդեցությունները թևակոխող կտարբերվեն շինարարական աշխատանքներից ելնելով: Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շրջանակում կստեղծվեն ավելի շատ շինարարությանը առնչվող աշխատատեղեր/տարի (83,400 և 84,900 համապատասխանաբար, ընդհանուր աշխատանքային տարվա համար շինարարության ընթացքում):
- Կուտակային Ազդեցություններ.** Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները էականորեն չեն տարբերվի E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքներից զգալի կուտակային ազդեցությունների մասնաբաժնի ներդրման առումով: Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածն այլ անցյալ, ներկա և կանխատեսելի ապագա գործողությունների կամ ծրագրերի (կուտակային ծրագրեր) հետ միասին, թվարկված են սույն EIR/EIS փաստաթղթի նախագծի Հավելված 3.19-ում, կհանգեցնեն հետևյալ զգալի կուտակային շինարարության ժամանակահատվածի ազդեցությունների CEQA-ի ներքո. Տրանսպորտ, Օդի որակ (Ընդհանուր համապատասխանություն և շինարարության տեղայնացված ազդեցություններ), Աղմուկ, Հնեաբանական ռեսուրսներ, Սոցիոտնտեսություն և Համայնքներ (բնակչություն և համայնքային ազդեցություններ), Էսթետիկա և Արտաքին տեսքի Որակ: Ի լրումն, Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը այլ կուտակային ծրագրերի հետ միասին կհանգեցնի կուտակային աղմուկի ազդեցություններին HSR Կառուցման Այլընտրանքի երկարաժամկետ շահագործման ընթացքում:

S.8.2.2 E1 և E1A Կառուցման Այլընտրանքներ

E1 և E1A Կառուցման Այլընտրանքային երկու ուղին էլ կունենա մի թեթև ավելի կարճ երկարություն (յուրաքանչյուրը 35 մղոն) քան Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքը (37 մղոն) և SR14A Կառուցման Այլընտրանքի ուղին (38 մղոն), սակայն ավելի երկար քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքային ուղիները (յուրաքանչյուրը 31 մղոն). Ընդհանուր շինարարության ժամանակահատվածը E1 և E1A Կառուցման Այլընտրանքների համաձայն (յուրաքանչյուրը 8.5 տարի) կլինի ավելի երկար քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում (յուրաքանչյուրը 8.3 տարի), սակայն ավելի կարճ քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում (յուրաքանչյուրը 9.3 տարի):

- Տրանսպորտ.** Դեպի հյուսիս և դեպի հարավ շինադրի տեղափոխությունները, կապված E1 և E1A Կառուցման Այլընտրանքային ուղիների հետ, իրենց ազդեցության կենթարկեն ավելի քիչ ճանապարհային հատվածներ, որտեղ Ծառայության որակը (LOS) կիջնի մինչև անընդունելի մակարդակ համեմատած Բարելավված SR14, SR14A, և E2 Կառուցման Այլընտրանքների հետ: Դեպի հարավ շինադրի տեղափոխումը, կապված E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետ կհանգեցնի Ծառայության որակի անկմանը անընդունելի մակարդակի մեկ ավտոմայրուղու հատվածում ցերեկային (AM) պիկ ժամերին, նույն կերպ ինչպես E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում, և ավելի քիչ քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում (որոնցից յուրաքանչյուրի դեպքում ծառայության որակը ինջնում է անընդունելի մակարդակի 2 ավտոմայրուղու հատվածներում ցերեկային պիկ ժամերին): Բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից յուրաքանչյուրի հետ առնչվող դեպի հարավ շինադրի տեղափոխությունը կհանգեցնի Ծառայության որակի անկմանը 2 ավտոմայրուղու հատվածներում երեկոյան (PM) պիկ ժամերին: E1 և E1A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը կհանգեցնի Ծառայության որակի անկմանը անընդունելի մակարդակի ավելի քիչ խաչմերուկներում (1 խաչմերուկ ցերեկային պիկ ժամերին երկու տարբերակների դեպքում, 2 խաչմերուկ E1 Կառուցման Այլընտրանքի դեպքում և 1 խաչմերուկ E1A Կառուցման Այլընտրանքի դեպքում երեկոյան պիկ ժամերին) համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հետ (որոնցից յուրաքանչյուրի համար ծառայության որակը կիջնի 3 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին և 4 խաչմերուկում երեկոյան պիկ ժամերին), սակայն նույն քանակով խաչմերուկ, ինչպես E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում:
- Օդի որակ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքների շինարարության հետևանքով Ածխածնի մոնոքսիդը (CO) չի գերազանցի SCAQMD-ի համապատասխանության ընդհանուր ընդունելի նվազագույն շեմը, իսկ Բարելավված SR14, SR14A, և E2A Կառուցման Այլընտրանքները կգերազանցեն այդ շեմը շինարարության ընթացքում: E1 և E1A Կառուցման Այլընտրանքը կգերազանցի SCAQMD-ի օրական CEQA նվազագույն շեմը Ածխածնի մոնոքսիդը (CO) համար, ավելի քիչ ժամանակահատվածի ընթացքում, քան յուրաքանչյուր այլ Կառուցման Այլընտրանքներից մեկը (միայն 2023թ.): Բոլոր վեց Կառուցման Այլընտրանքների գործարկումը կունենա արդյունավետ ազդեցություն և կնվազեցնի բոլոր աղտոտիչների արտանետումները ողջ նահանգում, եթե համեմատենք առկա և առանց Ծրագրի իրականացման տարբերակի ելակետային տվյալների հետ՝ ուղևորների երթևեկության բոլոր սցենարներով:
- Աղմուկ և թրթռումներ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը կհանգեցնի աղմուկի ազդեցությունների Harold/Alpine և Agua Dulce համայնքներում, ինչպես նաև Palmdale-ի և Acton-ի միջև տեղակայված Southern California Edison Vincent ենթակայանի մոտ գտնվող համայնքում (Նկար S-13): E1 և E1A Կառուցման Այլընտրանքների շինարարությանը առնչվող շինադրի տեղափոխությունը կենթարկի

աղմուկի ազդեցության աղմուկի նկատմամբ զգայուն կառույցները, որոնք գտնվում են Aliso Canyon Road-ի, Soledad Canyon Road-ի, Crown Valley Road-ի Palmdale-ից հարավ, Sand Canyon Road-ի, և Placerita Canyon Road-ի դարպասների և հորանցքի տարածքների շրջակայքում: E1A Կառուցման Այլընտրանքի գործարկումը կունենա աղմուկի ամենամեղմ ազդեցությունները բոլոր 6 տարբերակներից, ի հակառակ Բարելավված SR14, SR14A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքների, E1 և E1A Կառուցման Այլընտրանքները չեն ենթարկվի աղմուկի ազդեցություններին տնային կենդանիների վրա: E1 և E1A Կառուցման Այլընտրանքներ, այնուամենայնիվ, աղմուկի ազդեցության կենթարկեն վայրի բնության կենդանիներին:

- Էլեկտրամագնիսական Դաշուեր և Էլեկտրամագնիսական Միջամտություն.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը կառաջացնի EMI այն հաստատություններում, որտեղ կարող են գործարկվել զգայուն սարքավորումներ. Դրանցից են Serra Medical Group-ը և Pacifica Hospital-ը: E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կխուսափեն այս ազդեցությունից: Բարելավված E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կհանդիպեն ավելի շատ առկա երկաթուղային գծերի, որոնք կարող են ենթարկվել EMI ազդեցությանը (16 մղոն և 15 մղոն երկաթգծի ուղի, համապատասխանաբար), ավելի շատ քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում (13 մղոն և 14 մղոն համապատասխանաբար) և E2 և E2A Կառուցման Այլընտրանքները (12 մղոն և 11 մղոն, համապատասխանաբար):
- Հանրային կոմունալ ծառայություններ և Էներգիա.** E1 և E1A տարբերակները շինարարության ընթացքում կհանգեցնեն ավելի քիչ բարձր ռիսկային և հիմնական ցածր ռիսկային կոմունալ ծառայությունների հակասությունների (կոնֆլիկտների) (400 կոմունալ ծառայությունների ընդհանուր կոնֆլիկտ և 345 կոմունալ ծառայությունների ընդհանուր կոնֆլիկտ, համապատասխանաբար), համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հետ (461 և 410, համապատասխանաբար), սակայն ավելի շատ քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում (278 և 264, համապատասխանաբար): SR14A Կառուցման Այլընտրանքի շինարարությունը կունենա ամենամեծ ընդհանուր ջրի պահանջը բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից: Շինարարության ընթացքում SR14A Կառուցման Այլընտրանքը նույնպես կսպառի ամենաշատ էներգիան և կկուտակի ամենաշատ պինդ աղբը մյուս Կառուցման Այլընտրանքներից: Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքը կսպառի ավելի շատ էներգիա շինարարության ընթացքում և կկուտակի ավելի շատ պինդ աղբ քան E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքները:
- Կենսաբանական և Ջրային Ռեսուրսներ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքները ազդեցություն կներգործեն հատուկ կարգավիճակ ունեցող բույսերի տեսակների կենսամիջավայրի ամենաքիչ տարածքները հեկտարներով, ինչպես նաև հատուկ կարգավիճակ ունեցող վայրի բնության ամենաքիչ տեսակների վրա, որոնք գրանցված են ոչ Դաշնային Վտանգաված Տեսակների մասին Օրենքի (non-federal Endangered Species Act (FESA)) համաձայն: Ջրային ռեսուրսների առնչությամբ, E1A Կառուցման Այլընտրանքը ազդեցության կենթարկի ԱՄՆ ամենաքիչ ջրային տարածքները հեկտարներով: E1A Կառուցման Այլընտրանքը նաև ամենաքիչ ազդեցությունը կունենա լճերի և առուների հունների վրա, որոնք ենթակա են Կալիֆորնիայի Ձկների և Թռչունների Օրենքի կարգավորմանը (California Fish and Game Code Section 1600 et. Seq): Գետնուղու աշխատանքների հետևանքով ստորերկրյա ջրերի մակերևութային ջրերում օժանդակության փոփոխությունը կարող է անբարենպաստորեն անդրադառնալ ջրային կենսամիջավայրի վրա՝ փոփոխելով ջրային կենսամիջավայրերի քանակը և որակը դրա հետ առնչվող կենսաբանական ռեսուրսների համար: E1 և E1A Կառուցման

Այլընտրանքները կունենան ամենամեծ հավանականությունը անբարենպաստ ազդեցություն ներգործելու հատուկ կարգավիճակ ունեցող երկկենցաղների և սողունների կենսամիջավայրի վրա՝ ANF-ի տակ գետնուղու աշխատանքների հետևանքով:

- Հիդրոլոգիա և Ջրային Ռեսուրսներ.** Palmdale-ից մինչև Burbank հատվածում, Բարելավված E1 Կառուցման Այլընտրանքը կընդգրկի 41 մակերևութային ջրերի վերգետնյա անցում (այդ թվում անցումներ բարձրացված, առափնյա կամ խորշով և ծածկով թունելներով) և յոթ անցում վիադուկերով, E1A Կառուցման Այլընտրանքը կընդգրկի մակերևութային ջրերի 42 վերգետնյա անցում և երեք անցում վիադուկով: Ինչպես Բարելավված SR14 Այլընտրանքային ուղու դեպքում, E1 Կառուցման Այլընտրանքը կհատի Ունա լիճը (Una Lake) առափնյա ճանապարհով, և ի հակառակ E1A Կառուցման Այլընտրանքի կխուսափի Ունա Լճից (Una Lake), հետևելով ավելի արևելյան ուղղությամբ, մոտավորապես Ունա Լճից (Una Lake) 300 ֆուտ դեպի արևելք: E1 Կառուցման Այլընտրանքը կհատի Կալիֆոռնիայի Ջրատարը (California Aqueduct) բարձրացված կամ առափնյա ճանապարհով և Սանտա Կլարա գետի (Santa Clara River) վտակները Palmdale-ից հարավ՝ վիադուկով, E1A Կառուցման Այլընտրանքը կհետևի դեպի ավելի արևելյան ուղղությամբ ուղու այս հատվածում և նույնպես կհատի Կալիֆոռնիայի Ջրատարը (California Aqueduct) Սանտա Կլարա գետի (Santa Clara River) վտակները: Aliso Canyon-ից հարավ, E1 և E1A Կառուցման Այլընտրանքները գրեթե ամբողջությամբ կխուսափեն մակերևութային ջրերից Antelope Valley-ի և the San Fernando Valley-ի մինչև՝ մտնելով գետնուղի ANF-ի այդ թվում SGMNM-ի տակ: E1 և E1A Կառուցման Այլընտրանքների ուղիները կհատեն ANF-ը այն տարածքներով, որտեղ կան հայտնի կամ քարտեզագրված աղբյուրներ կամ առուներ, ինչը ցույց է տալիս, որ առկա է հավանական ազդեցության վտանգ հիդրոերկրաբանական ռեսուրսների վրա շինարարության ընթացքում: E1 և E1A Կառուցման Այլընտրանքների գետնուղիները կանցնեն ավելի երկար տարածություն, քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների գետնուղիները՝ ստորերկրյա ջրերի բարձր ճնշման տարածքներում, մեծացնելով հիդրոերկրաբանական ազդեցությունների հավանականությունը, ինչը տեղի է ունենում գետնուղիներում արտահոսքերի հետևանքով: E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կհանդիպեն ավելի շատ առուների ANF-ի, այդ թվում SGMNM-ի շրջանակում, համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հետ, բայց կհանդիպեն ավելի քիչ առուների քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում: E1 և E1A Կառուցման Այլընտրանքների ուղիները կանցնեն ավելի փոքր ընդհանուր լայնություն ունեցող ճեղքվածքներով ANF-ի, այդ թվում SGMNM-ի շրջանակում՝ մեծացնելով գետնուղիներում արտահոսքի հավանականությունը: ANF-ից հարավ, E1 և E1A Կառուցման Այլընտրանքների ուղիները կհատեն Hansen Spreading Grounds-ը և ջրանցքը: E1 և E1A Կառուցման Այլընտրանքներ մշտապես կնվազեցնեն ստորերկրյա ջրերի լիցքավորվող լ-ակների չափսերը Hansen Spreading Grounds-ում: E1 և E1A Կառուցման Այլընտրանքները շինարարությունը կառաջացնի ավելի քիչ հողի խանգարումների տարածքներ հեկտարներով, քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները, սակայն կխանգարվեն ավելի շատ տարածքներ հեկտարներով քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում: E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կհանգեցնի հողի խանգարման ավելի շատ տարածքների ակրերով շինարարության ընթացքում՝ ջրհեղեղման վտանգի տակ գտնվող հատուկ տարածքների շրջանակում, քան կլինի Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում, սակայն ավելի քիչ քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում:
- Երկրաբանություն, Հողեր, Մեյամիկություն և Հնետարանական Ռեսուրսներ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կպահանջեն ավելի քիչ մշտական կառույցներ՝ վտանգավոր և հավանականորեն վտանգավոր ճեղքվածքների գոտիներում, քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները: Այնուամենայնիվ, E1 և E1A Կառուցման

Այլընտրանքները կենթարկվեն ավելի մեծ վտանգների այդ ճեղվածքների գոտիներից, քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքները: E1 և E1A Կառուցման Այլընտրանքները նաև ավելի փոքր ազդեցությունների կենթարկվեն շրջանային կարևորություն ունեցող հանքային ռեսուրսները, համեմատած Բարելավված SR14, SR14A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքների հետ:

- Վտանգավոր Նյութեր և Թափոններ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբ՝ հողային աշխատանքների արդյունքում փորելով աղտոտված հողերը, որոնք առնչվում են PEC տարածքներին Vulcan Mine-ի և San Fernando Valley-ում Hansen Spreading Grounds-ի տեղանքներում, Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբ նույնկերպ, ինչպես E1 և E1A Կառուցման Այլընտրանքների դեպքում, և E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբ Big Tujunga Wash անցումից հարավ և CalMat Mine աղբանոցում: E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն ամենաքիչ հավանականորեն աղտոտված շինարարական աղբը (մոտավորապես 3 mcy) համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների (մոտավորապես 9 mcy) և E2 և E2A Կառուցման Այլընտրանքների (մոտավորապես 4 mcy) հետ: E1 և E1A Կառուցման Այլընտրանքներից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել վտանգավոր նյութերի հետ աշխատելուն 0.25 մղոն հեռավորության վրա գտնվող 10 կրթական հաստատություններից, ավելի քիչ քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում (18-ից 21 և 23-ից 26 10 կրթական հաստատություն համապատասխանաբար՝ կախված ընտրված հորանցքի տարբերակից), սակայն ավելի շատ քան E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում (6 կրթական հաստատություն յուրաքանչյուրը):
- Ապահովություն և Անվտանգություն.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքները կհանգեցնեն ավելի շատ ճանապարհների մշտական փակմանը շինարարության հետևանքով (13 ճանապարհի փակում և 12 ճանապարհի փակում, համապատասխանաբար), համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների (9 ճանապարհի փակում և 5 ճանապարհի փակում, համապատասխանաբար) և E2 և E2A Կառուցման Այլընտրանքների (11 ճանապարհի փակում և 10 ճանապարհի փակում, համապատասխանաբար) հետ: Այս փակումները կունենան միևնույն հավանականությունը՝ ստեղծելու երթևեկության վտանգներ յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի համար. իսկ մակարդակների բաժանումը, իրականացված որպես ծրագրի նախագծման մաս, նվազագույնին կհասցնի երթևեկության վտանգները: Յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի հարևանությամբ գտնվում է Բըրբանքի Հոլիվուդ օդանավակայանը (Hollywood Burbank Airport): Ի լրումն, E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հարևանությունը ընդգրկում է Whiteman Օդանավակայանը:
- Սոցիոտնտեսություն և Համայնքներ.** Ինչպես քննարկվել է S.5.3.6 բաժնում, Կառուցման Այլընտրանքների համար կպահանջվեն հորանցքներ և միջանկյալ պատուհաններ՝ ուղու թունելային հատվածներ մուտք ունենանլու համար: Հետևաբար, այստեղ դիտարկված են մի շարք չափելի ազդեցություններ, որոնք կարող են բխել յուրաքանչյուր հորանցքի կամ միջանկյալ պատուհանի համադրության ընտրությունից: E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետևանքով կտեղահանվեն ավելի քիչ առկա մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի միավոր (13-ից 18 և 12-ից 17, համապատասխանաբար) համեմատած Բարելավված SR14 –ի շրջանակում տեղահանվածների քանակի հետ (38-ից 41) կամ E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում (38 և 37, համապատասխանաբար), սակայն ավելի քան SR14A Կառուցման Այլընտրանքի դեպքում (8-ից 11): E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետևանքով կտեղահանվի 11

բազմընտանիք բնակելի միավոր և 27 բազմընտանիք բնակելի միավոր, համապատասխանաբար, ավելի քիչ քան Բարելաված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շրջանակում տեղահանվածների քանակի (13 և 29, համապատասխանաբար) և նույնը ինչ E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում (11 և 27, համապատասխանաբար): E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետևանքով կտեղահանվեն 160-ից 177 բիզնես և 162-ից 179 բիզնես, համապատասխանաբար, ավելի շատ, քան կտեղահանվի E2 և E2A Կառուցման Այլընտրանքների դեպքում (68 և 70, համապատասխանաբար) և մոտավորապես նույն քանակը կլինի Բարելաված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների շրջանակում (161-ից 178 և 160-ից 177, համապատասխանաբար):

- Գյուղատնտեսական Հողատարածքներ և Անտառային Հողեր.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքները չեն հանգեցնի կարևոր գյուղատնտեսական հողատարածքների մշտական փոխակերպմանը: Էլեկտրահաղորդման գծերը, որոնք ձգվում են E1 և E1A Կառուցման Այլընտրանքի հետ առնչվող հորանցքի կառույցից կհասնեն անտառային հողեր: USFS-ի հատուկ օգտագործման թույլտվության պահանջի կատարումը (Special Use Authorization) ներառում է մի քանի պահանջ, այդ թվում նրանք, որոնք պահանջում են Ղեկավար Մարմնից խուսափել շրջակա միջավայրի վնասումից կամ աղտոտումից, կամ հակառակ դեպքում պատասխանատվություն կրել դրա համար. պահանջները համապատասխան կերպով կապահովեն որպեսզի հնարավոր լինի պատշաճորեն խուսափել, նվազագույնին հասցնել կամ փոխհատուցել անտառային հողի մշտական կորուստը կամ անտառային հողի փոխակերպումը ոչ անտառային օգտագործման, ինչը կարող է բխել մշտական հորանցքի կառույցների շինարարությունից ANF-ի շրջանակում:
- Ջրոսայգիներ, Հանգստյան Գոտիներ և Բացօթյա Տարածքներ.** E1 Կառուցման Այլընտրանքի ենթակառուցվածքը տեղակայված կլինի 17 զբոսայգու, հանգստյան գոտու, կամ բացօթյա տարածքների մոտակայքում, E1A Կառուցման Այլընտրանքը տեղակայված կլինի 18 զբոսայգու, հանգստյան գոտու, կամ բացօթյա տարածքների մոտակայքում: Ուղակի և անուղակի ազդեցությունները զբոսայգիների, հանգստյան գոտիների, կամ բացօթյա տարածքների ռեսուրսների վրա կլինեն ավելի քիչ քան նշանակալի:
- Էսթեթիկա և Արտաքին տեսքի Որակ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքները հիմնականում կառուցվելու են վերգետնյա մակարդակից ներքև, և հետևաբար կունենան ավելի քիչ մշտական կառույցներ և այդպիսով ավելի քիչ ազդեցությունների կենթարկեն շրջապատի արտաքին տեսքը:
- Մշակութային Ռեսուրսներ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը զգալի և անխուսափելի տեսանելի ազդեցություններ կներգործի երկու պատմական կառույցների վրա. Blum Ranch և Blum Ranch Farmhouse: E1 և E1A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը հնագիտական ռեսուրսները կենթարկի ավելի քիչ քան նշանակալի ազդեցության, և գործարկման ազդեցությունները պատմական կառույցների ռեսուրսների վրա կարող է բերվել ավելի քիչ քան նշանակալի մակարդակի:
- Շրջանային աճ.** Քանի որ Կառուցման Այլընտրանքները նույնական են երկարությամբ և կօգտագործեն միևնույն Բրբանքի Օդանավակայանի Կայարանի (Burbank Airport Station) տարածքը, բոլոր 6 Կառուցման Այլընտրանքների շրջանային աճը չի տարբերվի գործարկման ազդեցությունների ներքո: Այնուամենայնիվ, ազդեցությունները թևաթևակիորեն կտարբերվեն շինարարական աշխատանքներից ելնելով: E1 Կառուցման Այլընտրանքի շրջանակում կստեղծվի ամենաքիչ շինարարությանը առնչվող աշխատատեղերը/տարի (80,300 ընդհանուր աշխատատեղ/տարի շինարարության ընթացքում), E1A Կառուցման Այլընտրանքի շրջանակում կստեղծվի ավելի քիչ

շինարարությանը առնչվող աշխատատեղեր/տարի (81,600 ընդհանուր աշխատատեղ/տարի շինարարության ընթացքում) քան կլինի Բարելավված SR14, SR14A և E2A Կառուցման Այլընտրանքների պարագայում:

- Կուտակային Ազդեցություններ.** E1 և E1A Կառուցման Այլընտրանքները էականորեն չեն տարբերվի Բարելավված SR14, SR14A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքներից զգալի կուտակային ազդեցությունների մասնաբաժնի ներդրման առումով: Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածն այլ անցյալ, ներկա և կանխատեսելի ապագա գործողությունների կամ ծրագրերի (կուտակային ծրագրեր) հետ միասին, թվարկված են սույն EIR/EIS փաստաթղթի նախագծի Հավելված 3.19-ում, կհանգեցնեն հետևյալ զգալի կուտակային շինարարության ժամանակահատվածի ազդեցությունների CEQA-ի ներքո. Տրանսպորտ, Օդի որակ (Ընդհանուր համապատասխանություն և շինարարության տեղայնացված ազդեցություններ), Աղմուկ, Հնեաբանական ռեսուրսներ, Մոցիոտնտեսություն և Համայնքներ (բնակչություն և համայնքային ազդեցություններ), Էսթետիկա և Արտաքին տեսքի Որակ: Ի լրումն, Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը այլ կուտակային ծրագրերի հետ միասին կհանգեցնի կուտակային աղմուկի ազդեցություններին HSR Կառուցման Այլընտրանքի երկարաժամկետ շահագործման ընթացքում:

S.8.2.3 E2 և E2A Կառուցման Այլընտրանքներ

E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կունենան ամենակարճ ընդհանուր երկարությունը, սակայն ամենաերկար կառուցման ժամանակահատվածը համեմատած բոլոր 6 Կառուցման Այլընտրանքների հետ:

- Տրանսպորտ.** Դեպի հյուսիս և դեպի հարավ շինադրի տեղափոխությունները, կապված E2 և E2A Կառուցման Այլընտրանքային ուղիների հետ, իրենց ազդեցության կենթարկեն ավելի քիչ ճանապարհային հատվածներ, որտեղ Ծառայության որակը (LOS) կիջնի մինչև անընդունելի մակարդակ համեմատած E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետ, սակայն ավելի շատ ճանապարհային հատվածների ազդեցությունն քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում: Դեպի հյուսիս և դեպի հարավ շինադրի տեղափոխությունները, կապված E2 և E2A Կառուցման Այլընտրանքային ուղիների հետ, իրենց ազդեցության կենթարկեն ավելի քիչ խաչմերուկներ, համեմատած Բարելավված SR14, SR14A, E1, և E1A Կառուցման Այլընտրանքների հետ: Դեպի հարավ շինադրի տեղափոխումը, կապված E2 և E2A Կառուցման Այլընտրանքների հետ կհանգեցնի Ծառայության որակի անկմանը անընդունելի մակարդակի մեկ ավտոմայրուղու հատվածում ցերեկային (AM) պիկ ժամերին, նույն կերպ ինչպես E1 և E1A Կառուցման Այլընտրանքների դեպքում, և ավելի քիչ քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում (որոնցից յուրաքանչյուրի դեպքում ծառայության որակը ինջնում է անընդունելի մակարդակի 2 ավտոմայրուղու հատվածներում ցերեկային պիկ ժամերին): E2 և E2A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը կհանգեցնի Ծառայության որակի անկմանը անընդունելի մակարդակի ավելի քիչ խաչմերուկներում (1 խաչմերուկ ցերեկային պիկ ժամերին երկու տարբերակների դեպքում, 2 խաչմերուկ E2 Կառուցման Այլընտրանքի դեպքում և 1 խաչմերուկ E2A Կառուցման Այլընտրանքի դեպքում երեկային պիկ ժամերին) համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հետ (որոնցից յուրաքանչյուրի համար ծառայության որակը կիջնի 3 խաչմերուկում ցերեկային պիկ ժամերին և 4 խաչմերուկում երեկային պիկ ժամերին), սակայն նույն քանակով խաչմերուկ, ինչպես E1 և E1A Կառուցման Այլընտրանքների դեպքում:

- Օդի որակ.** E2A Կառուցման Այլընտրանքը միակ Կառուցման Այլընտրանքն է, որը կգերազանցի AVAQMD-ի համապատասխանության ընդհանուր ընդունելի նվազագույն շեմը Nox-ի համար (2023թ-ին) և AVAQMD CEQA շեմերը NOx-ի համար (2023թ-ին): Ինչպես Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում, the E2A Կառուցման Այլընտրանքը ևս կգերազանցի SCAQMD-ի համապատասխանության ընդհանուր ընդունելի նվազագույն շեմը Ածխածնի մոնոքսիդի (CO) համար շինարարության ընթացքում (2022թ-ին և 2024 – 2025թթ): Բոլոր վեց Կառուցման Այլընտրանքների գործարկումը կունենա արդյունավետ ազդեցություն և կնվազեցնի բոլոր աղտոտիչների արտանետումները ողջ նահանգում, եթե համեմատենք առկա և առանց Ծրագրի իրականացման տարբերակի ելակետային տվյալների հետ՝ ուղևորների երթևեկության բոլոր սցենարներով:
- Աղմուկ և թրթռումներ.** Վեց Կառուցման Այլընտրանքներից, E2 և E2A Կառուցման Այլընտրանքները աղմուկի և թրթռումների Ազդեցությունների կենթարկեն գրեթե բոլոր բնակելի համայնքները (Նկար S-13). E2 և E2A Կառուցման Այլընտրանքների ուղիների շինարարությանը առնչվող շինարարի տեղափոխությունը կենթարկի աղմուկի ազդեցության Wheatland Avenue-ն Shadow Hills թաղամասում, Foothill Boulevard-ի երկայքնով Lake View Terrace թաղամասում, և Aliso Canyon Road-ի, Crown Valley Road-ի, և Soledad Canyon Road-ի երկայքնով՝ Palmdale-ից հարավ: E2 և E2A Կառուցման Այլընտրանքների գործարկումը նույնպես աշխատանքային աղմուկի ազդեցությունների կենթարկի ամենազգայուն ընկալիչները: Ի հակառակ այլ Կառուցման Այլընտրանքների, E2 և E2A Կառուցման Այլընտրանքների գործարկումը չի հանգեցնի հատակից բխող թրթռումների ազդեցությունների բնակելի զգայուն ընկալիչներին: Ինչպես Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում, E2 և E2A Կառուցման Այլընտրանքները աղմուկի ազդեցություններին կենթարկեն տնային կենդանիներին և վայրի բնությանը: Ի հակառակ, E1 և E1A Կառուցման Այլընտրանքները աղմուկի ազդեցության կենթարկեն միայն վայրի բնության կենդանիներին:

- **Էլեկտրամագնիսական Դաշտեր և Էլեկտրամագնիսական Միջամտություն.** Ի հակառակ ի հարելաված SR14, SR14A, E1, և E1A Կառուցման Այլընտրանքների, E2 և E2A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը չի առաջացնի EMI ազդեցություններ այն հաստատություններում, որտեղ կարող են գործարկվել զգայուն սարքավորումներ և կիսոսափի EMI ազդեցությունների հավանական զգայուն ընկալիչների նկատմամբ RSA-ի շրջանակում: E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կհանդիպեն ամենակարճ առկա երկաթուղային գծերի, որոնք կարող են ենթարկվել EMI ազդեցությանը (12 մղոն և 11 մղոն երկաթգծի ուղի, համապատասխանաբար) համեմատած Բարելաված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների (13 մղոն և 14 մղոն համապատասխանաբար) և E1 և E1A Կառուցման Այլընտրանքների (16 մղոն և 15 մղոն, համապատասխանաբար) հետ:
- **Հանրային կոմունալ ծառայություններ և Էներգիա.** E2 և E2A տարբերակները շինարարության ընթացքում կհանգեցնեն ավելի քիչ բարձր ռիսկային և հիմնական ցածր ռիսկային կոմունալ ծառայությունների հակասությունների (կոնֆլիկտների) (278 կոմունալ ծառայությունների ընդհանուր կոնֆլիկտ և 264 կոմունալ ծառայությունների ընդհանուր կոնֆլիկտ, համապատասխանաբար), համեմատած Բարելաված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հետ (461 և 410, համապատասխանաբար), և E1 և E1A Կառուցման Այլընտրանքների հետ (400 և 345, համապատասխանաբար): E2 Կառուցման Այլընտրանքի շինարարությունը կպահանջի ամենաքիչ ջրի սպառումը և կկուտակի ամենաքիչ քանակի պինդ աղբ բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից: Բարելաված SR14 Կառուցման Այլընտրանքը կսպառի ավելի շատ էներգիա շինարարության ընթացքում և կկուտակի ավելի շատ պինդ աղբ բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից: Շինարարության ընթացքում E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կսպառեն ավելի շատ էներգիա, քան E1 և E1A Կառուցման Այլընտրանքները, սակայն ավելի քիչ քան Բարելաված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները:
- **Կենսաբանական և Ջրային Ռեսուրսներ.** E2 և E2A Կառուցման Այլընտրանքներ ազդեցություն կներգործեն ավելի շատ հատուկ կարգավիճակ ունեցող բույսերի տեսակների կենսամիջավայրի վրա քան E1 և E1A Կառուցման Այլընտրանքները, սակայն ավելի քիչ քան Բարելաված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքները: Բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից, E2A Կառուցման Այլընտրանքը ազդեցություն կներգործի հատուկ կարգավիճակ ունեցող վայրի բնության տեսակների կենսամիջավայրի ամենաքիչ տարածքների վրա հեկտարներով: E2 Կառուցման Այլընտրանքը ազդեցության կենթարկի ԱՄՆ ճահճային ջրերի ամենամեծ տարածքները հեկտարներով, այնուամենայնիվ E2A Կառուցման Այլընտրանքը իր ազդեցությանը կենթարկի ԱՄՆ-ի ոչ ճահճային ջրերի ամենափոքր տարածքները՝ հեկտարներով: E2 Կառուցման Այլընտրանքը ազդեցություն կներգործի Ունա լճի (Una Lake) վրա, որը կենսամիջավայր է ապահովում մի քանի հատուկ կարգավիճակ ունեցող տեսակների համար: Գետնուղու աշխատանքների հետևանքով ստորերկրյա ջրերի մակերևույթային ջրերում օժանդակության փոփոխությունը կարող է անբարենպաստորեն անդրադառնալ ջրային կենսամիջավայրի վրա՝ փոփոխելով ջրային կենսամիջավայրերի քանակը և որակը դրա հետ առնչվող կենսաբանական ռեսուրսների համար: E2 և E2A Կառուցման Այլընտրանքները միակ տարբերակներ են, որոնք կարող են հավանական ազդեցություն բերգործել հատուկ կարգավիճակի թռչունների և ձկների կենսամիջավայրին՝ ANFի տակ գետնուղու աշխատանքների հետևանքով:
- **Հիդրոլոգիա և Ջրային Ռեսուրսներ.** E2 Կառուցման Այլընտրանքը կընդգրկի 34 մակերևույթային ջրերի վերգետնյա անցում (այդ թվում անցումներ բարձրացված, առափնյա կամ խորշով և ծածկով թունելներով) և ութ անցում վիադուկերով, E2 Կառուցման Այլընտրանքը կհատի Ունա լիճը (Una Lake) առափնյա ճանապարհով, ի

հակառակ E2A Կառուցման Այլընտրանքը կխուսափի Ունա Լճից (Una Lake), հետևելով ավելի արևելյան ուղղությամբ, մոտավորապես Ունա Լճից (Una Lake) 300 ֆուտ դեպի արևելք: E2 և E2A Կառուցման Այլընտրանքի ուղիները կհատեն Կալիֆորնիայի Ջրատարը (California Aqueduct) բարձրացված կամ առափնյա ճանապարհով և նույնպես կհատեն Սանտա Կլարա գետի (Santa Clara River) վտակները Palmdale-ից հարավ, E2A Կառուցման Այլընտրանքը կհետևի ավելի արևելյան ուղղությամբ ուղու այս հատվածում և նույնպես կհատի Կալիֆորնիայի Ջրատարը (California Aqueduct) Սանտա Կլարա գետի (Santa Clara River) վտակները: Aliso Canyon-ից հարավ, E2 և E2A Կառուցման Այլընտրանքները գրեթե ամբողջությամբ կխուսափեն մակերևութային ջրերից Antelope Valley-ի և the San Fernando Valley-ի միջև՝ մտնելով գետնուղի ANF-ի այդ թվում SGMNM-ի տակ: E2 և E2A Կառուցման Այլընտրանքի ուղիները կհատեն Big Tujunga Wash-ը (վիադուկով) ANF-ից հարավ: E2 և E2A Կառուցման Այլընտրանքի ուղիները կհատեն ANF-ը այն տարածքներով, որտեղ կան ամենահայտնի կամ քարտեզագրված աղբյուրներ կամ առուներ, ինչը ցույց է տալիս, որ առկա է հավանական ազդեցության վտանգ հիդրոերկրաբանական ռեսուրսների վրա շինարարության ընթացքում: E2 և E2A Կառուցման Այլընտրանքի գետնուղիները կանցնեն ամենաերկար տարածությունը, ստորերկրյա ջրերի բարձր ճնշման տարածքներում, համեմատած Բարելավված SR14, SR14A, E1, և E1A Կառուցման Այլընտրանքների ուղիների հետ, և այդպիսով E2 և E2A Կառուցման Այլընտրանքները ավելի մեծ ազդեցության վտանգ են ներկայացնում հիդրոերկրաբանական ռեսուրսների վրա: E2 և E2A Կառուցման Այլընտրանքներ նաև տեղակայված կլինեն 1 մղոն հեռավորության վրա ավելի շատ առուների տարածքում ANF-ի շրջանակում և կհանդիպեն ամենամեծ ընդհանուր լայնություն ունեցող ճեղքվածքներով՝ մեծացնելով գետնուղիներում արտահոսքի հավանականությունը: E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կընդգրկեն շինարարության ընթացքի ամենաշատ հողի խանգարումները և մշտական հատակագիծը ջրհեղեղման վտանգի տակ գտնվող հատուկ տարածքների շրջանակում, սակայն կունենա ամենաքիչ ստորերկրյա ջրհորներ ուղու կենտրոնագծից 1 մղոն հեռավորության վրա:

- Երկրաբանություն, Հողեր, Մեյսմիկություն և Հնեաբանական Ռեսուրսներ.** E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կներառեն ամենավոքը մշտական հատակագիծը ամբարտակի հեղեղման գոտիներում և կպահանջեն շինարարական նյութերի ամենամեծ քանակը շինարարության համար: E2 և E2A Կառուցման Այլընտրանքների շրջանակում հնեաբանական ռեսուրսները կենթարկվեն միևնույն ազդեցություններին ինչ E1 և E1A Կառուցման Այլընտրանքների դեպքում, սակայն ավելի քիչ ազդեցությունների կենթարկեն շրջանային կարևորություն ունեցող հանքային ռեսուրսները, համեմատած Բարելավված SR14, SR14A, E1, և E1A Կառուցման Այլընտրանքների հետ:
- Վտանգավոր Նյութեր և Թափոններ.** E2 և E2A Կառուցման Այլընտրանքները Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբ՝ հողային աշխատանքների արդյունքում փորելով աղտոտված հողերը, որոնք առնչվում են PEC տարածքներին Big Tujunga Wash անցումից հարավ և CalMat Mine աղբանոցում, Բարելավված SR14, SR14A, E1, և E1A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն աղտոտված շինարարական աղբը Vulcan Mine-ի և San Fernando Valley-ում Hansen Spreading Grounds-ի տեղանքներում: E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կկուտակեն ավելի քիչ հավանականորեն աղտոտված շինարարական աղբը (մոտավորապես 4 mcy) համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների (մոտավորապես 9 mcy) հետ, սակայն ավելի շատ քան E1 և E1A Կառուցման Այլընտրանքների (մոտավորապես 3 mcy) դեպքում: E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կարող են հանգեցնել վտանգավոր նյութերի հետ աշխատելուն 0.25 մղոն հեռավորության վրա գտնվող 6 կրթական հաստատություններից, ավելի քիչ քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների (18-ից 21 և 23-ից 26 10 կրթական հաստատություն

համապատասխանաբար՝ կախված ընտրված հորանցքի տարբերակից) և E1 և E1A Կառուցման Այլընտրանքների (10 կրթական հաստատություն յուրաքանչյուրը) դեպքում:

- **Ապահովություն և Անվտանգություն.** Բարելավված E2 և E2A Կառուցման Այլընտրանքները կհանգեցնեն ավելի շատ ճանապարհների մշտական փակմանը շինարարության հետևանքով (11 ճանապարհի փակում և 10 ճանապարհի փակում, համապատասխանաբար) համեմատած Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների (9 ճանապարհի փակում և 5 ճանապարհի փակում, համապատասխանաբար) հետ, սակայն ավելի քիչ քան E1 և E1A Կառուցման Այլընտրանքների դեպքում (13 ճանապարհի փակում և 12 ճանապարհի փակում, համապատասխանաբար): Այս փակումները կունենան միևնույն հավանականությունը՝ ստեղծելու երթևեկության վտանգներ յուրաքանչյուր Կառուցման Այլընտրանքի համար. իսկ մակարդակների բաժանումը, իրականացված որպես ծրագրի նախագծման մաս, նվազագույնին կհասցնի երթևեկության վտանգները: E2 և E2A Կառուցման Այլընտրանքների հարևանությունը ընդգրկում է ամենաքիչ օդանավակայանների և թռիչքուղիների տեղակայում, բացառությամբ Բրոքսթանքի Հոլիվուդ օդանավակայանի (Hollywood Burbank Airport):
- **Սոցիոտնտեսություն և Համայնքներ.** Ինչպես քննարկվել է Section S.5.3.6 բաժնում, Կառուցման Այլընտրանքների համար կպահանջվեն հորանցքեր և միջանկյալ պատուհաններ ուղու թունելային հատվածներ մուտք ունենանլու համար: Հետևաբար, այստեղ դիտարկված են մի շարք չափելի ազդեցություններ, որոնք կարող են բխել յուրաքանչյուր հորանցքի կամ միջանկյալ պատուհանի համադրության ընտրությունից: E2 և E2A Կառուցման Այլընտրանքների հետևանքով կտեղահանվեն 38 և 37 առկա մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի միավոր, համապատասխանաբար, ինչը ավելի շատ է, քան E1, E1A, և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում (13-ից 18; 12-ից 17; և 8-ից 11 մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի միավոր, համապատասխանաբար), սակայն ավելի քիչ է, քան Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի տարբերակում (38-ից 41): E2 և E2A Կառուցման Այլընտրանքների հետևանքով կտեղահանվեն 11 բազմընտանիք բնակելի միավոր և 27 բազմընտանիք բնակելի միավոր, համապատասխանաբար, E2 Կառուցման Այլընտրանքի հետևանքով կտեղահանվի ավելի քիչ բազմընտանիք բնակելի միավոր քան Բարելավված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների դեպքում (13 և 29, համապատասխանաբար) և նույն քանակի բազմընտանիք բնակելի միավոր E1 և E1A Կառուցման Այլընտրանքների դեպքում (11 և 27, համապատասխանաբար): E2 և E2A Կառուցման Այլընտրանքների հետևանքով կպահանջվի ամենաքիչ քանակով բիզնեսների տեղահանում (68 և 70 բիզնես, համապատասխանաբար) համեմատած բիզնեսների տեղահանման քանակի հետ E1-ի շրջանակում (160-ից 177) և E1A-ի տարբերակում (162-ից 179) կամ Բարելավված SR14-ի դեպքում (161-ից 178) և SR14A Կառուցման Այլընտրանքի դեպքում (160-ից 177):
- **Գյուղատնտեսական Հողատարածքներ և Անտառային Հողեր.** E2 և E2A Կառուցման Այլընտրանքները չեն հանգեցնի կարևոր գյուղատնտեսական հողատարածքի կամ անտառային ռեսուրսների մշտական փոխակերպումների:
- **Զբոսայգիներ, Հանգստյան Գոտիներ և Բացօթյա Տարածքներ.** E2 Կառուցման Այլընտրանքի ենթակառուցվածքը տեղակայված կլինի 13 զբոսայգու, հանգստյան գոտու, կամ բացօթյա տարածքների մոտակայքում, E2A Կառուցման Այլընտրանքը տեղակայված կլինի 14 զբոսայգու, հանգստյան գոտու, կամ բացօթյա տարածքների մոտակայքում: Դա ավելի քիչ է քան մյուս չորս Կառուցման Այլընտրանքների երթուղիների պարագայում: Այնուամենայնիվ, ուղակի և անուղակի ազդեցությունը Հանսենի Ամբարտակի բացօթյա տարածքի (Hansen Dam Open Space-ի) վրա E2 և E2A Կառուցման Այլընտրանքների ներքո

իրենից ներկայացնում է ամենազգալի ազդեցությունները զբոսայգիների, հանգստյան գոտիների, կամ բացօթյա տարածքների ռեսուրսների վրա բոլոր վեց Կառուցման Այլընտրանքներից:

- **Էսթեթիկա և Արտաքին տեսքի Որակ.** E2 և E2A Կառուցման Այլընտրանքները անբարենպաստ ազդեցություն կունենան Palmdale-ից Burbank գեղագիտական տեսարանների արտաքին տեսքի որակի վրա: Չնայած նրան, որ E2 և E2A Կառուցման Այլընտրանքները հիմնականում կառուցվելու են ստորգետնյա, ծրագրի ենթակառուցվածքը կհակազդի գետնուղիների մուտքի մոտ որոշ տեսարանների բնական ներդաշնակությանը, ինչպես օրինակ Lake View Terrace-ի և Big Tujunga Wash-ի շրջակայքում:
- **Մշակութային Ռեսուրսներ.** Ինչպես E1 և E1A Կառուցման Այլընտրանքները, E2 և E2A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը զգալի և անխուսափելի տեսանելի ազդեցություններ կներգործի երկու պատմական կառույցների վրա. Blum Ranch և Blum Ranch Farmhouse: E2 և E2A Կառուցման Այլընտրանքների շինարարությունը հնագիտական ռեսուրսները կենթարկի ավելի քիչ քան նշանակալի ազդեցության, և գործարկման ազդեցությունները պատմական կառույցների ռեսուրսների վրա կարող է բերվել ավելի քիչ քան նշանակալի մակարդակի:
- **Շրջանային աճ.** Քանի որ Կառուցման Այլընտրանքները նույնական են երկարությամբ և կօգտագործեն միևնույն Բըրբանքի Օդանավակայանի Կայարանի (Burbank Airport Station) տարածքը, բոլոր 6 Կառուցման Այլընտրանքների շրջանային աճը չի տարբերվի գործարկման ազդեցությունների ներքո: Այնուամենայնիվ, ազդեցությունները թևակալիորեն կտարբերվեն շինարարական աշխատանքներից ելնելով: E2 և E2A Կառուցման Այլընտրանքների շրջանակում կստորգծվի ավելի քիչ շինարարությանը առնչվող աշխատատեղեր/տարի (80,900 և 82,100 համապատասխանաբար, ընդհանուր աշխատատեղ/տարի շինարարության ընթացքում) համեմատած Բարեկաված SR14 և SR14A Կառուցման Այլընտրանքների հետ, որի դեպքում (83,400 և 84,900 համապատասխանաբար, ընդհանուր աշխատատեղ/տարի շինարարության ընթացքում)։
- **Կուտակային Ազդեցություններ.** E2 և E2A Կառուցման Այլընտրանքները էականորեն չեն տարբերվի Բարեկաված SR14, SR14A, E1, և E1A Կառուցման Այլընտրանքներից զգալի կուտակային ազդեցությունների մասնաբաժնի ներդրման առումով: Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածն այլ անցյալ, ներկա և կանխատեսելի ապագա գործողությունների կամ ծրագրերի (կուտակային ծրագրեր) հետ միասին, թվարկված են սույն EIR/EIS փաստաթղթի նախագծի Հավելված 3.19-ում, կհանգեցնեն հետևյալ զգալի կուտակային շինարարության ժամանակահատվածի ազդեցությունների CEQA-ի ներքո. Տրանսպորտ, Օդի որակ (Ընդհանուր համապատասխանություն և շինարարության տեղայնացված ազդեցություններ), Աղմուկ, Հնեաբանական ռեսուրսներ, Մոցիոտնտեսություն և Համայնքներ (բնակչություն և համայնքային ազդեցություններ), Էսթեթիկա և Արտաքին տեսքի Որակ: Ի լրումն, Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը այլ կուտակային ծրագրերի հետ միասին կհանգեցնի կուտակային աղմուկի ազդեցություններին HSR Կառուցման Այլընտրանքի երկարաժամկետ շահագործման ընթացքում:

S.8.3 HSR Կայարանների Համեմատություն

Ինչպես նկարագրված է **Error! Reference source not found.** բաժնում, Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը առաջարկում մեկ կայարանի տեղակայում. Բըրբանքի Օդանավակայանի Կայարան (Burbank Airport Station) հարակից Բըրբանքի Հոլիվուդ Օդանավակայանի հարևանությամբ (Hollywood Burbank Airport) Burbank-ում: Այս կայարանի տեղակայումը նայնական է բոլոր վեց Կառուցման Այլընտրանքների համար: Հետևաբար, կայարանից բխող

ազդեցությունները չեն անդրադառնում Նախընտրելի տարբերակի ընտրության վրա: Այդ կայարանի ազդեցությունները ներառված են Աղյուսակ S-4-ում և Աղյուսակ S-5-ում:

S.8.4 Նախընտրելի տարբերակ

Ղեկավար մարմինը ճանաչել է SR14A Կառուցման Այլընտրանքը որպես Նախընտրելի տարբերակ Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի համար, Բըրբանքի Օդանավակայանի Կայարանով (Burbank Airport Station): Ղեկավար մարմինը ճանաչել է Նախընտրելի տարբերակը հավասարակշռելով ծրագրի անբարենպաստ և նպաստավոր ազդեցությունները մարդկանց և շրջակա միջավայրի վրա: Ղեկավար մարմինը կշռադատել է մի շարք խնդիրներ, այդ թվում բնական ռեսուրսների և համայնքի ազդեցությունները, երթուղու երկայնքով տեղակայված համայնքների ներդրումը, դաշնային և նահանգային գործակալությունների տեսակետները, ծրագրի ծախսերը, կառուցողականությունը, և այլ տարբերակիչներ, որպեսզի հասկանա, թե որն է լավագույն Կառուցման Այլընտրանքը ծրագրի Նպատակներին և Կարիքներին հասնելու համար:

S.8.5 Կապիտալ և գործառնական ծախսեր

Աղյուսակ S-6-ը տրամադրում է ծախսերի նախահաշիվը 2018թ-ի դոլարի հաշվարկով վեց Կառուցման Այլընտրանքներից յուրաքանչյուրի համար: Ծախսերի նախահաշիվը ներառում է ընդհանուր աշխատուժը և նյութերը, որոնք անհրաժեշտ են Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածը կառուցելու համար, ներառյալ կայանները, կոմունալ ծառայությունների տեղափոխությունները, էլեկտրական ենթակառուցվածքները և ենթակայանները, ինչպես նաև ճանապարհային փոփոխությունները, ինչը անհրաժեշտ է մակարդակներով բաժանված ուղեցույցների տեղադրման համար: Ի լրումն, ծախսերի նախահաշվարկը չի ներառում տրանսպորտային միջոցների ձեռք բերումը, քանի որ դրանք Կալիֆորնիայի HSR Համակարգի ծախսերի մասն են, և չեն առնչվում ծրագրի առանձին հատվածի կառուցման հետ:

Աղյուսակ S-6 Ծախսերի նախահաշիվ Palmdale -ից Burbank Արագընթաց Երկաթուղու Այլընտրանքների համար (2018\$ միլիոն)

Ղեկավար մարմնի ծախսերի դասակարգում	Բարելավված SR14 Այլընտրանք	SR14A Այլընտրանք	E1 Այլընտրանք	E1A Այլընտրանք	E2 Այլընտրանք	E2A Այլընտրանք
10 երթուղու կառուցվածք և ուղի	\$12,723	\$13,568	\$13,267	\$13,867	\$13,526	\$14,086
20 կայան, տերմինալ, ինտերմոդալ փոխադրման կայան ^{1,2}	\$556	\$560	\$573	\$532	\$661	\$624
30 Աջակցող կառույցներ, բակեր, խանութներ, վարչական շենքեր ³	Կիրառելի Չէ	Կիրառելի Չէ	Կիրառելի Չէ	Կիրառելի Չէ	Կիրառելի Չէ	Կիրառելի Չէ
40 Շինարարական աշխատանքներ, ճանապարհի օգտագործման իրավունք, հող, առկա բարելավումներ	\$4,946	\$5,472	\$4,459	\$4,607	\$4,074	\$4,139

Ղեկավար մարմնի ծախսերի դասակարգում	Բարելավված SR14 Այլընտրանք	SR14A Այլընտրանք	E1 Այլընտրանք	E1A Այլընտրանք	E2 Այլընտրանք	E2A Այլընտրանք
50 Հաղորդակցություն և ազդանշան	\$175	\$189	\$173	\$182	\$164	\$159
60 Էլեկտրական քարշ	\$249	\$256	\$237	\$238	\$213	\$214
70 Տրանսպորտային միջոց	Համարվում է համակարգային ծախս և ներառված չէ որպես Կառուցման Այլընտրանքների մաս ծրագրի առանձին հատվածի շրջանակում					
80 Մասնագիտական ծառայություններ	\$2,950	\$3,169	\$2,985	\$3,110	\$3,036	\$3,138
90 Չնախատեսված հանգամանքներ ⁴	\$801	\$861	\$803	\$834	\$799	\$824
100 Ֆինանսական ծախսեր	Նախահաշիվը պետք է մշակվի նախքան ծրագրի շինարարությունը:					
Ընդամենը⁵	\$22,400	\$24,075	\$22,497	\$23,370	\$22,473	\$23,184

Աղբյուր՝ Հավելված 6-B, Նախնական ճարտարապետություն Նախագծի Սահմանման Ծախսերի գնահատման հաշվետվության համար:

¹ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը տարածվում է Palmdale քաղաքից Spruce Court-ի հարևանությամբ՝ հյուսիսում Sierra Highway-ից արևմուտք, մինչև Burbank հարավում: Կայարանի ծախսերը համընկնում են: Palmdale կայարանը և Սպասարկման ծառայությունների կառույցը լիարժեքորեն գնահատվել են որպես Bakersfield-ից Palmdale Ծրագրի Հատված, և նաև ներառված են Bakersfield-ից Palmdale Ծրագրի հատվածի ծախսերում: Burbank Կայարանի ծախսերը նույնպես ընդգրկված են Burbank-ից Los Angeles Ծրագրի հատվածի ծախսերում:

² Ճանապարհի փոփոխությունները և դեպի ուղի մուտքը ընդգրկված են կայարանի ծախսերի նախահաշվում: SR14A, E1A, և E2A Կառուցման Այլընտրանքների շրջանակում կպահանջվի զգալիորեն ավելի քիչ ճանապարհային փոփոխություններ, ավելի շատ գետնուղիների առկայության շտրիիվ, և խուսափելով Pearblossom interchange-ից, ինչի արդյունքում կայարանի կառուցման ծախսերը ավելի ցածր կգնահատվեն, համեմատած Բարելավված SR14, E1, և E2 Կառուցման Այլընտրանքների հետ:

³ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի ծախսերի վերաբերյալ տվյալներում ընդգրկված չեն աջակցող կառույցները:

⁴ Ծախսերի բոլոր կատեգորիաները ներառում են չնախատեսված հանգամանքներ: SCC 90 կատեգորիան բաղկացած է միայն չնախատեսված գումարներից:

⁵ Ընդհանուր գումարը կարող է չհամընկնել կլորացման հետևանքով

Authority = Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմին (California High-Speed Rail Authority)

Appendix 6-B, Preliminary Engineering for Project Definition Record Set Capital Cost Estimate Report

Շահագործման և սպասարկման ծախսերը 2015թ-ի ԱՄՆ դոլարի հաշվարկով, բաշխված Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար ցույց է տրված Աղյուսակ S-7-ում և հիմնված է Կալիֆոռնիայի, HSR Համակարգի 1-ին փուլի վրա, ընդհանուր ծախսը մեկ երթուղային մղոնի համար:¹¹ Շահագործման և սպասարկման հետ առնչվող ծախսերը բաշխված են ըստ գնացքի անցած մղոնների¹² գործարկված Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածում:

Ենթակառուցվածքի սպասարկման հետ կապված ծախսերը բաշխված են 40 երթուղի մղոն Փուլ 1-ի ընդհանուր 520 երթուղի մղոն հարաբերակցությամբ: Ծախսերի կանխատեսման համար կիրառվող շահագործման և սպասարկման ծախսերի մոդելի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք հղում անել սույն EIR/EIS փաստաթղթի նախագծի Հավելված 6-A-ին և Հավելված 6-B-ին:

Աղյուսակ S-7 Տարեկան Շահագործման և Սպասարկման Ծախսերը՝ Բաշխված Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար (2015\$ միլիոն)

Շահագործման և սպասարկման գործողություններ	2040 Միջին Երթևեկելիության սցենար	2040 Բարձր Երթևեկելիության սցենար
Գնացքի գործարկում	\$22	\$24
Ուղարկում	\$3	\$3
Սարքավորումների սպասարկում	\$11	\$12
Ենթակառուցվածքի սպասարկում	\$10	\$11
Կայարանի և գնացքի մաքրում	\$6	\$6
Կոմերցիոն ծախսեր և գործառույթներ	\$7	\$8
Ընդհանուր և վարչական	\$4	\$5
Ապահովագրություն	\$4	\$4
Չնախատեսված հանգամանքներ	\$3	\$3
Ընդամենը¹	\$70	\$76

Աղբյուր՝ Հավելված 6-A, Արագընթաց Երկաթուղու Շահագործման և Սպասարկման ծախսերը սույն EIR/EIS փաստաթղթի նախագծի EIR/EIS-ի ծրագրի մակարդակով վերլուծության համար օգտագործելու նպատակով 1 Ընդհանուր գումարը կարող է չհամընկնել կլորացման հետևանքով EIR/EIS = Շրջակա միջավայրի Ազդեցության Հաշվետվություն/Շրջակա Միջավայրի Ազդեցության Հայտարարություն

¹¹ Երթուղու մղոն բնորոշվում է որպես երկու կետերի միջև անցած երթուղու հեռավորությունը:

¹² Գնացքի մղոն դա մեկ գնացքի 1 մղոն անցած ճանապարհն է:

S.9 Հոդված 4(f) և Հոդված 6(f)

S.9.1 Հոդված 4(f)

ԱՄՆ Տրանսպորտի Նախարարության Օրենքի 4(f) Հոդվածի համաձայն (Section 4(f) of the U.S. Department of Transport Act) (կոդավորված 49-ը ԱՄՆ Օրենսգրքի 303 հոդվածի ներքո (U.S.C. 303)), ԱՄՆ Տրանսպորտի Նախարարության գործող վարչակազմը չի կարող հաստատել որևէ նախագիծ, որն օգտագործում է Օրենքի այդ հոդվածի ներքո պաշտպանված սեփականությունը, բացառությամբ այն դեպքերի եթե բացահայտված է նվազագույն ազդեցության գործոնը (finding of *de minimis* impact), կամ եթե չկա այլ խոհեմ կամ իրագործելի այլընտրանք, և ծրագիրը ներառում է ողջ հնարավոր նախագծումը այդ սեփականության վնասումը նվազագույնին հասցնելու համար: Հոդված 4(f)-ի ներքո պաշտպանված սեփականությունը հանդիսանում է հանրությանը պատկանող գրոսայգու հողը, հանգստյան գոտու տարածքը, վայրի բնությունը և ջրային թռչունների ապաստարանը, կամ պատմական տարածքները (հանրային կամ մասնավոր սեփականությամբ)՝ ազգային, նահանգային կամ տեղական նշանակության, ինչպես որոշված է՝ այդ ռեսուրսների նկատմամբ իրավասություն ունեցող դաշնային, նահանգային, շրջանային կամ տեղական մարմինների կողմից:

Բարելավված SR14, SR14A, E1, E1A, E2, և E2A Կառուցման Այլընտրանքները կհանգեցնեն Հոդված 4(f)-ի ռեսուրսների օգտագործմանը: Այնուամենայնիվ, առաջարկվում է նվազագույն ազդեցության գործոնը (findings of a *de minimis*): Կառուցման Այլընտրանքներից ոչ մեկ չի հանգեցնի Հոդված 4(f) –ի ռեսուրսների օգտագործմանը: Աղյուսակ S-8 ամփոփում է Հոդվածի 4(f)-ի ներքո օգտագործման նախնական սահմանումները և կիրառելի լինելու դեպքում ստանդարտ կամ սեփականությանը հատկանշական պայմանները կամ առաջարկված մշակումները յուրաքանչյուր վեց Կառուցման Այլընտրանքների համար:

Աղյուսակ S-8 Հոդված 4(f)-ի Նախնական Օգտագործման Սահմանումների Ամփոփում

Ռեսուրս	Հոդված (Section 4(f))-ի Նախնական Կիրառման Սահմանում ¹					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
Ջրոսայգիների և հանգստյան գոտիների ռեսուրսներ						
Palmdale Hills Trail (Առաջարկվող ընդլայնում)	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Acton Community Trail (Առաջարկվող ընդլայնում)	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Littlerock Trail (Առաջարկվող ընդլայնում)	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Vasquez Loop Trail (Առաջարկվող ընդլայնում)	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Pacific Crest Trail	Չի օգտագործվում	Նվազագույն ազդեցություն	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում

Ուեստըրն	Հողված (Section 4(f))-ի Նախնական Կիրառման Սահմանում ¹					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
San Gabriel Mountains National Monument	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Angeles National Forest	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Rim of the Valley Trail (Առաջարկվող ընդլայնում)	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում
Hansen Dam Open Space Area	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն

Պատմական ռեսուրսներ

Palmdale Ditch	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
East Branch of the California Aqueduct	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Site 19-003890 (Vasquez Rocks Archaeological District)	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն
Blum Ranch	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում
Blum Ranch Farmhouse	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում

Ուեսուրս	Հողված (Section 4(f))-ի Նախնական Կիրառման Սահմանում ¹					
	Բարելավված SR14	SR14A	E1	E1A	E2	E2A
Pink Motel և Café	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Չի օգտագործվում
Eagle և Last Chance Mine Road	Չի օգտագործվում	Չի օգտագործվում	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն	Նվազագույն ազդեցություն

Աղբյուր՝ Ղեկավար Մարմին, 2019a

¹ 4(f) Հողվածի կիրառումը կարող է դիտարկվել որպես մշտական կիրառում,¹³ ժամանակավոր տեղակայում,¹⁴ կամ կառուցողական կիրառում:¹⁵ Նվազագույն ազդեցության գործոնի բացահայտումը առաջարկվում է Հողված 4(f)-ի մի քանի ռեսուրսների նկատմամբ: Հողված 4(f)-ի կիրառումները մանրամասն սահմանված են Գլուխ-4-ում, Հողված 4(f) և 6(f) Գնահատումներ:

Authority = Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմին (California High-Speed Rail Authority)

S.9.2 Հողված 6(f)

Հողված 6(f)-ում նախատեսված սեփականությունները հանդիսանում են հանգստյան գոտիներ, որոնք ֆինանսավորվում են Հողի և Ջրի Պահպանման Հիմնադրամի Ակտի (Land and Water Conservation Fund Act (54 U.S.C. 200305(f)) համաձայն: Զբոսայգիների հողերը, որոնք ձեռք են բերվել Հողի և Ջրի Պահպանման Հիմնադրամի (Land and Water Conservation Fund Act) միջոցներով չեն կարող վերափոխվել այլ նշանկման առանց Ազգային Պարկերի Ծառայության հաստատման, և հաստատումը տրվում է միայն այն դեպքում երբ տրամադրվում է փոխարինող զբոսայգու տարածք «խոհեմ սահմաններում իր օգտակարության և տեղակայման վայրով» համարժեք լինելու պարագայում: Սույն բնապահպանական վերանայման շրջանակում չի դիտարկվում Հողված 6(f)-ի ներքո պաշտպանված որևէ սեփականություն: Հետևաբար, չի լինի Հողված 6(f)-ից բխող որևէ ազդեցություն, որը կառնչվի վեց Կառուցման Այլընտրանքների հետ:

S.10 Բնապահպանական արդարություն

Բնապահպանական արդարությունը կարող է բնորոշվել որպես բոլոր մարդկանց նկատմամբ արդար վերաբերմունք և նշանակալի ներգրավվածություն՝ անկախ ռասայական պատկանելիությունից, գույնից, ազգային ծագումից, և եկամուտից: Առաջարկվող տրանսպորտային նախագծի առումով, դա նշանակում է ներգրավվածություն ամենավաղ փուլից՝ սկսած պլանավորումից և որոշումներ կայացնելուց մինչև շինարարություն և շահագործում: Որոշումներ կայացնելու գործընթացը պետք է գնահատի, կիրառելի սահմաններում և օրենքի համապատասխանության շրջանակում ծրագրերի, քաղաքականությունների և գործողությունների ազդեցությունների հավանական

¹³ Երբ Հողված 4(f)-ով սահմանված սեփականությունը մշտապես ներգրավվում է առաջարկվող տրանսպորտային կառույցի մեջ:

¹⁴ Երբ Հողված 4(f) -ով սահմանված սեփականությունը, ամբողջությամբ կամ մասնակի, պահանջվում է շինարարությանը առնչվող գործողությունների համար, սակայն ամբողջությամբ ներգրավված չէ տրանսպորտային կառույցում:

¹⁵ Երբ տրանսպորտային նախագիծը մշտապես չի ներգրավում պաշտպանված սեփականությունը, սակայն նախագծի սերտ հարևանությունը ենթարկում է սեփականությունը իր ազդեցությունների (օրինակ՝ աղմուկ, թրթռումներ, արտաքին տեսք, մուտքի հնարավորություններ և բնապահպանություն), որոնք մեղմացման միջոցառումների կիրառումից հետո դեռևս այնքան ուժեղ են, որ պաշտպանիչ գործողությունները, առանձնահատկությունները կամ հատկանիշները, որոնք որակավորում են ռեսուրսը որպես պաշտպանության ենթակա Հողված 4(f)-ի շրջանակում՝ զգալիորեն խաթարվում են:

անհավասարաչափորեն բարձր և անբարենպաստ բաշխվածությունը փոքրամասնությունների և/կամ ցածր եկամուտ ունեցող մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա: Անհավասարաչափորեն բարձր և անբարենպաստ ազդեցությունները փոքրամասնությունների և/կամ ցածր եկամուտ ունեցող մարդկանց վրա սովորաբար սահմանվում է որպես ազդեցություն, որը

- Հիմնականում կրելու են փոքրամասնությունները կամ ցածր եկամուտ ունեցող բնակչությունը, կամ
- Ենթարկելու է փոքրամասնություններին կամ ցածր եկամուտ ունեցող բնակչությանը, և որը կլինի զգալիորեն ավելի ծանր կամ ավելի մեծ, քան այն անբարենպաստ ազդեցությունները որոնց կենթարկվեն ոչ ցածր եկամուտ ունեցող, կամ ոչ փոքրամասնություն կազմող բնակչությունը տուժված տարածքում կամ հղված համայնքում:

Հետևյալ օրենքները և կանոնակարգերը կառավարում են բնապահպանական արդարության վերաբերյալ հարցերը՝

- Քաղաքացիական իրավունքների մասին Օրենքի Գլուխ VI (Հանրային Ակտ 88-352) (Title VI of the Civil Rights Act (Public Law 88-352)); Նախագահի Գործադիր Հրաման 12898 (Presidential Executive Order 12898), հայտնի որպես Դաշնային Բնապահպանական Արդարության Քաղաքականություն (Federal Environmental Justice Policy) և Նախագայի Հուշագիր (Presidential Memorandum) ուղեկցում է USEO 12898
- նգլերեն լեզվի սահմանափակ տիրապետմանը անձանց համար խառայությունների հասանելիության բարելավում (Improving Access to Services for Persons with Limited English Proficiency) (Նախագահի Գործադիր Հրաման (Presidential Executive Order 13166))
- ԱՄՆ Տրանսպորտի Նախարարության Հրամանը (U.S. Department of Transport Order 5610.2(a)), որը Բնապահպանական Արդարության Հրամանի բնօրինակի թարմացումն է (Environmental Justice Order)
- Բնապահպանության Որակի Խորհրդի Բնապահպանական Արդարության Ուղեցուցը NEPA (CEQ 199) ներքո (Council on Environmental Quality's Environmental Justice Guidance under NEPA (CEQ 1997))
- Հաշմանդամություն ունեցող Ամերիկացիների մասին Օրենքը (Americans with Disabilities Act (42 U.S.C. 12101 et seq.))
- Տեղափոխության Միանվագ Աջակցության և Անշարժ Գույքի Ծրագիր (Uniform Relocation Assistance և Real Property Program (42 U.S.C. 4601 et seq.))
- Կալիֆորնիայի Կառավարության Օրենսգրքի Հոդված 65040.12(e) (California Government Code Section 65040.12(e))
- Կալիֆորնիայի Գլոբալ Տաքսցման Լուծումների մասին 2006թ. Օրենք (California Global Warming Solutions Act of 2006), Ջերմոցային Գազերի Նվազեցման Հիմնադրամ (Greenhouse Gas Reduction Fund (Assembly Bill32, Chapter 488, Statutes of 2006))

Բնապահպանական արդարության խնդիրների հասցեավորումը ներառում է ընթացակարգային և տեխնիկական նկատառումներ: Ընթացակարգային նկատառումները ենթադրում են, որ անհրաժեշտ է ապահովել, որ փոքրամասնությունների և/կամ ցածր եկամուտ ունեցող բնակչությունը, և այլ ավանդաբար անտեսված բնակչությունը արդյունավետորեն ներգրավվի հանրային ներգրավման գործընթացներում: Ինչպես քննարկվում է ստորև Գլուխ 9-ում, Հանրության և Գործակալությունները Ներգրավվածությունը

վերնագրով, Ղեկավար Մարմինը անցկացնում է իրազեկման հանդիպումներ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի վերաբերյալ 2014թ-ից սկսած: Հավելյալ իրազեկման միջոցառումները, որոնք հատուկ ուղղված են բնապահպանական արդարության համայնքներին մեկնարկել են 2019թ.-ին և շարունակական են (հղում արեք Հավելված 5-A-ին (Appendix 5-A) Բնապահպանական Արդարության Իրազեկման Ծրագրի (Environmental Justice Outreach Plan) ամբողջական տարբերակի համար, այդ թվում ընթացակարգային նկատառումների քննարկումը): Ի լրումն, Ղեկավար Մարմնի Գլուխ VI-ի (Title VI) քաղաքականությունը և ծրագիրը, և Անգլերենի Սահմանափակ Իմացության Քաղաքականությունը (Limited English Proficiency) և ծրագիրը հասցեավորում են Ղեկավար Մարմնի պատրաստակամությունը ոչ խտրականության հանդեպ՝ ռասայական, գույնի, ազգային ծագման, տարիքի, սեռի, կամ հաշմանդամության հիմքով, ինչպես նաև պատրաստակամությունը՝ ապահովելու լեզվական աջակցություն Անգլերեն լեզվի սահմանափակ իմացությամբ անձանց:

Բնապահպանական արդարության բնակչության ներկայությունը ավելի գերիշխող է Լուս Անջելիսի Վարչաշրջանում քան ամբողջ նահանգում միասին վերցրած: Որպես այդպիսին, Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Կառուցման Այլընտրանքների առաջարկվող ուղիները ազդեցություններ կներգործեն բնապահպանական արդարության բնակչության վրա: Չնայած նրան, որ վեց Կառուցման Այլընտրանքները Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար նախագծվել են այնպես, որպեսզի հնարավոր լինի խուսափել ազդեցություններից այդ բնակչության նկատմամբ, այնուամենայնիվ, այս ազդեցություններից ամբողջությամբ խուսափելը անիրական է: Ղեկավար մարմինը նախնականորեն եզրակացրել է, որ Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը կենթարկի փոքրամասնություններին և/կամ ցածր եկամուտ ունեցող բնակչությունը անհավասարաչափ բաշխված բարձր և անբարենպաստ ազդեցությունների սոցիոտնտեսական հարցերի առնչությամբ (բիզնեսների տեղափոխություն և համայնքի համախմբվածություն): Այնուամենայնիվ, Ղեկավար մարմինը նույնպես բացահայտել է, որ Կառուցման Այլընտրանքների երկարաժամկետ շահագործումը բարենպաստ ազդեցություններ կունենա Կալիֆորնիայի բնակչության վրա, այդ թվում փոքրամասնություններին և/կամ ցածր եկամուտ ունեցող բնակչության վրա: Այդ բարենպաստ ազդեցությունները ներառում են վաճառքի հարկերից շահույթի ստացում, շրջանային զբաղվածության աճ, ավելի լավ շրջանային տրանսպորտ, տրանսպորտի անվտանգություն (նոր մակարդակներով բաժանված անցումներ), և շրջանային օդի որակի առավելություններ:

Ղեկավար մարմինը նախնականորեն եզրակացրել է, որ երբ ծրագրի առավելությունները և ազդեցությունները դիտարկվում են որպես ամբողջություն, ապա բոլոր վեց Կառուցման Այլընտրանքները բնապահպանական արդարության բնակչությանը կենթարկեն անհավասարաչափ բաշխված բարձր և անբարենպաստ ազդեցությունների սոցիոտնտեսական հարցերի առնչությամբ (բիզնեսների տեղափոխություն և համայնքի համախմբվածություն): (հղում արեք Գլուխ 5-ին, Բնապահպանական Արդարություն (Chapter 5, Environmental Justice), նշված բնակչության վրա այդ ազդեցությունների հետագա քննարկման համար: Սույն EIR/EIS փաստաթղթի նախագծի շրջանակում բնապահպանական արդարության վերաբերյալ Ղեկավար Մարմնի որոշումը նախնական է և ենթակա է փոփոխման այդ փաստաթղթի շուրջ հանրային քննարկման ժամանակահատվածում և լրացուցիչ համայնքային ներգրավման հանդիպումների ընթացքում ստացված մեկնաբանությունների հիման վրա: Համաձայն ԱՄՆ Տրանսպորտի Նախարարության Հրամանի 5610.2C (U.S. Department of Transport Order 5610.2C), անհավասարաչափ բաշխված բարձր և անբարենպաստ ազդեցությունների բացահայտման դեպքում, գործողություններ կարող են ձեռնարկվել միայն այն դեպքում երբ Ղեկավար մարմինը որոշում է, որ «հետագա մեղմացման միջոցառումները կամ տարբերակները, որոնց շնորհիվ հնարավոր է խուսափել կամ նվազեցնել անհավասարաչափ բաշխված բարձր և անբարենպաստ ազդեցությունները կիրառելի չեն»: Այդ որոշումը կհասցեավորվի Վերջնական EIR/EIS փաստաթղթում:

S.11 Հակասությունների Ոլորտները

Հիմնվելով շրջանակային հանդիպումների և հանրային իրազեկման ջանքերի վրա բնապահպանական վերանայման գործընթացում, ստորև ներկայացված են հակասությունների հայտնի ոլորտները՝

- Ազդեցություններ միջանցքի համայնքների վրա San Fernando Valley-ում (ներառյալ ադմուկը, արտաքին տեսքի ազդեցությունները, համայնքի հատկանշական բնույթի և համախմբվածության կորուստը, արտահերթ իրավունքով օգտագործելու տարածքների ձեռք բերումը) վերգետնյա և բարձրացված ուղիներից (մասնավորապես Բարելավված SR14 Կառուցման Այլընտրանքի հետևանքով)
- Ազդեցություններ Անտառային հողի վրա ANF-ում այդ թվում՝ SGMNM-ում
- Ազդեցություններ ստորերկրյա ջրերի և հիդրոլոգիայի վրա ANF-ում այդ թվում՝ SGMNM-ում
- Սեյսմիկ/երկրաբանական նկատառումներ
- Ադմուկի ազդեցություններ ընտանի կենդանիների և վայրի բնության կենդանիների վրա
- Ազդեցություններ, որոնք անհավասարաչափ առաջանում են բնապահպանական արդարության բնակչության նկատմամբ
- Ազդեցություններ հատուկ կարգավիճակ ունեցող բույսերի և վայրի բնության կենդանիների վրա
- Ազդեցություններ Ունա լճի (Una Lake) վրա

S.12 Բնապահպանական գործընթաց

Ղեկավար մարմինը շրջանառում է սույն EIR/EIS Փաստաթղթի նախագիծը տուժած տեղական իրավասությունների միջև, նահանգային և դաշնային գործակալությունների, ցեղերի, համայնքային կազմակերպությունների, այլ հետաքրքրված խմբերի և անհատների, ինչպես նաև հանրության շրջանում: Փաստաթուղթը նաև հասանելի է Ղեկավար մարմնի գրասենյակներում, հանրային գրադարանների ուսումնական սրահում, և Ղեկավար Մարմնի կայքում: Հետևյալ քննարկումը նախանշում է բնապահպանական գործընթացի հաջորդ քայլերը:

S.12.1 Նախընտրելի Այլընտրանքների Բացահայտում

Հանրության և գործակալությունների մեկնաբանությունները դիտարկելուց հետո, Ղեկավար մարմինը բնորոշեց SR14A Կառուցման Այլընտրանքը (Նկար S-7) որպես իր նախընտրելի Կառուցման տարբերակ 2020թ-ի օգոստոսի 20-ին: Նախընտրելի տարբերակը հանդիսանում է ամենաբարենպաստ Կառուցման Այլընտրանքը՝ հիմնվելով սույն EIR/EIS Փաստաթղթի նախագծում ներկայացված վերլուծության վրա՝ նպատակների և կարիքների, ծրագրի նպատակների, NEPA-ի և CEQA-ի, տեղական և շրջանային հողի օգտագործման ծրագրերի, բնական ռեսուրսների և համայնքի վրա ազդեցությունների, երթուղու երկայնքով համայնքի մասնակցության, ծրագրի ծախսերի և կառուցողականության համատեքստում:

Յուրաքանչյուր վեց Կառուցման Այլընտրանքների ANF-ի և SGMNM-ի հատման հատվածները գնահատվել են սույն EIR/EIS Փաստաթղթի նախագծում: ANF-ի և SGMNM-ի շրջանակում բնական ռեսուրսների նկատմամբ հավանական անբարենպաստ ազդեցությունները, մասնավորապես ստորերկրյա ջրերի վրա հավանական ազդեցությունները նվազագույնին հասցնելը որոշիչ էր՝ Նախընտրելի տարբերակի գնահատման և որոշման համար: Ի լրումն, վեց Կառուցման Այլընտրանքները ներառում են երկար խորը հորված գետնուղիներ ANF-ի,

այդ թվում SGMNM-ի տակ: Կառուցողականության հարցերը, ինչպես օրինակ ապարի որակը և հավանական ազդեցությունները, որոնք առնչվում են հողի սեղմման, ապարների ներքին ճնշման (in-situ stresses), ստորերկրյա ջրերի ճնշումը գետնուղու երեսպատման համակարգի հետ, որոշիչ գործոններ են հանդիսանում Palmdale-ից Burbank Նախագծի Հատվածի Նախընտրելի տարբերակի գնահատման և որոշման համար:

Նախընտրելի տարբերակ նաև ներառում է Ղեկավար Մարմնի գնահատականը ԱՄՆ Տրանսպորտի Նախարարության Օրենքի 4(f) Հոդվածը (Section 4(f) of the Department of Transport Act (U.S.C. Title 49, § 303) (Section 4(f))), որը հատուկ պաշտպանություն է նախատեսում հանրությանը պատկանող հանրային զբոսայգիների, ազգային, նահանգային կամ տեղական կարևորության հանգստյան գոտիների, վայրի բնության և ջրային թռչունների ապատարանների ինչպես նաև ազգային, նահանգային կամ տեղական կարևորության պատմական տարածքների հողերի նկատմամբ: Ինչպես նկարագրվախ է Գլուխ 4-ում (Chapter 4), 4(f) Հոդվածի Նախագծում (Draft Section 4(f)) և Հոդված 6(f)-ում Գնահատականներ (6(f) Evaluations), Հոդված 4(f))-ում (Section 4(f)) սեփականությունները կարող են միայն օգտագործվել դաշնային մակարդակով ֆինանսավորվող տրանսպորտային ծրագրի կողմից, եթե չկա այլ իրագործելի և խոհեմ Կառուցման Այլընտրանք, ինչպես նաև նախաձեռնվում է համապատասխան պլանավորում՝ նվազագույնին հասցնելու 4(f) շրջանակում պաշտպանված սեփականությանը, որը օգտագործվելու ծրագրի կողմից: Հոդված (Section 4(f))-ի համաձայն, Ղեկավար Մարմնի գնահատման վերաբերյալ լարցուցիչ տեղեկատվություն ստանալու համար տե՛ս Գլուխ 4 (Chapter 4),) Հոդվածի Նախագիծ 4(f) (Draft Section 4(f)) և Հոդված 6(f) Գնահատականներ (Section 6(f) Evaluations)։

S.12.2 Հաջորդ քայլերը Բնապահպանական Գործընթացում

Հետևյալ քննարկումը նախանշում է բնապահպանական գործընթացի հաջորդ քայլերը, EIR/EIS փաստաթղթի նախագծի շրջանակում շինարարության և շահագործման վերբերյալ հանրության և գործակալությունների մեկնաբանությունների հիման վրա:

S.12.2.1 Հանրության և Գործակալության Մեկնաբանություններ

Ղեկավար մարմինը շրջանառում է սույն EIR/EIS Փաստաթղթի նախագիծը տուժած տեղական իրավասությունների միջև, նահանգային և դաշնային գործակալությունների, ցեղերի, համայնքային կազմակերպությունների, այլ հետաքրքրված խմբերի և անհատների, ինչպես նաև հանրության շրջանում մեկնաբանությունների ժամանակահատվածի ընթացքում: Մեկնաբանությունների շրջանը կներառի նաև հանրային լսումներ: Հանրային լսումների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Ղեկավար մարմնի կայքում www.hsr.ca.gov: Փաստաթուղթը նաև հասանելի է Ղեկավար մարմնի գրասենյակներում, հանրային գրադարանների ուսումնական սրահում, և Ղեկավար Մարմնի կայքում: Հանրության և գործակալությունների մեկնաբանությունները դիտարկելուց հետո, Ղեկավար մարմինը կպատրաստի Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Վերջնական EIR/EIS փաստաթուղթ, որը կներառի պատասխաններ մեկնաբանություններին:

S.12.2.2 Կալիֆորնիայի Արագընթաց Երկաթուղու Ղեկավար Մարմնի Որոշումների կայացում

Ղեկավար մարմինը կպատրաստի Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի Վերջնական EIR/EIS փաստաթուղթ, որը կներառի սույն EIR/EIS Փաստաթղթի Նախագծի վերբերյալ արված մեկնաբանությունների պատասխանները: Ղեկավար մարմնի Տնօրենների Խորհուրդը կդիտարկի, թե արդյոք հավաստի Վերջնական EIR/EIS Փաստաթուղթը CEQA համապատասխանության համար և հաստատի ծրագիրը CEQA պահանջների համաձայն: Ղեկավար մարմնի Տնօրենների Խորհուրդը նույնպես կդիտարկի, թե արդյոք հաստատի

Որոշման Արձանագրությունը, որով ընտրվում է Նախընտրելի տարբերակը և ուղորդելու այն Գլխավոր Գործադիր Տնօրենին՝ թողարկելու այն որպես վերջնական Որոշման Արձանագրություն (ROD)՝ համաձայն NEPA-ի Փոխըմբռնման Հուշագրի (NEPA Assignment Memorandum of Understanding):¹⁶

Ղեկավար մարմնի կողմից վերջնական EIR/EIS փաստաթղթի հավաստման պահից, այն կարող է հաստատել ծրագիրը և կայացնել CEQA առնչվող որոշումներ (բացահայտումներ, մեղմացնող միջոցառումներ, գերակա նկատառումների հնարավոր հայտարարություններ): Պահանջվող CEQA բացահայտումները պատրաստված յուրաքանչյուր զգալի ազդեցության մասով կլինի ստորև նշվածներից մեկը՝

- Կառուցման Այլընտրանքներում փոփոխությունները պահանջվել են կամ ներառվել են ծրագրում, որոնք խուսափում են կամ զգալիորեն նվազեցնում են նշանակալի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը ինչպես բնորոշված է վերջնական EIR/EIS փաստաթղթում:
- Կառուցման Այլընտրանքներում փոփոխությունները գտնվում են այլ հանրային գործակալության պատասխանատվության և իրավասության ներքո, այլ ոչ բացահայտումը իրականացնող գործակալության: Նման փոփոխությունները ընդունվում են նման այլ գործակալության կողմից, կամ կարող են և պետք է ընդունվեն նման այլ գործակալության կողմից:
- Հատկանշական տնտեսական, իրավական, սոցիալական, տեխնոլոգիական, կամ այլ նկատառումներ, ներառյալ աշխատանքի հնարավորության ապահովում բարձր վերապատրաստում ունեցող աշխատողների համար, անիրագործելի են դարձնում մեղմացնող միջոցառումները կամ Կառուցման Այլընտրանքները բնորոշված վերջնական EIR/EIS փաստաթղթում:

Եթե Ղեկավար մարմինը ընթացք տա ծրագրի հաստատմանը, ապա նա պետք է ներկայացնի Որոշման վերաբերյալ ծանուցում (Notice of Determination (NOD)), որը նկարագրում է ծրագիրը և փաստում է, թե արդյոք ծրագիրը կունենա նշանակալի ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Եթե Ղեկավար մարմինը հաստատում է նախագիծը, որի արդյունքում կառաջանան նշանակալի ազդեցություններ, որոնք բնորոշված են վերջնական EIR/EIS փաստաթղթում, որոնցից հնարավոր չի խուսափել կամ որոնք չեն կարող զգալիորեն նվազեցվել, ապա CEQA-ն կպահանջի Գերակա Նկատառումների Հայտարարության նախապատրաստում, որոնք կներկայացնեն ծրագրին աջակցող հատկանշական պատճառները: Դրանք կարող են ներառել առաջարկվող ծրագրի տնտեսական, իրավական, սոցիալական, տեխնոլոգիական, կամ այլ առավելություններ, որոնք կգերակայեն շրջակա միջավայրի անխուսափելի անբարենպաստ ազդեցություններից: Եթե պատրաստվում է այդպիսի հայտարարություն, ապա դրան պետք է հղում կատարվի Ղեկավար Մարմնի NOD փաստաթղթում:

Որոշման Արձանագրությունում (Record of Decision (ROD)) կնկարագրվի ծրագիրը և դիտարկվող Կառուցման Այլընտրանքները, կնկարագրվի Նախընտրած տարբերակը և կբացահայտվի շրջակա միջավայրի տեսանկյունից նախընտրելի տարբերակը, կկատարվեն բնապահպանական բացահայտումներ և կկայացվեն որոշումներ օդի որակի, FESA, Հոդված 106-ի (Section 106), Հոդված 4(f)-ի (Section 4(f)), և բնապահպանական արդարության համապատասխանության առնչությամբ, ինչպես նաև կբնորոշվեն անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները:

¹⁶ Փոխըմբռնման Հուշագիր Ազգային Բնապահպանական Քաղաքականության Ակտի Հաձնարարականի համար (Memorandum of Understanding National Environmental Policy Act Assignment (FRA to State of California 2019)).

S.12.2.3 Դաշնային Երկաթուղու Վարչության Որոշումների-կայացում

Հետևելով NEPA Փոխըմբռնման Հուշագրին (NEPA Assignment Memorandum of Understanding¹⁷)՝ FRA իրեն պատասխանատվություն է վերապահում որոշակի կրիտիկական գործողությունների իրականացման մասով, ներառյալ որոշումների կայացումը նախագծի մակարդակով Մաքուր Օդի Ակտի համապատասխանության վերաբերյալ և կառավարությունից -կառավարություն ցեղային ֆորմալ խորհրդակցությունների անցկացումը:

Ղեկավար մարմինը ակնկալում է, որ Palmdale-ից Burbank Ծրագրի հատվածի համար շրջակա միջավայրի գործընթացի ավարտից հետո, Ղեկավար Մարմինը՝ հանդես գալով FRA-ի փոխարեն, FRA-ի պատասխանատվությունից բխող հանձնարարության համաձայն, կթողարկի համատեղ Վերջնական EIS և ROD փաստաթղթեր՝ NEPA պահանջներին համապատասխան: ROD փաստաթղթում կնկարագրվի ծրագիրը և դիտարկված Կառուցման Այլընտրանքները, կնկարագրվի Նախընտրած տարբերակը և կբացահայտվի շրջակա միջավայրի տեսանկյունից նախընտրելի տարբերակը, կկատարվեն բնապահպանական բացահայտումներ և կկայացվեն որոշումներ օդի որակի, FESA, Հոդված 106-ի (Section 106), Հոդված 4(f)-ի (Section 4(f)), և բնապահպանական արդարության համապատասխանության առնչությամբ, ինչպես նաև կբնորոշվեն անհրաժեշտ մեղմացնող միջոցառումները: Ոչ մի ծրագրին առնչվող շինարարություն չի կարող մեկնարկել, մինչև Ղեկավար Մարմնի վերջնական որոշման թողարկումը և ROD թողարկման օրվանից 30 օր լրանալը, և անհրաժեշտ դաշնային, նահանգային և տեղական մակարդակով թույլտվությունների ստանալը:

S.12.2.4 Ամերիկայի Միացյալ Նահանգների Բանակի Ինժեներական Կորպուսի Որոշումների կայացում

Ամերիկայի Միացյալ Նահանգների Բանակի Ինժեներական Կորպուսը (USACE) կվերանայի Կառուցման Այլընտրանքները և կբնորոշի Շրջակա Միջավայրի համար Նվազագույն Վնասաբեր Կիրառելի Տարբերակը (Least Environmentally Damaging Practicable Alternative) Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածի համար: Ղեկավար մարմինը նաև թույլտվության համար կդիմի Մաքուր Ջրի մասին Օրենքի Հոդված 404-ի ներքո (Section 404 of the Clean Water Act), քանի որ Կառուցման Այլընտրանքների շրջանակում տեղի են ունենալու արտանետումներ դեպի ԱՄՆ ջրերը: Այդ թույլտվությունը կներառի այնպիսի պայմանների ապահովում՝ որպեսզի հնարավոր լինի խուսափել կամ նվազագույնին հասցնել արտանետումների ազդեցությունները ԱՄՆ ջրերի վրա: Ի լրումն, թույլտվություններ կպահանջվեն Գետերի և Նավահանգիստների մասին Օրենքի Հոդված 14-ի (Section 14 of the Rivers and Harbors Act (33 U.S.C. 408)) համաձայն՝ ջրհեղեղների վերահսկողության կառույցների և գետահովիտների վրա ազդեցությունների համար:

USACE-ը մտադրված է օգտագործել Վերջնական Final EIR/EIS փաստաթուղթը՝ նրանում միավորելու NEPA ընթացակարգային պայմանները և իր թույլտվությունների պատասխանատվությունները (այդ թվում Միացյալ Նահանգների Շրջակա Միջավայրի Պաշտպանության գործակալության ուղեցույցների Հոդված 404(b)(1) (United States Environmental Protection Agency's Section 404(b)(1) Guidelines)) ապահովելու մեկ փաստաթղթով, որը կպարզեցնի և հնարավորություն կտա կայացնել իրազեկված որոշումներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով, EIS-ի ընդունումով, անհրաժեշտ ROD փաստաթղթերի թողարկումով, Հոդված 404-ով նախատեսված թույլտվությունների որոշումներով, Հոդված 408 –ի

¹⁷ Փոխըմբռնման Հուշագիր Ազգային Բնապահպանական Քաղաքականության Ակտի Հանձնարարականի համար (Memorandum of Understanding for the National Environmental Policy Act Assignment) (FRA և State of California 2019)

թույլտվություններով (եթե կիրառելի է), ինչպես նաև կաջակցի USACE –ին վերջնական որոշում կայացնելու Շրջակա Միջավայրի համար Նվազագույն Վնասաբեր Կիրառելի Տարբերակի վերաբերյալ, ինչպես նաև հանրային շահի վերնայման որոշումների վերաբերյալ: Այդ միասնական փաստաթուղթը կարող է օգտագործվել իրականացված դաշնային ջրհեղեղի ռիսկի կառավարման կառույցների, առնչվող գործողությունների և սպասարկման, ինչպես նաև անշարժ գույքի թույլտվությունների և գործիքակազմի (եթե կիրառելի է) փոփոխությունների/վերափոխումների համար:

S.12.2.5 Միացյալ Նահանգների Անտառային Ծառայության Որոշումների կայացում

Ղեկավար մարմինը կդիմի Հատուկ Օգտագործման Լիազորության (Special Use Authorization) համար USFS-ին, ինչը կներառի պայմանների ապահովում, որպեսզի հնարավոր լինի խուսափել կամ նվազագույնին հասցնել ազդեցությունները անտառային հողերի վրա կամ անտառային ռեսուրսների կառավարման վրա, ANF-ի այդ թվում SGMNM-ի շրջանակում: Հատուկ Օգտագործման Լիազորությունը (Special Use Authorization) անհրաժեշտ կլինի, քանի որ HSR գետնուղիները և այլ օբյեկտները կառուցվելու են ANF-ի այդ թվում SGMNM-ի սահմանների շրջանակում:

S.12.2.6 Վերգետնյա Տրանսպորտի Խորհրդի Որոշումների կայացում

Բնապահպանական գործընթացի ավարտով և Ղեկավար Մարմնի կողմից ROD փաստաթղթի թողարկումով, Վերգետնյա Տրանսպորտի խորհուրդը (Surface Transport Board) կթողարկի վերջնական որոշում, այն մասին թե արդյոք պետք է հաստատվի Palmdale-ից Burbank Ծրագրի Հատվածը (վերջնական որոշումը նույնպես հանդես է գալիս որպես Վերգետնյա Տրանսպորտի Խորհուրդի ROD փաստաթուղթ NEPA-ի ներքո): Իր վերջնական որոշումը կայացնելիս Վերգետնյա Տրանսպորտի Խորհուրդը կդիտարկի տրանսպորտի առավելությունները, շրջակա միջավայրի արձանագրությունները, և Վերգետնյա Տրանսպորտի Խորհուրդի Շրջակա Միջավայրի Վերլուծությունների Պատասխանատուի առաջարկությունները Նախընտրելի Տարբերակի և մեղմացնող միջոցառումների վերաբերյալ: Ոչ մի ծրագրին առանչվող շինարարություն չի մեկնարկի մինչև Վերգետնյա Տրանսպորտի Խորհուրդի վերջնական որոշումը չթողարկվի և ուժի մեջ չմտնի:

S.12.2.7 Հողի Կառավարման Գործակալության Որոշումների կայացում

Ղեկավար մարմինը ճանապարհի արտոնյալ օգտագործման իրավունք ստանալու համար կդիմի Հողի Կառավարման Գործակալություն: Օգտագործման իրավունքը վերաբերվում է այս սեփականություններին, որոնց հատում է նախընտրելի Այլընտրանքի ուղին:

S.13 Նախագծի իրականացում

Ղեկավար մարմնի կողմից ROD-ի և NOD-ի փաստաթղթերի թողարկումից հետո, նախքան շինարարությունը, Ղեկավար մարմինը կավարտի վերջնական նախագծումը, ձեռք կբերի թույլտվությունները և սեփական գույքը:

Այս էջը մտադրաբար դատարկ է թողնվել